



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Կ. ԿԱՐԱՊԵՆՑ . . . . .	Ուշացած այբատրոսը
Յ. ԻՐԱՆՈՒԿԵԱՆ . . . . .	Սրագի մը խորհրդապատկերին
Կ. ԳՆՐԵԱՆ . . . . .	Բանկոսպը եւ մամուլի ռսկորմերը
Ա. ԼՐԿԱԹ . . . . .	Եղիշէ Զարեմց
ԿՈՒԱՆԵԱՆ . . . . .	Արա Պալեոգեամ
Ա. ՊԱՒՈՋԵԱՆ . . . . .	Նուագահանդէսը
Գ. ՎԵՐՊԵՐԵԱՆ . . . . .	Լուսանցք
Մ. Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ . . . . .	Մենք երգելով տեսնել ուզեցինք մեր լոյսը...
Ո. ՃԻՒՂԵԱՆ . . . . .	Հոյատակներու գանգաճում
» »	Ապստոսի քաղաք
» »	Ես եւ ես, կամ դուն եւս
» »	Ինձմէ առաջ
Ն. ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ . . . . .	Հողը
Լ. ՄԿՐՏՉԵԱՆ . . . . .	Ալեքսանդր Սոյժեհիցին
Գ. ԱՏԵՓԱՆԵԱՆ . . . . .	Հրաչեայ Անտոնանի հետ
ՊԱՐՈՅՐ ՎԱՐԳԱՊԵՏ . . . . .	Կրկին այս մեծ հայուն հետ
* * * . . . . .	Երկրային մուսաներ
Ս. ԳԱՐՈՆԵԱՆ . . . . .	Մի լուսանկարի հետեւերով
Պ. Ս. . . . .	Քիւզմուղ Կոանեանի «Հայաստանը եւ Հայը»
Յ. ԻՐԱՆՈՒԿԵԱՆ . . . . .	Վահէ-Վահեանի «Յուշարձան Վահրամիս» հատորը
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ . . . . .	Թորոս Թորանեանի «Կարօտի ճամբաներով»ը
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ . . . . .	Յովհաննէս Գրիգորեանի «Մրդեր առանց երաժշտութեան» հատորը
Է. ՍԱՐԱՃԵԱՆ . . . . .	«Կունկը կը կանչէ» Քատերախաղիմ ըմպագրութիւնը

Կողմի նկար՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՐՈՍԵԱՆ

12000

digitised by A.R.A.R.@

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
Մ. Ա. ԱՅԿՈՒՆՅԱՆ ԿՐԹԱԳԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



# Բազմը

## ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒԹՅԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

ՃԷ. ԳՐԻԹ. ԽԻԻ 1 ԳՐԻՆՈՒԹՅՈՒՆ 1974 ՂԷՑԲՈՒԹ

Յ. ԿԱՐԱՊԵՆՑ

### ՈՒՇԱՑԱԾ ԱԼԲԱՏՐՈՍԸ

Սիրվա Գարրինեանը ինչու է հանրակարգից, դարձաւ, ժպտաց եւ ձեռքի մտերմիկ շարժումով ողջըթ մաղթեց մեքենավարին: Վերջինս դիմի հակումով փոխադարձեց ողջոյնը: Հանրակարգը հետացաւ: Հեղձուցիչ աթըր միանգամից պարուրեց Սիրվային: Դիմացում ծովածոցն էր փռուած՝ օդուտուտեան արեւի տակ: Ծոյլ լուսիքին անէնուր: Մի պահ նրան թուաց, թէ օտար երկիր է ընկել: Մանհաթանի ժխտից յետոյ ծովածոցի անդորրը խոզվիչ էր: Հեռուում, գորշ կապոյտի մէջ երևում էին ատաղաստանների կայմերը՝ անշարժ լուցկու փայտիկների պէս: Ծովախորշի դաղջ խոնարհութիւնը թաց վարագոյրի նման կախուէլ էր միջոցում: Ճեմուղին յաղեցած էր ճահճի ու նեխած ձուկի հոտով: Ա՛յս է միթէ այն բուրժուճը, որով արբեում են ծովի սիրահարները, անցաւ նրա մտքով: Սիրվան թաշկինակով սրբեց վզի քրտինքը, աչքերին իջեցրեց դեղին խտրէլ գլխարկի եզրը եւ հանդարտ առաջ քայլեց ծառուղին ի վար: Բաց դեղին էր նաեւ նրա շրջապատը, պարզ ու անփոյթ, որը սակայն վայելում էր նրան, իջնելով մինչեւ մերկ սրունքները: Մտացել էր: Կրկին քրքրեց ուսից կախուած շաղանակազոյն պայուսակը: Մտացել էր արեւի ակնոցները: Ծառուղին կտրուեց ու յանկարծ բացուեց ծոցը՝ եզերուած պարտէզներով ու փոքրիկ սպիտակ տնակներով՝ ծովազնացութեան զանազան դրօշակներով զարդարուած: Բացատում շարժում կար, Քամի: Տօթի ախիւնների հետ շփուել էր նաեւ ծովածոցին յասուկ ճահճուտը: Նոյնիսկ հաճելի էր ծովի բոյբը: Քամին այժմ շոյում էր Սիրվայի թուխ դէմքը, կուրծքը, սրբուազծելով նրա մարմնի սղորկ ձեւերը: Ազատ էր նրա մարմինը, ինքնակշիռ ու մի քիչ անասաւ, սակայն այդ անասաւթեան մէջ ինքոււմ էր մի արտասովոր կանացիութիւն՝ միանգամայն բնական

554-89P

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
Մ. Ա. ԱՅԿՈՒՆՅԱՆ ԿՐԹԱԳԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

164-2000  
A.R.A.R.©

ԳՐԱՐԱՐ

ու առինքնող: Գլխացի բուրբուն ծաղկապարտէզի կենտրոնում, առանձին, կանգնած էր մի սպիտակ շինութիւն՝ ճակատին դրուած Էփեսոսի Մարիամ: Այդ նուաժանոյցը սպասարկում էր Ատլանտեանի պուստիկի նստած Գրէյվզէնդ ծոցի գրօսանաւերին: Սիւլվան չորս կողմը նայեց, ապա շարժուեց դէպի ծոյժ տանող փայտէ բարձրադիր տախտակամածի ուղղութեամբ: Կէսօր էր: Արեւը կախուել էր ջրերի վրայ: Մի քանի գրօսանաւերից խօսակցութեան ձայներ էին լսուում: Մի երիտասարդ աղջիկ ու տղայ, գրեթէ կիսամերկ, ներկում էին իրենց մեքենանաւակի պոչը: Առաջատանաւերն ու գրօսանաւերը խարխակայաններում նստած՝ շարունակ օրօրում էին, համանման ճոխներ արձակելով: Մի քանի նաւաստիներ ձեռքով ողջունեցին Սիւլվանին, որը պատասխանեց նրանց նոյնպէս ձեռքի շարժումով:

Տախտակամածի ծայրում ջուրը գորշ կանաչ էր: Սիւլվան հայտնացրով փնտռեց Ալքատրոս առաջատանաւը: Վե՛րջից արագընթացն է, ժարձիւր ճերմակ, կայմը՝ սեւ, սակ էր Ռէյմոնդը: Սակայն թուր նաւակներն էլ միանման էին: Մոցում, հեռուում, կէտկիտուած սահուած էին մոխրագոյն լառաներ: Սպիտակ մի լողենաւ առաջնում էր Նիւ Եորքի նաւահանգստի ուղղութեամբ, իսկ երեք խոշոր ապրանքանաւեր հեռանում էին դէպի Ատլանտեան՝ մերթ ընդ մերթ բութ, ողբալի սուրճներ արձակելով: Մոցի հանդիպակաց կողմում ցամաքը թեւում, իջնում էր մինչև անգոյն հորիզոնը: Ըստ երեւոյթին, Սթաթըն Ալլընդ կղզին է, մտածեց Սիւլվան ու դարձացաւ, թէ ինչպէս է կղզի, որ ամբողջ կեանքը Նիւ Եորքում ապրելով առիթ չի ունեցել յարաբերելու ծովի հետ: Նա ուզեց կողմնորոշուել, մտովին գտնել իր յարկաբաժինը Կենտրոնական Մանհատանի ստորին ենթածիրում, սակայն անմիջապէս հրաժարուեց այդ դադափարեց՝ փորձելով պատնէշել իր եւ ցամաքի միջև առկայ կապերը: Ներքին յուզումը վանելու համար՝ նա հանեց գլխարկը, յարգարեց սեւաթուր կարճ մազերը եւ ջրի կոհակների մէջ տեսաւ իր աչքերի բազմացումը: Գունատուեց Սիւլվան: Ահռելի մեծութիւն զգաց՝ ինչպէս զնդակահարման սիւնին դամուած գառապարտեալ: Անցել է ցանցալարերի վրայով ու հասել սահման, հասել ազատութեան՝ իր յետին թողնելով աւերակ կամուրջներ: Վերադարձիւր, քանի դեռ ուշ չէ՝ նա կառնեց տախտակամածի մետաղեայ ցանկապատին ու յստակ լսեց իր սրտի զարկերը: Նա յափշտակուել էր ծովով: Ծովը նրան միաժամանակ թէ՛ գիւթանք եւ թէ՛ վախ էր պատճառում: Նա նոյնիսկ համանմանութիւն գտաւ իր եւ ծովի միջև: Արեւը մտել էր ծովի մէջ, վիթխարի հայելի դարձել: Նա այլևս ուշիկ էր տեսնում: Մի բան պիտի բեկանուի, որպէսզի մի այլ բան ստեղծուի: Մի բան պիտի կատարուի, այլապէս իր մէջ հեղուկեղէ կարծրացող անտարբերութիւնը կարող է բթութեան հասնել: Մենակ՝ Նիւ Եորքում: Մենակ՝ բազմամիլիոն մարդկանց մէջ: Տնից գրասենեակ, գրասենեակից տուն: Անծանօթ՝ բիւրաւոր անծանօթների մէջ: Նոյնիսկ անծանօթ իր ամուսնուն ու դստեր: Անարժան ծիւ, որը շորանում է, տրորում անվերջ սալայտանկներ զոփիւններէ տակ: Այնքան պատկանելիութեան պակասը չէ, որքան անկիրք ու ապփակ միապաղպաղութիւնը, որը օրըստօրէ սպանում է իր մէջ յոյսի ու հանձնի մտքն մի շող: Այո՛, մի բան պիտի կատարուի՝ դուքս դալու համար համատարած թմբկից, զէթ մի արկած, հոգ չէ թէ ինչ կը լինի հետեւանքը, միայն թէ՛ վերջ գտնի այս անձեւ ձանձրոյթը, որն իր թանձր թաթերի տակ ճզում է իր հողին, իր ընտանեկան յարկն ու ապրելու տենուղը: Ահ, ապրել, զգալ, խնդալ ու մանկան պէս խայտալ թաւառանջում ու շնչել պահի յաւիտենականութիւնը եւ ամբողջ զգայարաններով ըմբոշիւնել

կեանքը, ազատ, աղա՛տ, ան՛ող, բացարձակ մանուկ, յանձնուել արժեքներին եւ ամէն վայրկեան կանգնել նոր անակնկալների սեմին, մէկ առ մէկ, անվերադարձ...

— Մի՛ւլիս :

Այնտեղ՝ ուր արեւն էր ընկել, հանդարտ առաջանում էր մի առաջատար տանու : Միւլիան կկոցեց այգերը : Տախտակամածից մի քանի քայլ հեռուորութեան վրայ թեթեւ օրորում էր Վլիքատրոսը՝ ճերմակ տեսիլքի պէս :

— Ռէյմոնդ, — ճշաց Միւլիան :

— Քեզ սպասում էի առաջին տախտակաթուծքում, — ասաց Ռէյմոնդը՝ ձեռքի թիակը դէմ տալով տախտակամածի վորին : Նա բարձրահասակ էր, արեւախանձ : Հագած ունէր դունաթափ, բանուորական տարատ ու սպիտակ, անթեւ ներքնաշապիկ : Նրա ձախ թուր անշարժ կախում էր կողին : Ձախ ձեռքը կաշնպատ էր : Սրճագոյն ձեռնոցը ամրացուցած էր դաստակին ձեռադէ օղակով : Երբ նաւակը միացաւ ցամաքին, Ռէյմոնդը աչք Միւլիանին կրկարեց :

— Յատկի՛ր :

Միւլիան պոկուեց տախտակամածից ու ընկաւ նրա դիրկը : Ռէյմոնդը առողջ թեւով օղակեց նրա իրանը, կրծքին սեղմեց : Միւլիան համբուրեց նրա բազուկը : Առաջատանաւը մի անգամ դարձաւ իր շուրջը, ապա՝ զոնկելով իր հունքը, առաջ շարժուեց դէպի բաց ծով : Գիրկընդիտան՝ նրանք երկար կանդնած մնացին նաւակի վրայ : Նաւակը բարի էր, ընտանի, կարծես տէրը իր ուրոյն գոյութեան : Սուր ցուկեր տուած հեղուկ ուռնացող ախքենքին, նա սահում էր անձիգ : Երկու ձեռքնանաւակներ, ըստ երեւոյթին մըրցութեան մասած, խուլ զոյրոցով եկան ու տնցան առաջատանակի մօտից : Հրթիռի նման նրանք փանում էին անջատուել ջրից, սակայն մի քանի ասուիւնից յետոյ կրկին միտքուած էին ախքենքի մէջ :

Միւլիանի ձեռքերը իր առողջ փոսում առած՝ Ռէյմոնդը խօսեց.

— Որքա՞ն պիտի մնա ինձ մօտ :

— Մինչեւ երեկոյ :

— Այդ լաւ է, մինչեւ Աստանեան կը գնանք :

— Բայց դու չգիտես :

— Ի՞նչը չգիտեմ :

— Ես վախենում եմ ծովից :

— Բայց ես քեզ հետ եմ :

— Նորից վախենում եմ :

— Վախենալու ոչ մի հիմք չունես : Ես փորձ նաւավար եմ, իսկ Վլիքատրոսը՝ լաւագոյն նաւը : Քեզ կը օտարեցնեմ նաւավարելու Եղա՞ն :

— Եղաւ, — ասաց Միւլիան՝ ուղղակի նայելով նրա կանաչ-մոխրագոյն այգերին :

Քառասունի մօտ կը լինէր Ռէյմոնդը, սակայն այդ պահին նա պատմեաւ նու արտայայտութիւն էր ասացել : Եէկ մաղկերը իջել էին նրա ճակատին, իսկ աւազադոյնի փոխուած քունքերի վրայ զրտինքի կաթիլներ էին գոյացել : Տառապած, դուստ դիմազօծեր ունէր նա՝ երկու կուռ գծիկներ այտերից իջնելով մինչեւ ամուր կզակը : Նրա մկանուտ վզից ցած՝ ձախ լանջի ներքեւ կար մի խոշոր սպի, որը արեւի խանձումից աւելի էր սեւացել : Միւլիան դիտէր, որ Վիկթորի պատերազմի ժամանակ նա վիրաւորուել էր, սակայն խուսափել էր մանրամասնութիւնները հետապնդելուց, իսկ ինքը՝ Ռէյմոնդը, շատ հազուադէպ էր խօսել իր գիտութեան անցեալի մասին :

- Ես զեզ շատ բաներ պիտի ստեմ, սակայն չգիտեմ ինչպէս ստեմ:
- Նախ սաս, որ ինձ սիրում ես — սասց Սիւլվան:
- Այդ ճէկը դիւրին է, արդէն գիտես:
- Ուզում եմ լսել:
- Շատ լաւ, զեզ սիրում եմ, — սասց Ռէյմոնդը՝ կոյրի պէս շօշափելով նրա դէմքը՝ զի՞ն առ զի՞ն, անշտապ ու գորովալից: Երբ մտաները իջան բերանին, Սիւլվան թէթեւ ցնցուեց, համբուրեց նրա ափը՝ աչքերում ճշուշ:
- Գու գիտե՞ս, որ ազթեկուհու ես նմանում:
- Ոչ, չգիտէի: Ինձ բոլորն ասում են, թէ տիպար հայուհու պէ՞տք ունեմ:
- Գուցէ խոտուրդ ես հայի եւ ազթեկի, — յարեց Ռէյմոնդը՝ փորձելով չափազանցուած լրջութիւն աւելիլ իր դէմքին, — վտա՞՛հ ես, որ հայերը չեն մասնակցել Քուլայի քաղաքակրթութեանը:
- Կարող է պատահած լինել, — նոյնպէս կեղծ լրջութեամբ պատասխանեց Սիւլվան, — հայերը ամէն տեղ մասնակցել են աշխարհի քաղաքակրթութեան զարգացմանը:
- Ու յանկարծ երկուսով ծիծաղեցին: Ռէյմոնդը հակուեց, գրկում առաւ նրա գլուխը եւ համբուրեց բերանը:
- «Այրաւորո՞ւք բուսական ստաջանի էր, զուրս էր եկել իր սեփական ծոցից ու մտել Սաորին Նիւ Եորքի ծոցը՝ իր յետեւ թողնելով Բրուքլինն ու Քոնի Այլլընդը: Հեւուում, ալի վրայ երևում էր վեռազանտ արդիական կամուրջի հորիզոնական, մաքուր զանդուածը: Ձախին՝ բացուել էր ուղիտանուսը: Ջրի վրայ այնքան էլ խորթ չէր ցամաքը: Ռէյմոնդը բարձրացրել էր սոսազասը, որը փռուած հնդկահաւի կերպարանք էր առել: Քամիները հուսաբուն էին ծոփում: Նա վարժ մեղքով դեկավարում էր նաւակի ընթացքը՝ միտմանակ զգալով բերկրանքի թաւալումը իր արեան ճէջ:
- Բախտաւոր ենք, — սասց Ռէյմոնդը:
- Ինչո՞ւ:
- Որովհետեւ մեզ հետ է հիւսիսային քամին:
- Իսկ եթէ հիւսիսայինի փոխարէն հարաւային քամին լինէր...
- Նորից երջանիկ կը լինէինք:
- Ինչո՞ւ, — այս անգամ ակներեւ հետաքրքրութեամբ հետապնդեց Սիւլվան:
- Առաքատասանաւի համար լուսադոյն քամին ալից կամ մախից հոսող քամին է: Եթէ դիմացից կամ թիկունքից հարուածէր, ապա պարտաւորուած կը լինէինք զիկ-զակ թեքումներով տառաջանալ:
- Ես այդ չգիտէի, — սասց Սիւլվան՝ գլուխը յենած ցուռիկ եզրին: Նրա պարանոցը արտասովոր երկարել էր: Քամին խառնել էր նրա մազերը: Նրա մարմնից անմիջականութիւնը տարածում էր իր լրջապատի վրայ: Նոյնիսկ նիւթեղէն առարկաներն ու մեկերը ենթարկուած էին նրա ներկայութեան ազդեցութեան: Այդ կենդանական տառջ ներկայութեանը ենթակայ էր Ռէյմոնդը: Սիւլվանի հետ նա երիտասարդանում էր:
- Հերթը քոնն է, — յայտարարեց Ռէյմոնդը, — «Այրաւորո՞ւք վրայ ամէն ոք աշխատում է: Ահա դեկը:
- Ե՞ս, — յանկարծակիի եկած ճշաց Սիւլվան:
- Շատ դիւրին է, զեզ կը սովորեցնեմ:
- Բայց ծովը ալեծուփ է, մի ուրիշ անգամ:

— Մի ուրիշ անգամը հենց հիմա է, — ասաց Ռէյմոնդը՝ իր սեղը դի-  
ջելով նրան։

Միլիան տեղաւորուեց կաշուեծածկ նստարանի վրայ՝ դէմքը համակ  
կենտրոնացում։ Նա ամուր կառչել էր դեկին, երբ դռնը հպումն անգամ բա-  
ւական էր ցանկացած ուղղութիւնը տալու նախն։ Ռէյմոնդը իր թեւը նրա  
մէջքին կանթած՝ բացատրում էր նաւարկութեան մի քանի տարրական օ-  
րէնքները։ Նրա ձեռքի ծանրութիւնը ապահովութիւն էր։ Վնասարտաքը զը-  
լուին առած դիւրութեամբ սահում էր առայ։ Թիկունքում, շրեթից այն կողմ  
երևում էր Մանհաթանի գոբը համակառոյցը։ Առաջատանաւորն ու դը-  
սանաւականները այլևս թղթէ կարապնիւրի պէս լողում էին ծոցում։ Դիմա-  
ցում՝ Ատլանտեանը բացել էր իր գոգը։ Միլիան կտրուել էր անցեալից։ Ա-  
մէն ինչ խոտացել էր ներկայի մէջ։ Ղեկը դարձել էր մտասեւեռում՝ միակ  
տրամաբանական բանն աշխարհում։ Նա մի քանի անգամ դարձաւ, Ռէյմոն-  
դին նայեց, կարծես ստուգելու նրա ինքնութիւնը։ Ուրախ էր, որ մենակ չէ։  
Եւ որքան դիւրին էր նաւավարելը։ Մտերմացել էր տարերքի հետ։ Մովը իր  
քոյրն էր։ Երբեմն նաւը մաղցում էր ալիքների բուշերի վրայ, փորձում կախ-  
ւել միջոցում։ Իր ծոծրակի վրայ Միլիան զգում էր Ռէյմոնդի շունչը։ Մովը  
մօր արգանդի պէս ապահով էր։

Ռէյմոնդի հայեացքը կտրուեց դեկից, մի պտհ կարաւ հետաւոր, համբ  
ծփանքում, ապա եկաւ ու կանգնեց Միլիայի կիսադէմի վրայ։ Վաւում էր  
նրա դէմքը։ Երջազգեստի դեղինը արտապրուել էր նրա համալսի գծերի  
վրայ, դարձել ցորին։ Մաղերի մի խուրճ խուժել էր զէպի նրա այտը։ Յցուն  
այտուկներն ասիկ մշտական շուք կար։ Ետեքի ստիկ գրեթէ մանշակագոյն  
էր նրա բերանը՝ կիսաբաց ու հաղորդակից։ Միլիան յանկարծ դարձաւ, ար-  
տազ ժպտաց ու անմիջապէս վերադարձաւ ծովին։ Մանուկ լինէր կարծես  
հասուն կնոջ մարմնի մէջ։ Ռէյմոնդը հպանցիկ համարեց նրա գլուխը։

— Մէկ ձեռքը բաւական է։ Միւսը ինձ տուր, — ասաց Ռէյմոնդը։

— Գոհ ե՞ս աշակերտիցդ։

— Ուղղակի վարպետ։

— Մագրում ես։

— Ճշմարիտ եմ։

Ռէյմոնդի կեանքը միանգամից լեցուել էր։ Նա երջանիկ էր ու զգոյշ։  
Վախենում էր շողերի առատութիւնից։ Վիեթնամից վերադառնալուց յետոյ,  
շատ բան էր փոխուել։ Ռումբը մ'չ միայն քանդել էր նրա մտքը, այլև խոր-  
տակել նրա հաւատարակչութիւնը՝ նրա առջեւ բացելով անորոշ խորհորա-  
տը։ Պէշկուեից Տոկիօ, ապա Աննապոլիս ու Նիւ Եորք, հիւանդանոցից հի-  
ւանդանոց, կիսահաշմանդամ ու մենակ։ Վիրաբուժական վեց գործողութիւն-  
ներից յետոյ, նա հաշտուել էր իրականութեան հետ։ Սակայն այն ինչ հնա-  
բուր էր եղել փրկել վիրաբուժական սեղանի վրայ, անհար էր եղել բու-  
ժել կեանքում, Դեռ ազգամեակատու եղած ժամանակ, լինողան՝ իր կիներ  
լքել էր, գլուխն առել ու կորել։ Ամերիկան փոխուել էր։ Վերջ էր գտել Վիեթն-  
ամի պատերազմը։ Եստ զինակիցներ չէին վերադարձել։ Ամէն օր այլ տագ-  
նապնեք էին ստեղծում։ Մարդիկ այլ մտահոգութիւններով էին ծանրա-  
բեռնուած։ Ինքը չէր պատկանում, օտար էր իր սեփական երկրում, օտար՝  
իր շրջապատի հետ, իր հետ։

— Ամուսինդ գիտէ՞, — հարցրեց Ռէյմոնդը, երբ նրանց միջեւ գոյա-  
ցած լուսթիւնը այլևս անասնիկ էր դարձել։ Միլիան շակուեց, սակայն աս-  
լանց հայեացքը ծովից հեռացնելու պատասխանեց։

- Այո, դիտէ՛ :
- Սակայն ինչպէ՞ս է կարողանում հանդուրժել :
- Որովհետեւ խորապէս է սիրում :
- Իսկ դու, իսկ դու Սիլվա, սիրո՞ւմ ես ամուսնուդ :
- Սիլվան թողեց դեկր, դարձաւ Ռէյմոնդին եւ հանդարտ պատասխանեց.
- Այո՛ :

— Ես քեզ չեմ հասկանում : Հապա ինչո՞ւ այս ժամադրութիւնը, ինչո՞ւ այս կապը, երբ իրականում դու Վառէին ես պատկանում :

— Որովհետեւ Վառէն խեղդում է ինձ : Ժամանակին նա երազներ ունէր, պատրաստ էր լինէր ճեղքելու եւ անկարելիին հասնելու, իսկ այսօր, դեռ իր կեանքի միջօրէին չհասած՝ տանու է տուել եւ կղղկացել իր սահմանների մէջ : Այդ սահմաններն են, որ սպանում են ինձ :

— Ի՞նչ սահմանների մասին է խօսքդ — խանդի՞, բռնափրութեան՞...

— Ո՛ր : Իր սկարութիւնների դիտակցութեան : Վառէն հասել է մի կէտի, երբ այլևս բուարարում է եղածով եւ ընդունում ըթթապատի ու հասարակյութեան պարտադրանքները : Այդ՝ հրատարումն է, այդ լնացումը, որ հետզհետէ թունաւորել է մեր ամուսնութիւնը : Կարողանո՞ւմ եմ պարզել մտքերս :

— Բայց մի՞թէ ամէն ամուսնութիւն նոյն վախճանին չի յանդում, — ասաց Ռէյմոնդը՝ մի ծխադրանիկ վառելով, — բոլորս էլ աշխատում ենք մի իմաստ դռնել կեանքում, երբ ակամայ դերին ենք դառնում մեր իսկ սովորութիւնների եւ մի օր էլ հաշուում իրականութեան հետ : Մի՞թէ նոյնը չպատահեց ինձ հետ :

Սիլվան ուղղակի նայեց նրա դէմքին, որն այդ պահին չպատասխանւած հարցերի մի խնդուած քարտէս լինէր կարծես :

— Բայց դու մաքառում ես, Ռէյ, դու ազատ ես :

— Եւ անպատասխանատու :

— Սակայն ազատ՝ չոր որոշումների մէջ : Վառէն այլևս ինձ չի պատկանում, այլ՝ հասարակութեան : Համայնքն է որոշում նրա ամէն մի քայլը, իսկ այդ ինձ համար համազօր է գերութեան :

— Գու չգիտես, Սիլվա :

— Ի՞նչը :

— Նահանջը անխուսափելի է : Նա նստել է քառուղու անկիւնում եւ մեզ է սպասում : Ամէն օր մի քայլ նահանջում ենք : Թերեւս չոր ամուսինը անելի իմաստուն է : Մի՞թէ վերջին հաշուով Նիւ Եորքը խամրած երազների մի վիթխարի վկայ չէ : Ահա թէ ինչու ես բռնել եմ փախուստի ճամբան :

— Ես փախուստ չէի առի, այլ՝ արդարաբարութիւն :

— Միեւնոյնն է :

— Նոյնը չէ, Ռէյմոնդ, դու կացութեան ակերս ես, գիտես ինչ ես ուզում, ուր ես դնում, մինչ իմ կեանքը Վառէի հետ դատապարտուած է տեղքայի :

— Ես յափշտակում եմ ա՛յն՝ ինչ կեանքը զլանում է ինձ : Այդպիսին չէի, բայց պատերազմը սովորեցուց : Այս է միակ ճշմարտութիւնը :

— Ես սիրում եմ այդ ճշմարտութիւնը :

— Թէկուդ եւ դաժան :

— Թէկուդ եւ դաժան : Գոնէ իմ հանդէպ անկեղծ կը լինեմ :

— Բայց դու չգիտես ինձ, Սիլվա :

— Ա՛յն՝ ինչ գիտեմ բաւական է ինձ : Աւելին չեմ ուզում գիտենալ :



«Աւրատրոս»ը հանդարտել էր, կարծես անչարժ լինէր: Ծովն էր, որ հոսում էր: Ծովածոցի ու ուղիղանոսի միջև ընկած ներքին ալիքները յետ էին մնացել: Առադաստանաւը հանդիսաւոր լուծիւն էր պահպանում: Ռէյ-մոնդը բարձրացաւ, ճկուն շարժումներով քակեց մեծ առողաստը, վայր ի-ջեցրեց, փոխարէն պարզեց փոքր առադաստը, պարանը կայմին կապեց եւ փոքրիկ սառնարանից հանեց խորտիկներէ ու զովացուցիչներէ կապեցը:

- Ո՛չ միայն բանիւ, այլեւ՝ հացիւ:
- Իրօք որ անօթի եմ, — ասաց Միլվան:
- Հիմա, երբ վարժ նաւապետ ես, կարող ես թողնել ղեկը:
- Բայց նաւակը...

—«Աւրատրոս»ը իր ճամբան գիտէ, — ասաց Ռէյմոնդը, — այսուհե-տեւ նաւակը իր ճամբով, մենք՝ մեր ճամբով:

Երբ սեզանիկի առջեւ նստել էին միմեանց գէժ, Միլվան ակամայ չո-յեց Ռէյմոնդի վիզը, ապա՝ սււր, կուրծքն ու առողջ բազուկը՝ իր ափը վան-դակելով նրա ափում: Նրա աչքերում նստել էր մի գաղջ խոնաւութիւն, ու-րից մայրութիւն էր հոսում: Նա աջպէ՛ս սիրում էր, այնպէ՛ս ցանկանում էր գշտուել, խնամել ու սիրփել այդ բեկուած մարդու մարմինն ու հոգին: Բոլոր կանայք, առանց տարիքի խտրութեան, սիրուհի-մայրեր են, անցաւ Միլվայի մտքով, բոլոր կանայք սիրուհիներ են եւ բոլոր սիրուհիները՝ մայ-րեր: Ամենայնայն պոռնիկի մօտ անգամ անպոռնիկ պահերին մայրութիւնն է խօսում, Իսկ ի՞ր մայրութիւնը: Ինչո՞ւ Վահէն զլանում է այդ պարզեւր ի-րեն, Վահէն, որ իրեն մայր է դարձրել, որ բաժանել է իր անկողինը եւ սի-րել, իր սիրապետութիւնն ու աննահան քմայքը, մարդկային այդ ամբողջը, որը իր ցեղային հպարտութեամբ խեղզում է իրեն, իր շրջապատը, այդ ան-տանելի արամութիւնն ու ինքնապատահութիւնը, անհասական բանտը եւ հա-սարակական կարծիքի շղթան, Վահէն, իր ամուսինը, իր սիրելին, իր թըշ-նամին, նա երբեք չընդունեց պարզեւր, չուզեց ստանալ, չհանդուրժեց կա-րեկցութիւն, երբ ինքը միշտ այնտեղ էր, պտտաւտա ամէն զոհողութեան, ինչո՞ւ իր սիրով խեղզեց իր սէրը, եղաւ հարկատու, երբ իր ամբողջ հու-թիւնը մայրութիւն էր ճշում, զու՞թ ու գլուխնք, եւ ի՞նչ պիտի անեմ աստ-ւածներին, երբ իմ միակ բաղձանքը մի կաթիլ մարդկայնութիւն է, փերուն, անկատար մարդը...

Մինչեւ վաղ երեկոյ, նրանք մնացին ծովում, գրեթէ մի կէտի վրայ: Միլվայի համար ծովային յարաւարժ երթեւեկը այլեւ կորցրել էր իր մի քանի ժամ առաջուայ հետաքրքրութիւնը: Երեւոյթները փոփոխուած էին կար-ծես նախամտածուած ծրագրով: Արեւը զնայել, կախուել էր Մանհաթանի գլխին: Մոխրագոյն պահականները դործնական հովեր առած տեղադրեց շափում էին ծովածոցի լայնքն ու երկայնքը՝ մերթ ընդ մերթ գել ազա-նւաններ արձակելով: Միլվան ամբողջ հասակով երկարել էր Ռէյմոնդի գըր-կում՝ հայեացքը երկնքին: Նա այլեւ վարժուել էր ծովի բոյբին: Ռէյմոնդի դէրկը եւս ծով էր բուրում: Նա այլ թելով գրկել էր կնոջ իրանը, ափը՝ կրծ-քին: Նրանց մարմինները հաշտուել էին: Նրանց մտերի մերձեցումից չքացել էր խորթութեան սառչոյրը: Նրանց լուսն անգամ համաչափ էր: Նրանք շա-էր րանակ նիւթից նիւթ էին ցատկում, այնքան բան կար ասելիք: Ռէյմոնդի թաւ, կրծքային մայրը գաղջ ալիքի պէտ ողողել էր նրան: Աչքերը խուփ՝ Միլվան ուզում էր յղանալ, մայրութեամբ լեցնել աշխարհը: Նա ուզում էր բացել գիրկը, կլանել արեւն ու տիեզերքը եւ սպառուել ու վերանորոգուել:

ախբան, մինչև որ ի սպաս անհետար՝ գառնալով մի կտոր ամպ, մի կաթիլ ջուր, մի ափ հող :

— Երանի այս պահը յաւերժանար, — մրմնջաց Սիւլվան, — երանի չլինէր վերագարձ, չլինէր սպասում, չլինէր, ինչպէ՞ս տեսն, չլինէր պատահանասունութիւն, չլինէր Վերաարտան ու մենք, մեայինք սոսկ ճամբորդներ...

— Ճամբորդներ :

— Այո :

— Մինչև ո՞ր կ'ուզէիր նաւարկել, Սիւլվա :

— Մինչև աշխարհի ծայրը :

— Յետո՞յ :

— Յետո՞յ : Նոր աշխարհներ, նոր կղզիներ, նոր ծովեր :

— Ամէն տեղ էլ նոյնն է, — ասաց Ռէյմոնդը, մի դաշտիկ վառեց ու շարունակեց, — ես շտա եմ թափառել — Սերոպա, Հեռաւար Ասիա, Հիւսիսային Աֆրիկա — ամէն տեղ մարդիկ նոյնն են, ամէն ոք պայքարում է ապրուստի եւ մի կտոր երջանկութեան համար : Քեզ հասկանում եմ, Սիւլվա, սակայն իրականութիւնից խուսափում չկայ : Ապրելու համար պէտք է ուղղակի նայել կեանքի բերքին :

— Ահ-հա՛, դու նորից անցար քարոզութեան, — բարի շարութեամբ վրայ տուց Սիւլվան, դիրքը փոխեց՝ թեւերը արածելով արագաստանաւի եղբին : Նրան զրաւում էր Ռէյմոնդի չոր, դրեթէ անանձնական արամարանութիւնը : Որքան ծոռնում էր նրան, նա նորից մնում էր անկախ, անտուկ :

— Ես դերադասում եմ ներկան, կաթիլ աւ կաթիլ : Ինձ համար այս պահը, ինչպէս դու բնութագրեցիր, յաւերժական է : Ես ըմբռնչեմ եմ քո ներկայութիւնը, ծովը, ոգոտոտեան այս ժամը, սակայն միտածամանակ գիտեմ, որ անցեալը անվերադարձ է, որ մի քանի ժամից մենք պիտի վերադառնանք մեր ուրոյն կեանքին :

— Սակայն ես անդադար ճարել եմ ուզում, — թախանձեց Սիւլվան :

— Ինչպէս թափառական Վերաարտան...

— Այո՛, ինչպէս թափառական Վերաարտան :

— Բայց արդեօք դու գիտե՞ս, Սիւլվա, որ ձկնկուլը երկար թափառումներից յետոյ ի վերջոյ վերադառնում է իր բոյնը, եթէ ի հարկէ մինչ այդ զո՛ւ չի դնում նաւաստիների քահանայքին :

— Բայց չէ՞ որ Վերաարտան սպանողը չարիքի է մատնում :

— Այդուհանդերձ, մարդիկ սպանում են Վերաարտանին :

— Բայց զոնէ մինչև մահ նա ըմբռնում է երկնքի կապոյտն ու ծովերի փրփուրը :

Նրանք այնչա չխոսեցին : Երկրոն դադարադողի իջել էր ծոցի վրայ : Հեռում, ատառակիւական ժանհակի պէս վառում էին ծովեզերեայ վաղաժամ լոյսերը : Սիւլվային թուաց, թէ սպիտակ, գիթխարի թեւերի թափահարում լսեց : Յետ դարձաւ : Մովը մնացել էր հեռուներում : Ատլանտեանը խառնուել էր երկնքին : Անպատեառ ուշացած շարաարտան էր, աշխատեց իրեն համոզել Սիւլվան, երամից անջատուած մի մենուոր, որը պատահամբ ընկել է խորթ ջրեր : Նա չկարողացաւ զուպել ներքին կարօտը, դուրին արաւ ծուկներէ մէջ եւ լուռ արտասուեց :

ՅԱՆՈՒՅ ԿԱՐԱՊԵՆՑ

Յ. Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն

**ԵՐԱՋԻ ՄԸ ԽՈՐՀՐԴԱՊԱՏԿԵՐԻՆ**

Մտածումը քեւեռացման կէտն է  
կորսուած հաշուեյարդարներու  
եւ դիմադրչումը՝ տանքանկներու զիտակցութեան :

Ո՛ւր փնտռել այդեօք  
կորսուած հասցէն մնայուն արժանիքներու  
եւ մտոցուած վկայութիւնը՝  
երազի մը վերանուանման :

Ապրումներու ճնշո՞ղ երդեհներուն մէջ,  
քէ յուշերու ճնշող քաղցրութեան  
ուր շարժառիթներ կը միանալուին  
ճմահան վագֆին իրագործումներու :

Կըսես — «Քեզ պիտի ճանչնամ  
խորերու կարապաճայն երգերուն մէջ,  
ցոյններու սողարքահոտ ջրհեղեղին :  
Քեզ պիտի ճանչնամ  
երեղէն ստեղծայններու մէջ,  
որ կը բարձրանան պատուիրակներու սանդուխներէն :  
Հօն՝ ուր մաշած արբանթներ կը յայտնակերպեն  
առատակի մը ծնունդը անպատելիք :

Անուարտ պանր քեզ կը լծորդէ  
ձեւափոխման արարի մը անվախեան :

Կ'արմնես շառաւիղը ինքնութեանդ՝  
պատճառաբանութեան բազմապատկուող  
հայելիներուն մէջ :

Կը նայի՛ք կեանքի՛ն՝

Տառապանքը եւ Դուռն,  
երկու անձամբ մեկով՝ ներկայացուած  
գրասիւղի թարգ խնդիրի մը պէս :

Կ'անշխանայ խորհրդանիշը՝ երազիդ՝

իր երազէն անտարաշխ :

Մտածումը եմքահողմ է

անձանք տխուր ինքներու :

Ընդհատուած եղանակի մը մէջ

կը վերագտնես վերջին առիթը սպասումիդ,  
աւր սէրը անձեռնմխելի գումարն է  
վազուան խռովներուդ .  
պատահականութիւնը՝  
սուրհանգակը ճակատագրի :

Անատրտ համբոյրը մակարդուած թախիձն է

երազուած յոյսին :

Մեռած ողջկան մը խորհրդապատկերին դէմ

հին մտերմութեան տարրերը կազմալոյծ՝  
կը հանգիստդեն նախատոնակը  
սաղմնաւորումի մը պտղաբեր :

Մրափող երազը կը պահէ իր մէջ

անկումներու մզճաւանքը ալիկոծ :

Ստուերացող պահը խորհրդապատկերն է

ննջող ձայներու :

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Կ. Զ Ա Ր Ե Ա Ն

ԲԱՆԿՈՕՊԸ ԵՒ ՄԱՄՈՒԹԻ ՈՍԿՈՐՆԵՐԸ

Իր գիտնականը եւ մամուլի օսկորնեցը խորագրուած երկա-  
բուրուէ լսուէն մէջ, Կոստան Զարեան՝ ի դէմ բանաստեղծ Ա-  
ւետիս Զարչաբանի, տիպարի վերածած է Նշիչէ Զարեանը, կազ-  
մելով սենն ու Լոյսերանութիւնը տնօր գրական կենտրոն կարգ մը  
գիծերուն, հուսակցականութեան, Փարիզի առանց սոցիալիստիան,  
Երեւան վերագործին եւ Արսիւան զողոյցին վրայ ազլիայ մը դէմ  
փորձած արհեստակցին արկածախնդրութեան կատարած էրա-  
զարձութեանց մէջ:

Զարեան անմտազէս կը ճանչնար Զարեանը եւ Զարեանի ան-  
հասական ու հուսակցական վաղ շրջանի վերելագրումները, ինչ-  
պէս նաեւ տնօր Լոյսին ստիւտիւտայ ըրած լուսայ քաղաքի այլու-  
զան ու անբողոքատելի նուաճումները, սրանց հրատարակչուն տակ  
ուշուցուցած է Զարչաբանի մէջվարչային բարբերն ու ստա-  
ցական անհիթլիստիկները, բայց պահած է իր իր համարու-  
մք տնօր բնատուր ապրանքին ու սուղանդի արդիւնք սրբերգական  
գլխապաշտաններուն հանդէպ:

Սուրբան անկիւնադարձ մը ելաւ Զարեանի կենտրին մէջ եւ  
Զարեանին արտադրած մէք հասունաները կը դասկերացնեն այդ  
կարեւոր շանդոյցին վրայ սուրբան երկաստորդ բանաստեղծին բարդ  
հակասութիւնները:

ՎԱՆԱՆ ԻՐԵՐԵԱՆԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՑ

Այս ամսի սկիզբը Հեռագիր — «Գա-  
լիս եմ: Խնդրում եմ համոզիպել Վիսնի  
կայարանում: Ժամը չարսին: Զարչաբ-  
անն»:

Ժամը չարսին Իտալիայից եկող զը-  
նացրից, ահապին դեղին մի պայտուսակ  
ձեռքին բռնած, իջել էր փոքրահասակ  
տղու մարմնով եւ ստորիքը անորոշ ծե-  
րունու դէմքով Հայաստանցի եւ կատա-  
ղորէն համայնավար Զարչաբանին: Կանգ  
էր առել Լօրը կորցրած, կէս ուղտար, կէս  
հորթ, փոքրիկ, վախեցած աչքերը դէս  
ու դէն ման անելով փնտտում էր ինձ:

Հետաքրքրութեան համար կանգնել  
էի սիւնի ետեւ, որպէսզի ինձ շտեմելի, եւ  
պատում էի, թէ ի՞նչ պիտի անի:

Կանանչին տուող ստաբատ, երկայն  
մոխրագոյն վերարկու եւ այլանդակորէն  
փոքրիկ մի գլխարկ: Պայտուսակը ձեռքին  
կանգ էր առել եւ շուարած չդիտէր, թէ  
ի՞ր քայլերը ո՞ր կողմը ուղղի: Երկար  
ժամանակ նայեց վեր-վար, պայտուսակը  
գրաւ դեպին, գլխարկը հանեց եւ ճակա-  
տի քրտինքը սրբեց: Աչքերը այնքան  
վախով լեցուած, որ այլևս որոշեցի մօ-  
տենալ նրան:

— Այո, ո՛ւր ես, անաչն, — ար-  
տասանեց նա կմկմալով եւ միեւնոյն  
ժամանակ խորամանկորէն աչքերին մէջ  
պրպտելով՝ Հասկանալու համար դէպի  
նրան տածած զգացումներու:

— Եկար Հա՞, վերջապէս դու էլ ե-  
կար էս մեր փաստ Եւրոպան անտեղու...

— Դէ, դեմ'նք, դեմ'նք, շի՛նի թէ  
առանց օթաղի մնանք...



Ն. ՉՈՒՆՅԱՆ, 1923-ին, ՓՈՒՐՆՔ

— Օթաղ չա՛ս... Խ՛նչ է, կարծում ես Փարիզը Երևանն է...  
 — Ձե՛, բայց ո՞վ ա իմանում. էսքան մարդ, էսքան մարդ...  
 Մտանք թաքի:  
 — Ճամբին մի խօսք չկարողացայ տանել... լեզու չեն հասկանում...  
 — Եթէ Փրանսերէն չես խօսում, ինչպէ՞ս ես ուզում, որ քեզ հասկանան:  
 Բանաստեղծ Չարչարեանը յանկարծակի շարժումով քաշում է թաքսի անկիւնը, փայլփրող փոքրիկ աչքերը յառում վրաս եւ ուրախ շնչոով եւ խորին համոզումով ասում.  
 — Դէ, չենց դա՛ է էլի... Երևան կայի՛ր, Բերլինում հասկանում են...  
 — Ի՞նչ են հասկանում:  
 — Հասկանում են. Հայերէն...  
 — Կասակ ես անում:  
 — Քու ա՛րեւ:  
 — Է-է-է...  
 — Ի՞նչ ես... Չլինի՞ թէ արանց կողմն ես պաշտպանում:  
 — Կ'ապրես՝ կը տեսնես:  
 Սէն Միշլինի մօտակայ փողոցներից մէկում հիւրանոց, Չարչարեանը փոքրիկ, ծաղրանկարի նման զուարճալի, աչքերը պլլած եւ թերանք կէտ քաց՝ չորս կողմն է նայում եւ աշխատում հանդիսուոր դիրք բռնել:  
 Առաջարկուած սենեակը երկար նա-

— Ուղում ես՝ հաւատա՛, ուղում ես՝ մի՛ հաւատա: Գնում էի արճարան կամ հաշարան, ասում էի հաց եւ հաց էին բերում, ասում էի սու՛ւրճ, եւ սուրճ էին բերում... Ե՛ս էլ նախ դարձուցայ, բայց յետոյ տեսայ, որ ա՛ղա իսկապէս հասկանում են...  
 — Կարելի է մատով ցոյց էին տալիս:  
 Բայց նա աւելի համոզուած քան երբեք ողեւորուած եւ անկեղծ.  
 — Ոչ մատով եւ ոչ ուրիշ բանով... Էդ մարդիկ Հայերէն գիտեն: Վերադառնա՛մ Երևան մեր Աճառեանից պիտի Հարցնեմ...  
 Աչքերը մեծցած եւ շնչող փրփրափայտակա.  
 — Գիտե՞ս, մտածում եմ, որ նոր նանձան լեզուներ են: Կարող է պատահել:  
 Չարչարեանը դու՛ր իր նոր գիւտի համար՝ ժպտում է, պրպանից համրիչ հանում եւ ձեռքի մէջ խաղաղնում: Ուշադրութեամբ պատուհանից նայում է դուրս, ապա երկար ժամանակ լռելուց յետոյ, Ղլխարկը քաշում է ճակատին եւ խոր շունչ քաշելով.  
 — Էս շան որդի բուրժուական երկրների համա շինել են հա՛... վերջ չունի... Անօթի գկուտում են եւ չնայած դրան շինել են:  
 — Որտեղի՞ց վերջրէր որ անօթի գկուտում են:  
 — Մեր թերթերը էդպէս են գրում:  
 — Շատ էլ գրում են...  
 Կասկածով լեցուն աչքերով պրպտում է աչքերիս մէջ...  
 — Ի՞նչ ա... Չլինի՞ թէ արանց կողմն ես պաշտպանում:  
 — Կ'ապրես՝ կը տեսնես:  
 Սէն Միշլինի մօտակայ փողոցներից մէկում հիւրանոց, Չարչարեանը փոքրիկ, ծաղրանկարի նման զուարճալի, աչքերը պլլած եւ թերանք կէտ քաց՝ չորս կողմն է նայում եւ աշխատում հանդիսուոր դիրք բռնել:  
 Առաջարկուած սենեակը երկար նա-

յում է, անցնում մէկ անկիւնից միւսը, ապա զլուխը թափահարում .

— Ատի՛ր նրան, որ քախտով մի սենեակ սայլ է լինէ՛ք քախտ չունենե՛ք մեծ մի տիւանով :

Ասում է տիւանով սենեակ շաւենն :

— Բա՛, — այլանդակ էր քիթը վար կտխելով եւ համբիշք օդի մէջ շարժելով բացադանչում է նա, — բա՛, էս էլ քեզ փարիզը . . . տիւան շաւենն է Գէ, լաւ, լաւ, յարմարուենք . . .

— Մի քիչ հանդիստ արա, երեկոք եան կը դում եւ կը գնանք ընթերցու :

— Գնո՛ւմ ես Գիտի գաս, չէ՞, անպատճառ սիրտի գաս, չէ՞ . . . մամ հարկու :

— Վատան եղիք :



Երբեք կեանքիս մէջ այդքան շէի զըւարճացած : Չարչարեանը ներկայացնում էր սովետական ընկերութեան նոր եւ միջին այն տիպը, որ մարմնացնում է անցողակուն եւ մութ մի շրջանի մասնութիւնը : Պարսկաստանի մի ինչ-որ հեռու-ուր գիւղից եկած, փոթորիկի մէջ ընկած շինական երիտասարդը, որ ժամանակ չի ունեցել սովորելու եւ որի բնածին ազգանքը կարողացել է զարգանալ, մըրրիկի շէւա առնել, ըմբոստութեան գրոշակի նման Ծածանուել, արիւնի եւ վէրքի գոյնը փայլելով . . . Տոկոս, գոտոզ, ինքնահաւան, այլասերումի սաստիճան հիւանդոտ, բայց միեւնոյն ժամանակ մրրկուած Ծոփի կատարին թռչկոտող թռչունի նման սովուն, ինքնազրտան, կողորդը լեցուն մեծղի ազգակեներով, դեղին կտուցը սրուած եւ խայթող, թեւերը լայն եւ սիրաւ սուտրի նման պայթիչ :

. . . . .

Նկատելի էր նաեւ մի բան : Սովետական միջավայրում նախնական նրա հոգեբանութիւնը պատուարուած էր մի քանի ընդհանուր նախադասութիւնների եւ

սկզբունքների շողերի տակ : Մտորը աշխատում էր երեւալ նուազագոյն կերպով : Յեղափոխութիւնը, կոմունիզմը, Մոսկուան, Վենիսը ասել այն եւ ուրիշ րեզնանուր անդեր նրան տալիս էին անպիսի քաղաքացիական իրաւունքներ : Նրա րեզնանուր սպիտութիւնը, ինչպէս նաեւ միւսներինը, կարող էր համարձակ ժանդալ, նստել, ոտքը ոտքի վրայ դնել եւ տրհամարհանքով նայել մնացած աշխարհին : Նա գիտէ : Նա ամէն բան զիտէ, հասկանում է : Նա ամէն բան կարող է : Կեանքը եւ նրա բովանդակութիւնը երկու կողմնաց բրոշիւր էր, որ ամէն օր կարող էր կարգալ եւ ճակատի վրայ կարէլ նոր բրանմանի կարմիր նշան :

Իսկ այստեղ ամէն ինչ տարբեր էր : Ընդհանուր նախադասութիւնները այլեւս սպիտութեան պաշտպան չէին, նոր երեւոյթներին առջև նա մնացել էր շուտաբա՛ծ, դարձացած եւ նաեւ միամտօրէն զուարճացած :

Թատրոնում :

— Բա ուրեմն, դուք ա գալիս, որ Մոսկուան դեկորացիայի էս ձեւերը էստեղից ա առնել . . . Այ քեզ բան, քո՛ւ սարեւ : Իսկ ես կարծում էի, որ միայն ներքանք են . . .

Մափրիչի մօտ :

— Դու ասիւր մնացիք, ես յետոյ կը գամ : Մտորը անիւնց, մազերս կտրեց, սանտրեց, լուաց : Ինչ որ ասաց՝ դիտով ասի հո : Մի տեսակ մեքենայ զուարթեց երեսիս վրայ, բաներ քոնց, էս սրաւ, էն սրաւ : Ա՛րա, հայելիի մէջ նայե՛մ՝ տեսե՛մ որ երեսս փոխուել ա . . .

Յուզուած, անկեղծ եւ ուրախ շնչաւով .

— Ա՛րա, ուրեմն դրամով մարդ կարող ա զեղեցկանալ : Ուրեմն, մարդու երեսը կարող ա փոփոխուել . . .

Ինփայտների թանգարանում :

— Քե՛քս եկաւ . . . Համա գերեզման ա հա՛ . . . Մեծ մարդ էր : Մի նայի՛ր է՛, մի նայի՛ր է՛դ դրօշակներին . . .

Ու յանկարծ ոգևորուած, ձեռքերը օդում շարժելով եւ ձայնը բարձրացնելով .

— Տօ քեռին ա, քեռին զրդուացրել ա... Շան որդի քեռին. զրդուացրել ա, է՛... սմբող ախարհը տակնուվրայ ա արել... Տօ, ես նրա հոգուն ժառանգ, զրդուացրել ա հա՛...

Չարչարեանը Մեծ Պատերազմին Քեռիի խմբում կամաւոր է եղել եւ իր մտքի մէջ Նապոլեոնեան էպոպէան ուրիշ բան չէ, եթէ ոչ կրկնութիւնը հայկական ճակատի վրայ անցնող դէպքերի: Մեծդի մի խմբապետական շարժում:

— Գլխարկից երեւում ա, որ հսկայական բոյ ա տւնցել:

— Այդ մէկը սխալում ես: Երեւակայիւր, շեմ ասում քեզ չափ պզտիկ, բայց քեղանից ոչ շատ բարձր...

— Ճի՛շդ ես ասում:

— Հաւատա՛:

— Ուրախ եմ: Չես կարող երեւակայել՝ ինչքա՛ն ուրախ եմ: Հիմա կարող եմ ասել՝ Նապոլեոնն էլ ինձ չափ պզտիկ բոյ ունէր: Ուրախալի ա, վերին աստիճան ուրախալի ա:

Անցնում է դաւլիճից դաւլիճ, երկու բոունցքները կրծքին սեղմած, աչքերը վառվռուն, երեսը բոցափառուն, յուզւած, ողևորուն: Ամենափոքրիկ առարկաների առջեւ կանգ է առնում, մանրամասն տեղեկութիւններ ուզում, տասն անգամ նոյն բանը հարցնում, անդիկի նման անհանդիստ դէս ու դէն շարժւում, ծիծաղում, բացազանչութիւններ արձակում:

Քեռի-Նապոլեոնի իր մտքի մէջ վերակենդանանում է, ապրում իսկական կեանքով, հրամաններ տալիս, ճակատամարտերի մասնակցում, զօրքերի առջնից՝ այլ ձեռքը կրծքին, եւ ձախը կռնակին նետած՝ արագ ու վճռական քայլերով անցնում: Հանդիսաւոր, մեծդի, վախադրու:

— Քեռին, է՛, ես նրան հոգուն ժառանգ, զրդուացրել ա, աշխարհը կրակով ու ծուխով լեցրել:

— Մեղք սր հայ չէր:

— Էդ մէկը լաւ ասիր, իսկապէս... Երբ դուրս ենք գալիս՝ ընկնում է

խոր մտածումների մէջ: Վախեցել է իր ողևորութեանից:

— Հերոսների շրջանը անցել ա... Պատմութիւնը պատկանում ա աշխատաւոր կոլլեկտիւներին: Էս օր, եթէ Նապոլեոնը գայ իսկ, ոչինչ չի կարող անել կամ շատ-շատ կուսակցութեան առաջնորդներից մէկը կը լինի: Փոխուել է պատմութեան դիալեկտիկան, արտադրական ձեւերը եւ առհասարակ տնտեսական փոխարարներութիւնները...

— Ուղում ես ասել, որ Հայաստանում, օրինակի համար, Քեռու տեղ մի շարք Ծորտեր են ծնուել եւ Քանաքոպ գործարաններից օրը տասը հազար ինքնաշարժներ են դուրս գալիս...

— Ի՞նչ ա, կատա՞կ ես անում...

— Բա կատակ չանեմ, ի՞նչ անեմ:

— Ես մազուց նկատել եմ եւ միշտ էլ ասել եմ, որ դու բուրժուական մտածելակերպ տւնես: Ես էլ երբեմն սխալներ եմ արել եւ հիմա, որ Եւրոպան տեսայ, է՛լ որոշել եմ վերադարձիս կուսակցական դժից երբեք, երբեք չչեղել:

— Կուսակցութիւնը Հոռոմայ պառլի նման անսխալակա՞ն է, ի՞նչ է...

— Այո՛, անսխալական ա: Դասակարգի մտածելու օրգանն ա, նրա զբլուխն ա...

Չարչարեանը այդ բոլորը ասում է, որովհետեւ վախում է, որ կը պատմեմ ինփայտների թանդարանում իր ասածների մասին: Նապոլեոնը դասակարգային թշնամի է, բռնապետ, բուրժուական աշխարհի պաշտպան եւ յանկարծ այդպիսի հիացում...

— Էս օր, եթէ Մոսկուայում մի Նապոլեոն ծնուի, կը դնդակահարենք...

— Աչքերիս մէջ մի լաւ նայիր:

— Եւ կը նայեմ:

Մէկ էլ աստիկ կարմրում է, քարկանում:

— Ա՛գա, Իբերիան, դու ուզում ես ինձ մտանդել, ուզում ես տունս քանդել:

— Ի՞նչ ես ասում... Յիմարացե՞լ ես՝ ի՞նչ է:

— Ձէ, էնպէս... Էս Նապոլեոն ասւած մարդի հե՛րն էլ անխճած: Բայց ե-



րեակայիր, եթէ իմանան, թէ նրա մասին լաւ եմ խօսել, կարող են մտածել, որ Տերմիդոր եմ ուզում, ինչպէս շատերը: Իսկ եթէ Տերմիդոր եմ ուզում, ուրեմն կուսակցական գծից շեղել եմ, ուրեմն Յւրոպայի բուրժուական մթնոլորտը վրաս ազդել օտ եւ այլ այլազան բաներ, ինչպէս ասում են մեր տաճկահայ եղբայրները:

— Եւ ինչո՞ւ մեր տաճկահայ եղբայրները...

— Որովհետեւ նրանք դրոշմը են խօսում:

Միծաղում է: Պո՛ւ է իր քրախօսութիւնից:

— Դէ, դեանք մի բան խմենք: Մի մարդավարի բան, որ աղիքներս ասկիւնդրայ շանի:

. . . . .

Փոքրիկ այդ էակը օրեր շարունակ մտածանկա եւ հանգստութիւնս խլաց, հարեց, աղմկեց, կերածն ու խմածը զուրս տուեց, կոխներ սարքեց եւ մի օր էլ վերջապէս մեծ, դեղին պայտասկը լեցրեց զոյնգլոյն փողկապներով, կօշիկներով, օգրկոյնի շիշերով, օճառի կրտորներով, աման ու փայփայլուն սննդութիւններով եւ մեկնեց:

— Աւել պակասը կը ներես...

Ու թրջուած շրթուներէր կարկառուց ինձ:

Երբ մեկնեց՝ պարապ եւ ախրութիւն զգացի: Չնայած արտաքին իր ձեւերի բոլոր այլանդակութիւններին, իր անձի արտաւոյց եւ ծաղրանկարական կողմերին, նրա մէջ մի ինչ-որ ամբողջական գիծ կար, որ հրապուրիչ էր եւ նոյնիսկ մեծղի: Հայ շինականի ուխտարի հօտը եւ հայ երկրի հակասական բնոյթը: Լերան կատարին անցնող գրգռալից մրրիկը եւ լեռան ստորոտի մօտ բուսնոց թթենու շուքի տակ պառկած բանաստեղծական զայնութիւնը: Կոպիտ հողը եւ յանկարծակի բուսած մանիշակները կարպիտը:

Վերջ ի վերջոյ իրական հայը: Նա, որ իր մարմնի ամէն մի մասով, իր հո-

գու բոլոր թելերով կապուած է երկրին եւ որի համար արտաքին աշխարհը գոյութիւն ունի այնքան, ինչքան նա կարող է համեմատութեան ենթարկուել իր սեփական երկրի հետ: Նա նայում է աշխարհին հայի աչքերով: Նա իր աչքերը չի փոխում: Ու Հայաստանը է՛, որովհետեւ նա կայ:

Ու այդ՝ շնայած իր մտային քառախն, իր մտո մարտած ընկերային ու քաղաքական վարդապետութեան, իր միջազգային իդէալին, իր բոլշեփոմին: Նրա ամբողջական անձի համար այդ ներկի է եւ նոյնիսկ օգտակար, որովհետեւ նա երբեք չի փոխուի, իր բնոյթին չի դաւանանի: Նա կայ եւ կը մնայ՝ ինչ որ կայ: Նա ինքը Հայաստանն է եւ իրքեւ այդ՝ տեւտկան, անմահ: Վասնզը ուրիշ տեղ է: Վասնզը այնտեղ է, ուր Հայաստանը վերածուած է հոնտորական հայրենասիրութեան, օտար շեղով արտասանուած կեղծանուշ անականներէ, դրական եւ քաղաքական խարխալութեան:

Ինչեւակին, շնայած իր Հեզելիականութեան եւ պրուզոնականութեան, գտլիս է Փարիզ, սարսափած իր աչքերը աջ ու ձախ տնկում եւ երկու օր յետոյ փախչում ետ, այլեւ երբեք այդ արկածի մասին չմտածելու համար:

Դոտասյեւակին բարբարոս Ռուսաստանը մեծիական իտէալի է վերածում, իր քննազատական մաքի անողոք դանակները աւելի սրելու համար:

Առաջին շրջանի Անգրանիկը, պարզ մարտիկը, առաւապում է ժրնեի փողոցներում եւ նախընտրում է լեռներ վըտանգը՝ Հրապանների համազարկը, աղբիւրներ կլկոցը, քամիների բարկութիւնը՝ Հիւրանոցային հանգստաւէտ կեանքին:

Իրական անհասը միշտ մերժում է այն ամէնը՝ ինչ որ իրենք չէ: Ինչ որ իր ներքին բնոյթը կարող է մտանգել, տարբաշուծել: Նրա համար, ինչպէս Չարլստանի համար գերմանացիները հայերէն են հասկանում եւ համաշխարհային պրոլետարիատը մաս է կազմում Ախտայի

կամ Արարանի աշխատուոր մասաններին:

Երեւակայում եմ Չարչարեանին, վեարադարձից յետոյ, Երեւանում:

— Հը, մեր տղայ, եկա՞ր...

— Եկայ:

— Մի պատմիր տեսնե՞ք էդ Եւրոպայում ի՞նչ տեսար, ի՞նչ շտեսար:

— Էա ա, աղբէր, գոտ չի, համա էսանց մեր մօտ աւելի լաւ ա, նրանց Հերն էլ անիծած... Մեր էս ուղբ, էս Արարատը, էս կոնեակը: Էլ տեսնե՞ք պըրծաւ զնաց, ամիր թի խմենք...  
Ես նախանձում եմ նրան:

Արտասահմանը Չարչարեանի նախանկատ Հողերանութեան մէջ բացել էր մի տաճանի ճեղքուածք, մի երկուութիւն, որի վրայ նա չէր կարողանում իջնել: Կան բոյսեր, որոնց վրայ օտար երկրի ֆուրք, Հողը, սգը ազդում են թոյնի նրման, եւ կան մարդիկ, որոնք Հողեպէտ տեղաւան են լինում, երբ կրում են նոր եւ ուժգին տպաւորութիւններ: Չարչարեանը երկուստաբղ Հասակից կեանքը ըմբռնել էր առանց գերլուծելու, զգացում էր եւ զգայնութեան ուժով: Պատերազմի եւ յեղափոխութեան Հարուածող դէպքերը նրա ակադեմիայի մարմնի մէջ ուրոյն ակօսներ էին բաց արել եւ մրրիկի Հետ ապրելու բուռն ներդաշնակութեան ուրթման ստեղծել, որոնց նա Հետեւել էր կուրօրէն, առանց մտածելու, առանց կատակածելու, առանց վերլուծելու: Նրա պարզամտութիւնը եւ նաեւ մտաւոր զարգացման պակասը ընդունել էր տիրող պաշտօնական գաղափարախոսութիւնը, ինչպէս Հաւատացեալը ընդունում է Աւետարանը, առանց կասկածելու համարձակութիւնն ունենալու:

Ե: ասրել էր իր տեսակի մէջ Հանգիստ եւ բախտուոր կեանք:

Երգել էր փոթորիկի մէջ սաւառնող միւս բաղձաթիւ թռչունների նման: Դէպքերից չէր վախեցել, խղճի խայթումներ չէր ունեցել, երկուութիւն չէր զգացել, իր միտքը եւ իր սիրտը չէր բռնաբարել: Զայնը միացել էր ուրիշների ձայնին եւ

թռքերի ամբողջ ուժով պոսացել: Մտակունք մտածել էր իրեն համար եւ Երեւանը յոյժ էր տուել: Ետա պարզ, շատ դիւրամբանելի մտածումներ, որոնք Հրեան էին մայր երկրի թափ վրայ, առանց գծաւարտութեան: Թմբուկի շեշտակի եւ միօրինակ ձայներ, Ծափերի շղթայ, զուռնայի պոսացող կանչ:

Եւ կի՛ն ու գի՛նի Զանգուի զընդացող ափերին:

Չարչարեանը Եւրոպան երեւակայել էր ինչպէս յետամնաց, լրոյսի եւ գիտութեան կարօտ երկրների մի շարք: Այնպէ՛ս՝ ինչպէս նա տեսնում էր Հայաստանը, երբ զնում էր Մոսկուա: Անշուշտ, գիտէր, որ նրանք ունէին որոշ շուրջուական զարգացում, այն՝ ինչ սր նրանք անւանում էին զաղաքակրթութիւն: Բայց նրանք չգիտէին, որ այդ զաղաքակրթութիւնը պարզապէս խաւար է, Հինգած, մաւուած, փլուզումի արժանի մի չէնք, պրոչեստարիտի վիզի կախուած մի Ծանրածանր շղթայ, որ իրենք եւ ինքը՝ Չարչարեանը կոչուած էին ասպաշխու:

Մինչ քիչ մնաց, որ Եւրոպան տաօյալի իրեն:

Հանդիսա եւ սքանչելի կեանք: Նըրբողին զուարճութիւններ: Մեծ զաղաքներ, զեղեցիկի եւ վայելույ կի՛ններ: Մաքրութիւն, յարմարութիւններ: Ո՛րք մնաց Մոսկուան:

Ահա այդ տաճանի էր:

Ինչպէ՞ս Հայտեցնել Հակասական զգացմունքներ: Երբ Չարչարեանը վերադարձու Երեւան, ամէնքը կասկածով եւ Հետաքրքրութեամբ նայեցին նրա աչքերի մէջ: Մտել չկարողացաւ: Հայհոյանքներ յտեղացրեց Երկկայծ երկրների զլիխին:

— Նրանք ձեւն են, իսկ մենք ոգին, — կրկնեց նա Հողար անգամ ուրիշների կրկնած նախադասութիւնը, — չի կարելի որ ուրոյն սեքնիկայի զարգացումը եւ պրոչեստարիտը, ինչպէս ասել է Մարքոսը, պէտք է իւրացնի թշնամու արտադրական դէնքերը...

— Իսկ ուրի՞շ...

— Ուրիշ ի՞նչ ես ուզում սր լինի:

— Կ'դքան բաներ տեսար, է'դքան շաղաքներ եւ երկիրներ շրջեցիր...

— Էդ մասին պիտի գրեմ :  
— Անշամբեր սպասում ենք :

Չարչարեանը խորամանկ աչքերով նայում էր խոտողին եւ ներքնապէս վեր-  
զոգւում : Վերծաղում է վրաս, — մտա-  
ծում էր նա, — ուզում է բռնել մտաւոր  
բոլորիւթիւնն :

Հրատեչա էր առնում եւ քայլում :

Ուրիշ բան էր, երբ զնում էր Մոս-  
կուա : Քիչ ու շատ առեւտրէն գիտէր,  
կարգում էր, հետեւում, կրկնում, Հա-  
յացնում : Ո՞վ կարող էր Համարձակու-  
թիւն ունենալ Մոսկուայի դէմ որեւէ ու-  
արկութիւն անել : Ետա անգամ պատու-  
հում էր, որ աչէա կուսակցականներ, ու-  
րոնք ամէն բան շէին կարգում, նորու-  
թիւնների հետ ծանօթ չէին, իրենց քիթե-  
րը վեր էին բարձրացնում եւ նկատողու-  
թիւններ անում : Չարչարեանը անտիւ-  
պէս ամենադէպի, իմաստունի դերք, նոր  
խօսք ասող առաքեալի ձեւեր էր առնում  
եւ արհամարհում նրանց :

. . . . .

Իսկ էս անիծած արատաւածանի Հար-  
ցր բրդրոյին ուրիշ բան էր : Նախ՝ լե-  
զու չէր իմանում, թերթ եւ գիրք չէր  
կարդում, իսկ եթէ իմանար իսկ, պիտի  
վախենար թերթ կամ գիրք կարդալ, ու-  
րովհետեւ եթէ կարգաբ՝ յանկարծ գը-  
րածներէ կարող էր ազդուել եւ բնկնել  
ձուգակի մէջ : Յայանի է, որ նոյնիսկ  
արատաւածանեան կոմունիստական թեր-  
թերը լաւ են կնտեղ, բայց վաւանդուար  
են եւ կասկածելի : Խորհրդային Միու-

թեան սահմաններում : Այդտիտի պարա-  
զաներուն, կարելի՞ բան էր խննթու-  
թիւնն ունենալ մի օրեւէ կարծիք յայտ-  
նելու, կարելի՞ բան էր...

Համբիշը խաղացնում էր իր ձեռքում  
եւ վշտանում :

Լաւագոյնն էր լռելի : Էնպէս ցոյց  
տալ՝ իրրեւ թէ շատ բան դիտես, բայց  
տառյժժ չես ուզում ասել : Չանապա-  
սպանաւաներով կուսակցական դաղտնու-  
պահութիւն, եւայլն...

— Էդ մասին շատ բան կարող էի ա-  
սել, բայց տառյժժ ժամանակը չի : Պէտք  
է, բնկեր, էդ Հարցերին մօտենալ մարք-  
սիստական տեսակէտով, պատմական մա-  
տերիայի գիտիչի դանակը, էպէս ասած,  
ձեռքումդ պիտի բռնած, նո՛ւ, դա Հեչա  
բան չի եւ ժամանակի կարօս է...

Իսկ օրերը եւ շաբաթները անցնում  
էին, եւ մէջտեղը օշինջ չկար :



Փայլերը արագացնում էր, բարձրա-  
նում մինչեւ Համալսարան եւ այնտեղից  
նայում Արարատին եւ նրա առջեւ ուս-  
րածուող դաշտին : Երբեմն զեղեցիկ մե-  
զեղիներ էին երգում իր գլխի մէջ : Երբ-  
թունքների ծայրից զեղեցիկ, բարդ, խոր  
բտոնք էին կախում ու գնում բախում  
ուրիշ բտոնքի, որոնց վերջաւորութիւն-  
ները հնչում էին թմրուկի ձայնի նման  
եւ սրտի մէջ խորհրդուար լոյսեր արթ-  
նացնում :

Ա՛հ, կարողանալ ասել, ամէն ինչ  
բարձրածայն ասել : Պոսալ, աղազա-  
կել...

«Հասկանո՞ւմ ես, ջերուելի Արա-  
բառ, հասկանո՞ւմ ես»...

(«Հայրենիք», 1933 Նոյեմբեր)

### Ե Ղ Ի Շ Է Զ Ա Ր Ե Ն Ց

Եղիշէ Զարեանց, դուն մեռա՛ր, եթէ լուկ կայ երգիմ,  
Եթէ չի ծագիր Մասիսի ծոցիմ լուսաշող արփիմ:

Եթէ կը ցամփիմ մեր անհղա՛վագ գետերը պզտոր,  
Ու եթէ անդարձ կ'իջնէ լուսրնկան վիհիմ մէջ անդորր:

Ու եթէ ամեն հայ տունի մէջէն չի շողար ոսկի  
Ճրագը՝ գար կարծես կը վառեն ժառանգը Սուրբ Նարեկի:

Եթէ չի մըխար արծաթ թնկամանը՝ մեռելներուն  
Քաղցր յիշատակիմ, Եղիշէ Զարեանց, եղած ես ամիւն...

Ու ծածկւում է դէմքը խաւարով. ա՛յ քեզ չենք տեսներ  
Վիշապայազարի մը կերպարանքիմ մէջ առտեղաներ:

Բայց երգն անըպառ բիւրեղի մը պէս կը հնչէ անա՛  
Քու սրտէդ բխած՝ մեր միշտ ծարաւի շրթներուն վըրայ:

Ու մըռնչածայն եւ մըրըրկտես գետերն հայրենի  
Դէպի ծով կ'երթան իրենց գանձերով լոյս ու արիւնի...

Եւ Արագածէն՝ սրբագան կանթեղ, կ'իջնէ լուսրնկան  
Շիրիմիդ վրայ կախում ոսկի շաթայով մը կախարդակամ...

Ու մեր տուններուն մէջ խնկամաններ կը ծըխան քեզի,  
Դուն որուն սիրուն էր անձրեւով լեցուն սրկիւն մ'երագի...

Անա՛ չես մեռած, քո ձա՛յնրդ է որ կը կանչէ հեռո՛ւն,  
Կարօտի անվերջ ու ծիրանե՛վառ մոր նամբաներուն...

Եւ ամեն առտու, խոր երկնքիմ մէջ մեր Սուրբ Նայիրի,  
Եղիշէ Զարեանց, քո հոգի՛դ է որ անշէջ կը վառի...

ԱՐՄԷՆ ԵՐԱՎԹ

Բ. ԿՌԱՆԵԱՆ

ՄԵՐ ԳՐՈՂՆԵՐԸ

Ա Ր Ա

ՊԱՆԵՈՋԵԱՆ



ԱՐԱ ՊԱՆԵՈՋԵԱՆ

«Կեանքը պետք է գմայլանքի եւ խորունկ սիրոյ երկար կամչ մը ըլլայ եւ պայթիւն մը՝ ծիրանի գօտիի թուր գոյներով հրախաղութեան մը նման... ստեղծագործութիւն մը՝ եզակի, անփոխարինելի...»

Եւ...

«Կեանքը պետք է գլուխ-գործոց մը ըլլայ՝ ոչ նմանութիւն, վերմէրի նկար մը ինչպէս...»

Կը գրէ Արա Պալեոճեան:

Մայրայեղօրէն մշակուած, երկար ընթերցումներով հարստացած: Մտաւարական, համայնական, բնագոյնական աշխարհ մը էրը: Ատիկա պիտի ըլլար քիչ մը չոր, յուզումէ եւ զգացումէ զուրկ: Բայց Արա Պալեոճեան խանութեան ունի եւ գեղարուեստական գրայարանք: Երաժիշտ է, կը նուագէ, կը գծէ: Կը շարժի գեղարուեստի, երաժշտութեան եւ բանաստեղծութեան միջնադարի մը մէջ, որ դարձած է իր կենցաղի անբաժանելի մասը: Անոնցմէ է, որոնք կը յորջորջուին արուեստագէտ դրող: Աթէնքը եւ Վենետիկն են կղած զինք կերտողները:

Որպէս արդիական դրող՝ ըմբոստ է աւանդութեան դէմ: Բարոյագիտական պատշաճութիւններ չեն կուլանդեր զինք: Սեռը ազատագրուած է կեանքի եւ արուեստի մէջ: Աստեղծագործութեան ակն է: Արա Պալեոճեան, երբեմն, բրտօրէն իրապաշտ է եւ կը փարի կեանքին՝ ցաւցնելու աստիճան:

«Ճամբանակ մը ուզեցի սրբութեան հասնիլ: Մտածեցի, որ Աստուծոյ նըմանիլ ջանալը ինծի համար միակ միջոցն էր մարդկային տեմանքները անցնելու: Այնպէս չեմ գգար հիմա: Ինչո՞ւ մարդ պիտի փորձէ հրեշտակի նման»:

նիլ եւ ընթացքին մէջ կորսնցնել շատ աւելի քանկազիմ բան մը։— Իր մարդկայնութիւնը։

Իր մարդկայնութիւնը։ Այս է թեման, Ոմանք կեանքէն կը ջանան խուսափիլ, Պալեոզեան գահավէժ գէպի կեանքը կը խոյանայ։ Ինչպէս թիթեռնիկը լոյսին։ Առանց ամօթխածութեան, երկրնարանքի, շողքորթութեան, Միշտ հատրելով արուեստի սահմաններուն մէջ։

Կը գրէ արձակ, բանաստեղծութիւն, թատերգութիւն, քննադատական, ուսումնասիրութիւն։ Բազմակողմանի եւ ստեղծագործ։ Հասած է նուաճումներու։ Ստացած՝ Բանաստեղծական երեք գրական մրցանակ։ Իր թատերախաղերը ներկայացուած են օտար-կայաններէ։ Մեծ է Աթէնք, 1936ին։ Կրթութիւնը ստացած է Վենետիկ՝ Մուրատ Ռափայէլեան եւ Իտալական համալսարան։ Այժմ կ'ապրի Գիշերը (Բանաստ) եւ ամբողջովին կը գրողի գրականութեամբ։ Կը տիրապետէ բազմաթիւ լեզուներու, կը գրէ անգլերէն։ Ռոբոտոզ, թափանցող եւ վերլուծող միտք մը։ Մանօթ՝ համալսարհային գրականութեան եւ արուեստի։

«Կը մտածէ (աղբիկը), որ շատ կը խօսիմ ռուս գրականութեան, յոյն փիլիսոփայութեան, ֆափոնական նկարչութեան, ամերիկեան գործնադարչութեան, թուրք բարբառութեան եւ հայ միստիքականութեան մասին...»

Իր ամէնէն շատ սիրած բանաստեղծն է Գրիգոր Նարեկացին, ամէնէն շատ սիրած ջութակի քոնչերթոն՝ Արամ Խաչատուրեանի քոնչերթոն... Ստեղծող եւ համոզուած հայ մը։ Ուժեղ արուեստագէտ, որուն Աստուած արտայայտութեան ինքնատիպ եւ պերճաբան լեզու մը շնորհած է։ Հիւրիւորային Ամերիկայի ամէնէն օժտուած եւ ստատ արտագրող հայ գրողներէն մէկը։ Անցեալ տարուան ընթացքին, աւելի քան վաթսուներորդական եւ յօդուած հասցուցած է ամերիկահայ մամուլին, իր այլ գրական գործերու կողքին։

Իր քննադատականները կը կրեն իր իւրայատուկ գրողը՝ կարճ, խիտ, ըստ էութեան։ Տեղ մը գրած եմ, որ քննադատութիւնը արդի հայ գրականութեան Աքիլլէսի կրունկն է։ Ձի բաւեր միտքն գրականութիւն կարգացած ըլլալը։ Մեծ քննադատները առհասարակ գեղարուեստի զգայարանք եւ մեծ հմտութիւն ունեցող մարդիկ եղած են։ Կարելի է յիշել քանի մը անուն միտքն-Քէն, Անդրէ Ժիտ, Օսկար Ռուսլո, Պալլեր... Արա Պալեոզեան ունի այդ զգայարանքը եւ հմտութիւնը։

Պալեոզեանի «Տի արմիններնը» հասարկ տրաման է ուշադրութեան։ Երեսն կը հանէ իր լայն ծանօթութիւնը, թափանցելու եւ համագրելու կարողութիւնը։ Կը կարծեմ, որ եթէ հեղինակը համաձայնի եւ զարգացնէ հայոց գրականութեան եւ հայ մշակոյթի գլուխները, կարելի է երկրորդ տպագրութեամբ մը լոյս ընծայել այս ուշադրաւ հատորը։

Բազմանք է, որ Արա Պալեոզեան աւելի ժամանակ տրամադրէ զուտ գրականութեան, որովհետեւ սաղանդ ունի։ Դեռ երիտասարդ է, իր ժողովուրդը իրմէ շատ ակնկալութիւններ ունի։

Մինչ այդ, իր մասին պիտի կրկնէի Նիկոլ Աղբալեանի խօսքը.

«Մի մտնում, որ ես կեանքի մէջ ժողովրդավար մըմ եմ, բայց գրականութեան մէջ՝ արիստոկրատ մը»։

Արա Պալեոզեան — արիստոկրատ գրողն է մը։

Լաւ Աճնելըս

ԲԻԻՋԱՆԻ ԿԻՒՆԵԱՆ

Ա Ր Ա Պ Ա Լ Ե Ո Ջ Ե Ա Ն

**Ն Ո Ւ Ա Գ Ա Հ Ա Ն Դ Ե Ս Ը**

Հայաստան  
ԲՒԻՋԱԿՆԻ ԿՈՒԱՆՆԱՆ

Երբ առաջին անգամ Եկրոք Հուլիս կարդացի, կը յիշե՞մ՝ ուղեցի դադարի ուստիկան գառնալ:

Երբ առաջին անգամ Ռոստիսիի նախերգանքը լսեցի, որուցի կրգահան մը գառնալ:

Երբ տեսայ Մարտն Պրանտոն՝ «Ան տը Ռաքրոֆրանդի մէջ, ուղեցի գերասան գառնալ:

Երբ կարդացի Կազանովայի յուշերը — կրնայի այսպէս շարունակել...

Կը կարծէի, որ ստեղծագործ ըլլալ կը նշանակէ համանուագ մը յորինել, դիտական գիւտ մը բնել, պիտի մը գրել, կոթող մը քանդակել: Այս բոլորը, սակայն, հիմա ինծի կը թուին, որ քաղցրենիութեան ծառայելու կերպեր են միայն:

Այնուամենայնիւ, երբ անցեալ գիշեր, դացի իմ առաջին երգեհոնի նուագահանդէսին, կախարչուած էի: Հմայուած: Ինքզինքս սերտկանի մը գոհ զգացի:

Յայտագիրը մեծաւ ժառանգ Եսահան Ս. Պախ էր: Պէտք է օրկանիտ մը ըլլայի: Նուագահանդէսին զացի՝ առանց որեւէ ակնկալութեան: Գացի՝ որովհետեւ կը սիրեմ ամէն օր նոր բան մը գործել: Նախորդ օրը սկսած էի Սվանիլի տրոփել: Անկէ առաջ, սկսայ նամականիլ հաւաքել: Եւ անգամ մը, ներշնչուած ամերիկեան պէսք սէլլորի մը հերոսէն, քիչ մնաց որ դեղեցիկ կնոջ մը (որ դրացիիս կինն էր եւ գոր հագիւ կը ճանչնայի) առաջարկեմ հետ անկողին երթալ: Բայց վերագնահատելով ըզմտնքս, դողափարը վանեցի: Հիմա կը մտածեմ, որ սխալ բրի: Կը սկսեմ ըմբռնել, որ ժամանակը մարդ արարածը, — սեւէ մարդ արարած, — կը վերածէ ճգնաւորի, նախ քան զիտկի մը վերածելը: Բարոյականը, հետեւաբար, ինծի պարզապէս կը թուի անհամբերութեան մեւ մը ըլլալ: Եւ դեռ, ես կ'ապրիմ ճգնաւորի մը նման, միայն պատահական սիրային միջնարարներով՝ կարճ եւ պայթուցիկ տեսողութեամբ:

Այս պահուած, Ասէլ Մորոնն է: Հանդիպեցանք երգեհոնի նուագահանդէսին:

Նուագահանդէսը տեղի սենեկաւ հին եկեղեցիի մը մէջ: Նստած էի վերնատան մէջ, անորոշ տարիքով կնոջ մը կողքին: Երբ միջնարարի տանն դուրս ելանք պահ մը, իր սիկարէթը վտակցի: Ենորակալութիւն յայտնեց եւ ուղեց զիտնալ, թէ կը սիրէ՞ի նուագը: Խօսեցաւ Քրանսական զօրաւոր շնչով մը: «Աքանչիլի է, այնպէս չէ՞», ըսաւ, ակնարկելով օրկանիտին:

որուն անունը Փիէւ լը Քոք էր, ոչ տեղական տաղանդ մը, այլ երկրող ծե-  
րունի մը կ'լլոր, ճողատ դուրսով եւ անհամաշարհ, խորունկ գծուած դէմքով  
մը: Պէտք է բռնել, — երկրող ծերունի մը՝ մինչեւ երգեհոն հասնիլը, բայց  
հոն հասնելէն ետք, սաղայելիական եռանդով էակ մը, որ այժեմարդի մը  
նման կը դարէր ոտքի լծակներուն վրայ:

«Ճրանտայի մէջ շատ ծանօթ է», հարցուցի:

«Եւրոպայի մէջ: Գալիացի չէ: Պելճիքացի է»:

«Ո՛հ»:

«Ես ալ պելճիքացի եմ, — աւելցուց, — կը յիշեմ հրը ուսանող էի  
Սորպոն, իմ նուազահանդէսները հրքեք չէի փախցնէր: Այն ատեն Փարիզի  
Մատլէն եկեղեցւոյ օրկանիստն էր — գեղեցիկ եկեղեցի մը... սքանչելի,  
ոսմանթիք երգեհոն մը... Բնաւ Փարիզ գտնուած էք»:

«Ո՛հ»:

«Երգեհոն կը նուազէ՞ք»:

«Ո՛չ: Դո՛ւք»:

«Դաշնակ... ոչ շատ, քիչ մը, — ըսաւ եւ խնդալով, — եւ արժոնի-  
քս... իմ գործիքս թաւջութակն է իսկապէս: Եւ վերջերս բարեկամ մը ինծի  
սորվեցուց քանի մը ձայնաշար նուազել կիթառի վրայ»:

«Դաշնակ, արժոնիքս, թաւ ջութակ, կիթառ. գրեթէ նուազախումբի  
բոլոր գործիքները կը նուազէք», ըսի:

«Ո՛չ բոլորովին: Կիթառի վրայ՝ միայն կրնամ ընկերանալ կարգ մը  
ժողովրդային երգերու եւ կրօնաշունչ տաղերու»:

«Ինծի կը յիշեցնէք Ռոսսինին»:

«Ինչո՞ւ»:

«Տեղ մը կարդացած եմ, որ կը նուազէր նուազախումբի բոլոր գոր-  
ծիքները»:

«Նոյնպէս Պախը», ըսաւ:

«Ես միայն ուստիս կը նուազեմ»:

«Պախ կը սիրէ՞ք», ուղեց դիտնալ:

«Շատ: Դո՛ւք»:

«Առանց վարանումի, մեծադոյն երաժշտական հանճարն է բոլոր ժա-  
մանակներու: Եւ միշտ ի մտի ունենալու է, որ իր գործերուն մեծ մասը կամ  
կորսուած է կամ փնայած, այնպէս որ՝ մեզի համար անհնար է մինչեւ իսկ  
մօտուոր դադափար մը ունենալ իր իսկական մեծութեան մասին»:

Ստիկա նորութիւն էր ինծի համար:

«Պախէն ետք, — շարունակեց, — սկսելով Հայրենով եւ Մոցարտով,  
երաժշտութիւնը սխալ դարձուածք առաւ գծախտաբար»:

«Օ՛հ»:

«Այո: Շքեղ դրացականութիւն եւ գործիքային ճարտիկ տպուորու-  
թիւններ, ինչպէս կը տեսնենք Ռոսսինիի մօտ, որ, ի միջի այլոց, աւելի  
հապիտ մըն էր, քան երաժիշտ»:

Ընդմիջեցի զինք եւ արտայայտեցի իմ կատարեալ անհամաձայնութիւ-  
նըս՝ Ռոսսինիի իր արժեւորման մասին:

«Պատճառ, որ յիշեցի իր անունը, նախապէս ձեր յիշատակին էր:  
Կրնայի բօել՝ Մայերպլեր, Պելլիւնի, Տոնիճեթթի, Ձիմարոզա...»

«Ռոսսինին կրնայ Եռան Սեպաստիան Պախ կամ Լուտիլի վան Պե-  
թովէն չըլլալ, — ըսի, — բայց իր Սեյիլլայի Սափրիլը ամենազմայելի...»



«Բայց հասկան ալ այդպէս է, — ըսաւ, եւ սուեցուց, — համաձայն ենք ուրեմն Լաւանարար մենք անհամաձայն ենք երաժշտութեան զերին մասին, իմ կարծիքով, երաժշտութիւնը — ինչպէս ամէն արուեստ — պէտք է փոխանցէ տեսիլ մը, ձևով մը բլլայ կապ մը երկինքի եւ երկրի միջեւ: Գեղարուեստական որեւէ արտայայտութիւն, որ կը ձախողի իրականացնել այս նախապայմանը, կը դադրի արուեստ ըլլալէ կամ կը դիմէ այլասերող փախուստի մը»:

Հարցուցի թէ ի՞նչ կ'ուզէր ըսել փախուստ բռնով:

«Անշուշտ կ'ուզեմ ըսել փախուստ իրականութենէն: Արուեստ եւս, փախուստը, անկարողութեան եւ վատութեան հետեանք ըլլալէ դատ, կրնայ խելագարութեան սկիզբն իսկ ըլլալ»:

Անկարողութիւն, վատութիւն, խելագարութիւն. ասոնք լուրջ խնդիրներ էին: Բայց գալով փախուստին, կրնար գոյատեւելու տախտիք մը ըլլալ:

«Ատիկա տարբեր է: Ես կը խօսէի փախուստի մասին իբրեւ կեանքի ոճ մը եւ ոչ ժամանակաւոր ա լա համրիթ տաքտիք մը»:

Ես Համրիթի մասին չէ, որ կը մտածէի, այլ՝ Հուսինիի: Փախուստի մասին այս խօսքերը յիշեցուցին ինձի, որ օր մը կարդալով Հուսինիի կենսագրութիւնը, որոշած էի իբրեւ նման փախուստի անպարար մը դասնալ: Իրեն բան չըսի այդ մասին, սակայն: Միայն, բաւական ուշ նոյն գիշերը, բոլորովին ատրբեր պարագաներու մէջ, ըսի որ Տ. Թ. Սուտուբի երկերը կարդալէ ետք, ուզած էի Ձէն պուտտայական վանական մը ըլլալ: «Ի՞նչ մը», — հարցուցած էր: Իրեն ըսի, որ ճիշդ լրած էր դիւս Վատահ չէր, ըսաւ եւ ուզեց, որ կրկնեմ խօսքս: Ըրի: «Ձէն պուտտայական մը», — ինչոպէս: Ձէն պուտտայական վանական մը, կրկնեցի եւ պահանջեց իմանալ, թէ ծիծաղելի ինչ կար: Ըսաւ, որ գժուար էր հաւատալը եւ շարունակեց քրքրալ, Փրանսերէն վերաւորական խօսքեր ըսել, ինչ որ չհասկնալ ձեւացուցի: Պէտք է ընդունիմ սակայն, որ իր սկեպտիկութիւնը արդար էր: Հետո էի վանական մը ըլլալէ...

Դադարը հինգ վայրկեանէ աւելի տեւեց, եւ այդ միջոցին յաջողեցաւ գոնէ վեց սիկարէթ ծխել եւ վեց երաժիշտներու համբաւը քանդել: Պեթովէնը հետտորական, զեզոն, եւ երբեմն մինչեւ իսկ՝ դեհիկ գտաւ: Մոցարդը՝ հանելի ըլլալու եւ արհեստականութիւնը զուարճացնելու շատ հակամէտ: Պրամզը՝ ցուցամու եւ ձանձրացուցիչ: Չայքովսկին՝ անտանելի:

«Եւ Վահնէրը, Վահնէրը յիշեցի՞»:

«Ձեմ կարծեր»:

«Կատարեալ բարբարոս մը»:

Հոյակապ: Վահնէր բարբարոս մը: Պէտք է խոստովանիմ սակայն, որ աւելի սիրեցի Մոցարդի մասին ըսածը, որ կը ճզնէր քույրեկութիւնը զլաւարճացնել, ըսել կ'ուզեմ՝ արխտոկրատին: Միակ երգահանը, որու նկատմամբ որեւէ յարգանքով խոսեցաւ, ետկար Պերլիոզն էր:

«Մինչ Պարլը չէր հասկցուած, ապա՝ բալորովին անտեսուած մահուրնէ ետք հարիւր տարի, Պերլիոզ ո՛չ անտեսուած էր, ո՛չ չհասկցուած, բայց միայն կէս հասկցուած՝ իր ապրած ատեն եւ անկէ ետք: Ինչ որ կատարեալ զազանիք մըն է ինձի համար, որովհետեւ իր տրամաթիք, հրաբխային պոռթկումներով եւ իր խոտով, սաղայնէլական յուզականութեամբ իր հանճարը անհասկնալի կամ գժուարին ոչինչ ունի»:

Հարցուցի իրեն, թէ արդեօք տեղական հրատարակութեան մը երա-  
ժըշտական քննադատն էր :

«Ո՛չ, կը դատաւանդեմ» :

«Երաժշտութի՞նն» :

«Ճարանական գրականութիւն : Իսկականին մէջ, իմ նիւթս փիլիսոփա-  
յութիւն է : Եւ որովհետեւ փիլիսոփայութեան ուսուցիչներու մեծ պահանջ  
չկայ երկրագունտի այս կողմերը, գրականութիւն կը սորվեցնեմ : Նոյնպէս  
գաղտնի ոստիկանական պատմութիւններ կը գրեմ» :

«Իսկապէ՞ս» :

«Տարին մէկ հաս զոնէ, անշուշտ ծածկանունով մը : Այլպէս վայն-  
ուչ պիտի չըլլար : Գործակիցներս ինծի վերէն պիտի նայէին : Աւելորդ է ը-  
սել, որ բոլորն ալ կը սիրին կարդալ — ծանօթ գաղտնիք մըն է : Ժան-Փօլ  
Սարթր կ'ընդունէ իր յուշերուն մէջ, որ ինք պիտի նախընտրէր կարդալ ցրն-  
ցող վէպ մը, քան Վիթկըն:Քայն» :

Հարցուցի իրեն, թէ մինչեւ հիմա քանի՞ ցնցող վիպակ գրած էր :

«Ինը, մէկը ըլլալով ա՛յն՝ որ նոր լրացուցի» :

«Քորագի՞րը» :

«Մտեր դիտեցի՞ն մէջ» : Յնցող կամ խորհրդաւոր պատմութիւն մը չէ  
իսկականին մէջ» :

«Հապա՞» :

«Բնագանցական թելադրանքներով պատմուածք մը, ինչպէս «Մտիդ  
Վենետիկի մէջ»՝ Քաֆկայի նմանդութեամբ...»

Կրնա՞ր աւելի պատմել իր պատմուածքի մասին : Խորհրդաւոր պատ-  
մութիւններ կը կախարդէին զիտ : Եւ ինք նման առաջին գրողն էր, որուն կը  
հանդիպէի : Որքա՞ն ժամանակէն կը գրէր իր գիրքը :

«Երեք, չորս ամիս : Կը գրեմ՝ առանց շարտուղարի, առանց մեքենա-  
գրողի, ինչպէս է պարսկական Սիմընոնի, էլլրբի Քուլինի, Ակաթա Քրիտտի,  
Փեռի Մէյրըն գործարանի... Նուագագոյնը ամիս մը կը տեւէ՝ մինչեւ որ մե-  
քենագրեմ Վիրքս» :

«Կրնա՞ք ինծի քանի մը բառով պատմել Հանգոյցը... Ի՞նչ էր խորա-  
գիրը» :

«Մտի դիտեցի՞ն մէջ» : Չափազանց խրթին է : Տեղի կ'ունենան բազմա-  
թիւ ոճերներ եւ մէկ վերջնական աղէտ (Յովհաննու Յայտնութեան նման),  
փոխանակ յոտակ լուծումի մը : Վայրը սպանական զղեակ մըն է՝ բազմա-  
թիւ գաղտնի սենեակներով : Միջազգային գիտական համագումար մը տեղի  
կ'ունենայ : Առաջին զլուխին մէջ, երկրաբան մը կը յայտնէ, որ զղեակը կա-  
ռուցուած է մարած հրաբուխի մը վրայ, մինչ զուրս կու գայ վերջին զլու-  
խին, որ հրաբուխը այդքան ալ մարած չէր, ինչպէս երկրաբանը հաւատա-  
ցուցած էր ներկաներուն» :

«Ուրիմ տան ծառայողը չէ, որ կը գործէ ոճերը, ինչպէս առհասա-  
րակ տեղի կ'ունենայ» :

«Իմ գիրքերէս ոչ մէկուն մէջ տան ծառան կը կատարէ ոճերը, — կ'ը-  
սէ վերաւորուած, — եւ քանի որ քիչիչներու մասին կը խօսինք, թերեւս պէտք  
է զուշացնեմ քեզ, որ ես մէկդի նետած եմ կարգ մը հասարակ դարձած,  
ամենաղէտ, ամենազօր տիպարներ — յանդուգն գաղտնի ոստիկանը, որ կը  
պատկանի Քանըն Տոյլ-Համըթ-Չանսլըր-Քէյն-Ֆլեմինկ դպրոցին» :

«Ո՛չ ծառաներ, ո՛չ դաղտնի ոստիկաններ», ըսի քիչ մը յուսախաբ :

«Գաղանի սատիկաններ՝ երբեմն, բայց դերմարդեր՝ երբեք»:  
 «Կեցիք պահ մը, մինչև այս վայրկեան ինձի երբեք թուացած չէք,  
 որ Շէրլոք Հոմզ կրնար սունական մոլեռանդութեան ախտանիշ մը ըլլալ»:  
 «Հաճոյք չիմ առնեք... ինչպէս կ'ըսէք... մեռած ձի մը մտրակելուն  
 մէջ»:

«Մտրակե՛ր»:

«Ինչ որ է՝ Բայց քանի որ խօսքը բերիք, յայտնեմ ձեզի, որ դործա-  
 կիցներէս մէկը, մեծագոյն հեղինակութիւնը դոյապաշտական հոգեվերլուծ-  
 ման՝ Պիլճիքայի մէջ, Տոքթ. Պիէն, Տոքթ. Լ. Ս. Պիէն, վերջերս լոյս բն-  
 ծայց խիստ խնամուած եւ փաստացի ուսումնասիրութիւն մը, ուր անա-  
 սարկիլլօրէն կ'ը փաստէ, որ քու Շէրլոք Հոմզի անհատականութեան մէջ  
 ծիսահոսականութեան գորաւոր տարր մը կայ»:

«Զարմանալի»:

«Հոն է, սեւով ճերմակի վրայ»:

Ըսի, որ մեր այս խօսակցութիւնը ինձի համար շատ շահեկան եղաւ  
 եւ խոստացայ, որ պիտի կտրուայի իր բոլոր գործերը:

«Կը յուսամ, որ կը սիրէք», ըսաւ:

«Վստահ եմ», ըսի եւ հարցուցի, թէ ինչ էր իր ծածկանունը:

«Մ'ը մէկը», ըսաւ:

«Փանի՞ հաս ունիք»:

«Զարտ, «ինչ... ձան Պէքտալը, Կորթոն Տէյլիոն, Բազըթ Տիարի՛հ,  
 Տէյլիոն Սէյնս Ճան»...

«Հարցում մը, ընդմիջեցի»:

«Հասկցայ, պատասխանեմ: Հրատարակչիս կարծիքն ալ է, որ ասի-  
 կա այր մարդու մարզ մըն է»:

«Ըսե՛լ կ'ուզէք, մոլեռանդ արու խողի մը, ինչպէս կ'ըսեն հիմա»:

«Ճիշդ: Այն տարբերութեամբ, որ հրատարակչիս պատահամբ կին  
 մըն է: Համարիմ եմ սակայն, որ մոլեռանդ արու, եւսլի, ըլլալու համար,  
 պէտք չկայ անպայման այր ըլլալ»:

Վաղը առտու, ըսի, առաջին դործս պիտի ըլլայ զոննչ իր դիրքերը  
 հանրային զբաղարանի մէջ: Եթէ սպասած են կամ դուրս արուած, այն պա-  
 րագային կ'ապարհեմ: Կրկին անգամ հարցուցի իր ծածկանուններու մասին  
 եւ մի քանին գրեցի նուագահանդէսի յայտագրին վրայ:

«Պէտք չունիք այդ մանձրոյթը անելու, — ըսաւ ինչպիսով, — ես  
 հետ մը կը արամադրեմ ձեզի, նուագահանդէսէն հաք: Նմոյշ մը: Եթէ կար-  
 դաք եւ սիրէք, այն ատեն ուրախ պիտի ըլլամ բոլոր շարքը տալու»:

Նուագահանդէսէն հաք, զինք տուն տարի: Ձիւ ներս հրաւիրեց: Մուրճ  
 եւ հնդկական շաղանակ: Կրկին խօսակցութիւն Պախի եւ Պերլիոզի մասին:  
 Անսպաս աղբիւր էր երկուքի մասին, մանաւանդ՝ Պերլիոզի, որ կը կոչէր  
 իր վերջին գիւար եւ ներկայ կիրքը. «Մը նուագախումբը զմայլելի է: Երա-  
 սընտութեան պատմութեան մէջ չկայ աչինչ, որ կարենայ բաղդատուել իր  
 պոթկայտը եւ սասանայական եասնդին: Պերլիոզէն դատ միւս բոլորը —  
 Մայէր, Պրուքըր, Շթրաուս, Սիպիլիուս — խոշոր, ծանր եւ բարձրաձայն  
 կը թուին»:

Երբ իր սիկարէթները վերջացան, առաջարկեցի իմ սիկարէտներէս հաս  
 մը: Ինչաւ չէր ծիսած եւ ծխելու եղանակի մասին ցուցմունքներ ուղեց: Չեռ-  
 քերը կը գողային, երբ լուցկի մը վառեցի եւ բոցը մօտեցուցի սիկարտի ծայ-  
 րին:

«Առաջին անգամ սիկառ ծխելուս համար է՞», ըսաւ։

Երգապնակներու անսպառ հաւաքածոյ մը ունէր։ Պախ եւ Պերլիոզ նը-  
ւապեց, թեւերը պլխուն ետեւ հանդէպնելով, աչքերը փակ՝ խորունկ մտա-  
սեւեռումի մէջ, սրունքները երկարած ցած սեղանին վրայ, ունկնդրեց երա-  
մըլտութիւնը, յաճախակի գիտողութիւններ ընելով որոշ մտասերու եւ զոր-  
ծիքային մանրամասնութիւններու մասին, Պերլիոզի եզակի բաղադրութեան,  
որ կը միացնէր վայրազը եւ վայելչազեղը։ Վայելչազեղութիւն մը, — դի-  
տել սուաւ, — որ ոչինչ ունի Հայտնի կամ Մոցարդի բարձր-գասային եւ  
իզացած վայելչազեղութեան հետ։ Պերլիոզը բացայայտօրէն առնական էր,  
օժտուած տարերային, անսպառ ստեղծագործական զօրութեամբ, եւայլն,  
եւայլն։

Հազիւ թէ զարմացաւ, երբ մեղծօրէն Համբուրցի դինք։ «Ի՞նչ հարկ  
կայ փճացնել գեղեցիկ բարեկամութիւն մը», ըսաւ։ Զուապ, հանդարտ եւ  
պազարիւն էր։ Ես բորբոքած էի։ Համբուրցի մերկ թեւը։ Հրամցուց բե-  
րանր։ Որմէ ետք, գործի անցանք։ Մրադրութիւն մը։ Ամէն ինչի մէջ, որ  
պիտի հետեւէր, ինք միշտ մնաց մեկուսի եւ կրաւորական, պինդ կերպով  
կոնկուած եւ սեղմուած։ Պէտք էի կազանօմայի եւ Հուսինի տազանդները  
ունենալ։ Դիւրին գործ չէր։ Հաւանաբար իր գղեթտէն, շապիկէն եւ սեղմի-  
րանէն մասեր պատեցի։ Միշտ կրաւորական, կարծր, քարեղէն արձանի մը  
նման, անհազորդ այն մթին, վայրազ պերլիոզեան ուժերուն, որ արթնցու-  
ցած էր մէջս — միապաղաղ ձայնով արանջաց, թէ որքան շփոթած էր իմ  
անսպասելի վերաբերումիս պատճառով։

Կենաքիս մէջ չէի հանդիպած մէկու մը, որ աւելի նուազ այլայլած ըլ-  
լար։ Եւ կենաքիս մէջ չէի հանդիպած մէկու մը, որ այսքան բառերու մտա-  
սեւեռում ունենար։

«Եթէ դիտնայի, որ այսպէս պիտի վերաբերուիս, ներս չէի հրաւիրեր,  
— ըսաւ, — կը կարծէի, որ անկեղծօրէն կը փափաքէիր մտաւորական խո-  
սակցութիւն մը ունենալ հետս, եւ ոչ... այսպիսի բան մը։ Զիս բողբոջին  
յուսախար ըրիք, շրտելու համար, որ վերաւորեցիր եւ ցաւուցիր զիս։ Եր-  
բնք այս կերպով վարուած չեն հետս։ Կ'ըմբռնե՞ս, որ մինչեւ իսկ պատշաճ  
կերպով իրարու ներկայացուած իսկ չենք։ Անունդ իսկ չեմ գիտեր։ Կ'ուզեմ,  
որ գիտնաս... Լսէ՛, կ'ուզեմ որ գիտնաս... Զիս մտիկ չես ընէր... Իմ սո-  
վորութիւններէս մէկը չէ անկողին ցատկել մէկու մը հետ, որուն ծանօթու-  
ցած իսկ չեմ գէտ։ Այո օրերս շատ կը լռենք սեռային յեղափոխութեան մա-  
սին, բայց ասիկա քիչ մը խնդիրը շատ առաջ տանիլ է, այնպէս չէ՞։ Ահա-  
ւասիկ, անկողինն ենք եւ չեմ իսկ գիտեր, թէ ո՞վ ես կամ ի՞նչ կ'ընես, ուր-  
կէ կու գաս։ Ինչո՞ւ կ'ուզես ունենալ զիս, ըսէ՛, խնդրեմ։ Անկողին մէջ է, որ  
կը սկսին աղեղ անհամաձայնութիւնները, մէճերը, տարակարծութիւնները,  
ատելութիւնը... Չկարծես որ հին գլուխ մըն եմ։ Վերաբերումս դէպի սէ-  
րը... Պէտք է ըսէի՝ սեռը. ո՞ր ինքզինք յարզող էակը այսօր կընայ սիրոյ  
մասին խօսիլ, առանց ծիծաղելիօրէն հին գլուխ թուալու։ — Իմ վերաբե-  
րումը դէպի սեռը պատահական է կամ նեղմիտ, նայած պարագային։ Երբ եր-  
կու էակներ կը սիրեն իրար, երկինքն է սահմանը, մինչեւ իսկ եթէ գինը  
զժոխքն է։ Ամէն ինչ պէտք է թոյլատրուի սիրողներու։ Օրէնքներ, կրօնա-  
կան սահմանափակումներ, սովորութիւններ, բոլորը, կը վերածուին յիմար  
նախապաշարումներու։ Երբ, սակայն, երկու էակներ իրարու հանդէպ սէր  
չունին եւ անկողին կը մտնեն միայն զգայնութեան համար, այդ պարագա-

յին, կը կարծեմ, որ ինքզինքնին կը վարկաբեկեն՝ կենդանիներու աստիճանին իջնելով: Մարդիկ կան — եւ ես անձնագէտ կը ճանչնամ մէկ քանին — որոնք կարծես կ'իշխարականան նոր սեռային շփումի մը զիմաց: Շեշտը քանակի, թուահամարներու, նոր փորձառութեան, զուտ մեքենականութեան եւ անմիջական սուրճի վրայ է: Նման մարդիկ, որ ամբարտաւանութեամբ կը դատապարտեն մեքենային անմարդկայնացնող սպռանալիքը, առանց ըմբռնելու, որ իրենք զգեցած են մեքենականութեան կերպին ու եղանակը: Երեսխաներ, որ նոր խաղալիքներով կը խաղան՝ զանոնք կը յիշեցնեն: Երեսխաներ — ցուցամոլականութեան տարր մը կայ, սիրելիւ մարմաջ, կարծես մարդ էակը նամականիչ ըլլար եւ սիրելը նամականիչ հաւաքելու նման քմայք մը: Թերեւս արդի աստիճանաշափերով եւ մաքրակրօն մըն եմ եւ ժամանակափոխի մը...»:

Շարունակեց անխել խօսիլ, ի միջի այլոց, խօսակցութեան վախճանի մասին՝ իբրեւ զեղարուեստակոն ձեւի մը, օտարացման մասին, երկասացութեան մասին: Ինչո՞ւ համայ արդեօք, անոնք՝ որ կը խօսին օտարացման մասին, իրենք ինքզինքնին կ'օտարացնեն: Եւ անոնք՝ որ երկասացութիւն կը քարոզեն, կը յանդիմանեն իրարմէն:

«Ամէն մարդ կամաճայն է, որ, ստայժմ, խօսակցութիւնը իբրեւ արուեստի ձեւ մը մեռած է, — ըսաւ, — այս իրողութեան զիտակից դարձայ այս գիշեր: Վերջին մէկ-երկու ժամուան ընթացքին հաղիւ բառ մը արտասանեցիք: Եթէ մէկը զազանի մտիկ ընէր, պիտի կարծէր, որ ես այն տխմար կիներէն եմ, որոնք անհատնում խօսակցութիւն մը կ'ունենան իրենք իրենց կամ իրենց նման խանգարուած երեսակցութեամբ արարածներու հետ: Բա՛ն մը բռնէ»:

Կը յիշեմ օտարամօրէն, որ տեղ մը նկատեց, որ խօսակցութեան մաշը արուեստի ձեւ մը որակելուն պատճառը դէրտօտն Մարլոն Պրանսոն էր, զոր շնորհալի անասուն մըս կը կոչէր:

«...Շնորհալի անասուն մը, որ վերջերս ընկերային խղճմտանք մը զգեցաւ: Թէեւ, ամենայն համեստութեամբ, չկրցայ թափանցել իր վերջին երկու Փիլիմերու պատգամին, որոնցմէ մէկը կը պանծացնէ կէնկըստիովը, եւ միւսը՝ Վերջին քանկոն, պոստիկալութիւնը: Թերեւս դուն աւելի հմուտ ես անհետեւներ լուծելու մէջ, եթէ ճիշդ եմ, խնդրեմ, ինծի բացատրէ այդ երկու Փիլիմերուն իմաստը կամ պատգամը...»:

Շարունակեց, շարունակեց խօսիլ, զործածելով բառեր, զորս մինչեւ այն ատեն հանդիպած էի միայն պիւրքերու կամ ակատեմիք պարբերութեան մէջ: Եղաւ պահ մը, երբ կարծեցի, թէ օտար լեզուով մը կը խօսէր: Այդ էր պատճառը, որ հարցուցի՝ թէ սվախիլի կը խօսէ՞ր:

«Ո՛յ, — ըսաւ, — բայց, գիտեմ մէկը որ կը խօսի»:

Դուրս եկաւ, որ այդ մէկը յայտնի լեզուարան մըն էր, իր աշակերտներէն մէկը, ափրօ-ամերիկացի, Տրնանկի եւ Պլէյքրօի վեթերան մը: Մեր զազարներէն մէկուն միջոցին յայտնեց, որ իր սիրահարն էր: Այս իրողութիւնը անմիջապէս մեկնարանեցի իբրեւ իր նպատառ ազատական դասին եւ ամենանպատակալարմար կերպը միացնելու գործը հանձնարի, եւ հանձնար՝ զազափարարտնութեան:

«Շատեր գիտ կը գիտեն յուսախարութեամբ, — ընդունեց, — բայց ինծի համար սկզբունքի հարց է — իմ առաջին պատուիրանը՝ եթէ կ'ուզես — երբեք թոյլ չտալ, որ արտաքին ճնշումներ միջամտեն իմ ներքին, անձնա-

կան կեանքիս: Կր Հաւատամ ժարդկային արժանապատուութեան եւ ազա-  
տութեան — ինքնորոշման՝ աւելի լաւ բառ մըն է: Ազատութիւնը յաճախ  
զատարանք մըն է, մինչ ինքնորոշումը կ'ենթադրէ խղճմտանք եւ զործօն մաս-  
նակցութիւն: Ոմանց աչքին, ասիկա զիտ անխիանական եւ անաստուած Հա-  
մայնափար կը դարձնէ: Կ'ընդունիմ ամբաստանութիւնը: Թօռելով մէկ այլ  
պատուիրանի մասին... մինչեւ իսկ եկեղեցին սեռային յարաբերութիւնը  
միշտ մեղք չի նկատեր: Փոխադարձ սիրոյ եւ յարգանքի արտայայտութիւն  
մըն է, պատճառ չկայ, որ անբարոյական կամ շար նկատուի:

Եւ երբ դիտել տուի, որ ամէն սեռային յարաբերութիւն ամուսնութե-  
նէ դուրս՝ մեղաւոր կը նկատուի եկեղեցւոյ կողմէ, ինծի խորհուրդ տուաւ,  
որ չիմ պոյն-սփառարի բարոյադիտութիւնս՝ ներմտնուած ահառ ուղեղնե-  
րու մէջ, խիստ ու երկաթեայ օրէնքներով:

«Սեռային յարաբերութիւնը, — ըսաւ, — ուտելու կամ դաւաթ մը  
լուր խմելու նման Հիմնականօրէն կենսաբանական ակտ մըն է, ո՛չ բարոյա-  
կան, ո՛չ անբարոյական՝ քստ էութեան, այլ միայն ապարարոյ»:

Տէ՛ր Աստուած... քաղցեմութիւնը ո՛չ միայն աշխարհը կը յարմո-  
րեցնէ իր պէտքերուն, այլև՝ Աստուած: Աղքատները մեծցած են արեւմտեան,  
որ մեղաւոր կը զգան, երբ անմեղ են. Հարուստները՝ անմեղ, մինչև իսկ երբ  
զժողովի յափ րանցաւոր են:

Թօռելով իր ափրօ-ամերիկացի, բազմալեզուական սիրահարի մասին, ը-  
սաւ, որ ամուսնութիւնը բնաւ խնդրոյ տարակայ չէր:

«Մայրն է, կը հասկնաս: Կ'ուզէ, որ ես ալ լոյսը տեսնեմ: Ինչ որ ան-  
հեթեթ է: Ես կրօնքս ուրացայ, երբ տասներկու տարու էի: Ատիկա չըրի նոր  
կրօն մը որդեգրելու, չըսելու Համար՝ նուազ պաշտպանեցի շարք մը նախա-  
պաշարութիւններու եւ ստասպելներու: Այնուամենայնիւ, կը սիրեմ դիմք»:

«Անշուշտ փոխադարձաբար»:

«Անշուշտ: Եւ քանի որ սիրոյ մասին է խօսքը, թոյլ տուր յայտնել զե-  
ղի, որ չեմ սիրեր — եւ կը դիտակցիմ այն իրողութեան, որ դուն ամենա-  
զոյզն կարեւորութիւնն իսկ չես տար ինծի — բայց թոյլ կու տամ, որ սի-  
րես զիտ, որովհետեւ ես չփութեմ եմ եւ կորսուած, ինչպէս դուն»:

Կ'ընամ Հանդուրժել որոշ յիմարութեան, բայց ասիկա քիչ մը շատ էր:  
Իրեն յայտնեցի, որ իրեն Հեռ սեռային յարաբերութեան մէջ էի, որովհե-  
տեւ անհուն հաճոյք կ'տանէի: Թէեւ երգիծական զգացումը չէ, որ կը պակ-  
սէր իրեն, ասիկայն անկողնի մէջ քիչ մը մեղմաբարձ էր: Կարծես կը տա-  
ռապէր Տոսթոյեւսկեան մթին խոտիքէ մը: Եւ անկողինը միակ տեղն է, ուր  
եւ անդիմադրելիօրէն կը տարուիմ Հապիտի մը նման վարուելու:

Թօռելով կրօնքներու մասին, ըսաւ. «Եթէ երբեք որոշեմ կրօնս փո-  
խել, պիտի ուզէի պուտոյական ըլլալ, որովհետեւ պուտոյականութիւնը  
միակ կրօնն է, որ ո՛չ միայն Հանդուրժողութիւն կը զարոզէ, այլևս զայն կը  
զործադրէ: Եւ մարդու կողմէ յղացուած միակ կրօնն է, որ կ'անտեսէ դո-  
յութիւնը մենատիրական, ամենազօր, Հայրական Հակի մը, միջոցին մէջ»:

«Ըսել կ'ուզես՝ երկինքի»:

«Երկինքի մէջ: Իմ անպիտան կրօնայ աղքատ լաւ չըլլալ, բայց դիտեմ  
տարբերութիւնը միջոցի եւ երկինքի միջեւ»:

«Ուրախ եմ, տիկին»:

«Օրիորդ»:

«Ներքեցէք: Ձեր տիպիքէնը շատ լաւ է, օրինորդ»:  
«Շատ առատածեռն էք»:  
«Համաձայն չեմ: Ոչ առատաձեռն, այլ՝ ճշգրիտ: Բայց կը համաձայնիմ  
ամէն ինչի, որ ըսիր պուտտայականութեան մասին: Կը յիշեմ, անգամ մը  
կարդայէ ետք Գ. Տ. Աուղուքիի գիրքը, ուզեցի Ձէն պուտտայական վանա-  
կան մը դառնալ»:  
«Ի՞նչ մը»:  
«Լսեցի՞ր դիտ»:  
«Վաստէ չեմ, նորէն ըսէ, խնդրեմ»:  
«Ձէն պուտտայական վանական մը»:  
«Ի՞նչ»:  
«Այո»:  
«Ձէն պուտտայական մը...», — կրկնեց խնդալով: Ուզեցի հասկնալ,  
թէ ծիծաղելի ինչ կար:  
«Ձեմ հաւատար: Անպայման կտասկ կ'ընես...»:  
Նոր խնդուք:  
«Կատակ չեմ ընէր», պնդեցի:  
«Impossible... Incroyable... Cela me depasse... Mais non... Voyons  
donc... Mon petit cochon insatiable... Un Buddhist moine...  
Ça c'est drôle... ça c'est impayable...  
«Անպիքէն խօսէ»:  
«Կ'ըսէի որ...»  
Խնդուք:  
«Շարունակէ, խնդրեմ»:  
«Այդքան հանդիսաւոր մի ըլլար: Կ'ըսէի, որ... Շատ կը ցաւիմ...  
Կ'ըսէի, որ դուն շատ դուարձալի ես...»:  
Անգամ մը դանդաղեցաւ, որ ես շատ գործօն էի:  
«Ինչո՞ւ այդքան գործօն ես... այդքա՞ն...»  
«Գործօ՞ն: Ի՞նչ ըսել կ'ուզես»:  
«Այդքան... միակողմանի... այդքա՞ն...»  
«Միակողմանի ինչի՞ նկատմամբ»:  
«Գիտես ինչ ըսել կ'ուզեմ»:  
«Քեզի պէս գուշակութիւն խաղալու մէջ լաւ չեմ»:  
«Շատ լաւ գիտես, թէ ինչ ըսել կ'ուզեմ»:  
Հարցազնդման մէջ հասկցայ, որ տարփոտ ըսել կ'ուզէր: Ըսի, որ ին-  
ծի կը յիշեցնէր առաջին սէրս — ինչպէս կրնայի իրեն ըսել, որ կը փորձէի  
կորսուած ժամանակը վերազտնել»:  
«Ի՞նչ անոր մասին», ըսաւ:  
«Ակոնելու համար, քեզի պէս թաւ ջուրիակաւոր էր»:  
«Ուրի՞շ»:  
«Ձրանսացի էր»:  
«Եւ քնաւ իրեն մօտեցա՞ր, ինչպէս ինծի»:  
«Բաւական մտերիմ էինք, բայց այդքան առաջ չգացինք»:  
«Եւ յուսահատօրէն, տարփանքով սիրահարա՞ծ էիր իրեն»:  
«Այո»:  
«Եւ փոխադարձաբար»:

«Այդ տպաւորութեան տակ էի, մինչեւ այն օրը, երբ որոշեց ուրիշ մը հետ ամուսնանալ»:

«Եւ շատ դժբա՞խտ զգացիր»:

«Ուզեցի անձնապահ ըլլալ»:

«Յիէ՛ղճ Գազանովաս»:

Ատիկա առաջին անգամն էր, որ հետաքրքրութիւն ցոյց տուաւ ըսելիքիս նկատմամբ: Ուրիշ ինչ որ ըսի, մէկդի շարտեց՝ իբրեւ անմտութիւն եւ եւ պարապ խօսք: Ոչ բոլորովին փոխանակ պարզապէս ըսելու «Ըստ՞՞ղ պարապ խօսք է», կը յարէր ասոր նման բան մը: «Ատիկա բացայայտօրէն վարկածային, նախա-սխտեմացում մըն է», որ նոյն բանն էր՝ ինչպէս ըսածդ յիմարութիւն է ըսելը: Նման բազմաթիւ տարազներ ունէր — ուսուցիկ, բարձրաթոխչ նախադասութիւններ, որոնք, յետ քննութեան, ծպտուած հոմանիշներ էին ամտութեան: «Նէօ-քանթեան բանականացում», իր սիրած բացատրութիւններէն մէկն էր: Եթէ նէօ-քանթեան չէր, կարտէզեան բանականացում էր, եթէ այդ չէր՝ պէտք էր յետ-հէկէլեան իտէալիզմ ըլլար: Ի՞մ սիրածներէս մէկն էր. «Քարեկամս, դուն հաւանարար զո՞նք ես այն հասարակ խարկանքին, որ պատճառաբանութիւնը անել փողոցի մը կը վերածէ»:

Երբեք չէի կրնար երեւակայել, որ կրնայի հանդուրժել այսքան հինգած եւ անիմաստ համոզումներու: Այն աստիճան, որ երբ կէս դիշերէն ետք, կը քալէի ամայի փողոցներէն դէպի տունս, ո՛չ միայն յագնած էի, այլեւ՝ գործածութենէ զուրկ:

Անարէ Մորուս, Վիկտոր Հիւկոյի իր լրիւ եւ հեղինակաւոր կենսագրութեան մէջ, կ'ըսէ, որ Վիկտոր Հիւկօ, իր ծերութեան կը յայտարարէր, որ իրենց ամուսնութեան առաջին դիշերը, ինը անգամ ճանչցած էր իր կինը:

Քաջալերական է գիտնալ, որ կրնաս նմանութեան դիժ մը ունենալ մեծ մարդու մը հետ, որքան ալ աննշան ըլլայ նմանութեան եզրը:

ԱՐԱ ՊԱԼԵՈԶԵԱՆ



Յ. Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն

Լ Ո Ւ Ս Ա Ն Ց Ք

Անոց՝ որոնք ձկնեցան  
և արթնցան գիշերին,  
որ գիշեր չէր,  
այլ խառնարկն ձկն գարթնում ժը պարզապէս...

ՇԱՐԺՈՒՄ ԱՌԱՋԻՆ

Լայսը կ'իյնայ ճաքած, հիւքեղ,  
կը հոսի հաւում (ակունքէն  
բխած՝ գետ յիշողութեան)  
Կը սպրդի, կը սահի,  
ինչպէս եին մեղքը բասր  
մեծաստանի տնաւորումն մեզ  
լուսանցէն...

Եւ բառերը  
կերպարային բանտումն դարս  
ժայթկելով՝

Էտքին մը ընտրուած  
կը դրսեւորեն տակաւ:

Կին մը՝ եօթը դէմքերով,  
իր թեւերու շատուանէն  
առեւանգըւած մարմինին  
մերստառը կը բանայ...

ՇԱՐԺՈՒՄ ԵՐԿՐՈՐԿ

Բանի հագար տարի է,  
կ'ապրիմ մարմինն մէջ այս մեռած.

Եւ ճայն մը, որ գէթ ինծի  
այդքան ծանօթ պէտք է ըլլար,  
ոչինչ կրնայ հաւաքել  
իմ միտքէն, իմ արիւնէն, մտքերէն...  
Մերք «առանձին-գայլ» մը տխուր,  
հոսանքներու ազդեցութեան տակ  
մերկակ՝

կ'երթայ յօշոտել ինչ որ կը գտնէ,  
աշխարհէն դարսի  
օտար-իրական.

ապա կու գայ քայքայուելու  
եւ մնալու ինքն իր մէջ:  
Ինչ որ անցեալ էր հարուստ,  
քարացած է մերկային մէջ  
ան-պիտան:

Ատողերու տակ կախարդանքն է  
գիշերուան,

վայրի կշռոյթը արեան,  
պէտք է մեկնիլ  
նար երկինքի երկրի՞ն միջեւ  
քափառելու:

ՇԱՐԺՈՒՄ ԵՐՐՈՐԿ

Ի՞նչեքու մէջ առաւօտ.

վերադարձ՝ նեղ կածաններէն  
սաքէ, հուժկու ճիւղերու վրայ:  
Սմբակներուն տակ կը թափին  
այրած հողեր

Եւ մարմիններ:

Վերաւո՛ր իմ աչք,

թեւծումէն իմ ջրային  
ապակիէ լոռիքիւնը կը նաթառի:

Լուսանցքէն դուրս,  
հաղափներէն փրկուած՝  
կը թարտայ կերպարը:  
Քու չէգո՛ք, հայր լուսեփնէն  
կ'անցնիս երկիրը մեզի:

ՇԱՐՃՈՒՄ ԶՈՐՐՈՐԴ

Արեւին տակ  
հարանձաներ եւ մարդիկ.  
նորաշխարհին մէջ իրենց  
— յայգերու ու պրկումի խտացումէն —  
կը նախախ  
թաց անտառը շքաճարի:

ՇԱՐՃՈՒՄ ՀԻՆԳՆԵՐՈՐԴ

Այս տիրութիւնը դարձեալ  
կը վերածուի արիւնի  
— հակառակ ար գինի չէ —:  
Ես ձուլուած եմ երկինքին:  
Կանոնչ անտառն եմ:  
Բարձունքները ձիւնաշուրթ,  
աչքով ձիւնէ ու ծիրանի  
Հիմնային:  
Կամ այն մշուշը, որ կը ճօրանայ  
առուօտեան ծամերում  
Եւ կը մատնէ  
բոլորը, որ ինկած են  
հազա՛քի հիմ փողոցներում:  
Միջերկրակամեան խոնարութիւնը  
կը թափանցէ սակարմերուս. ադի համ է  
ու մեկնումի պատրաստ եմ.

կազմաւորուող հագելիճակ փերեզակի:  
Լորքան տեղ մը կը մնջէ անթայ:  
Դեռ պատտառը Տալիի՝ Գրիստառը  
խաչափայտին — Թառամած միսեր...

Հիմա, անդադար, կարծես կը փոխուիմք.  
չեմ կրնար տամիլ  
միսերու եւ էութեան  
հայհայումն այս ճար...

ՇԱՐՃՈՒՄ ՎԵՑԵՐՈՐԴ

Սաղարթները կռիկատելով  
կը շրջէր մերկ աղջիկը:  
Ես կը բերեմ աշխարհը իր աչքերում,  
մաքուր երկիրը՝ անձրեւէն ետք,  
Եւ կիսաթթուն առուօտեան մեղեդին,  
որ մշուշին մէջ կը լողայ՝  
օճապտայտ փողոցներում աղբատներու...

Ելելուան բոլոր  
զոյցնութեան, անձնութիւններէն,  
ու ձանձրոյթէն ետք՝  
դարձեալ կը բացուի  
հասն առաջին  
Եւ անտառը մանուշակի:

Այս երկիրը բարի է.  
տակաւ կը ծնի  
փորձութիւնը ինքնազնջումի...

ՇԱՐՃՈՒՄ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Անթոննե Արթամ,  
հաղցկեղ արեան մէջ՝  
հեռու վայրեր կը շրջի:

Օ՛, ցաւատանց մարմինը,  
ուր ծաղկող բերք երկինքներ  
ու բունաւոր մեխակներ

Խորհրդաւոր առաջարկներ կը կատարեն  
մեկեւեմի...

Կազարդական բռնաբռու  
ագրեցութեան տակ կանաչ՝  
ծալապատիկ կը մատի-  
արշալոյսը իր ցաւերը լուացած է  
նր միտքը քրվեծներ են,  
որ կը հասին, կը խօսին՝  
— Առէ՛ք, կերէ՛ք, այս է մարմինն իմ...  
կրկին արեւն է բոսոր,  
որ հեքամա  
խողխողած ցուլի արիւն կը ժայթփէ-

Անքոնեն Արթոն,  
մարմնով իր ծարաւ՝  
հիւքեղ լոյսը կը խմէ...

ՇԱՐՃՈՒՄ ՈՒԹԵՐՈՐԳ

Նեղ լուսանցէն,

ուր կանգնած ես,  
լոյս կը մազուի

սհա կ'արթննան  
կերպարները ջնջուած  
նր կ'անուանուին  
կարուելու համար կարծես  
սպակիին մէջ ցերեկի:  
Լոյսը իրերն անուանող  
ճան կը սպաննէ:  
Գիտակցութեան լուսարձակէն տեսլի  
լուսանցին մէջ կը քաշուիս,  
ուր խոնար  
երկիրն է խաւարի-

բայց լուսանցէն է,  
որ լոյսը կ'իյնայ:  
Եթէ կամուրջ ես շողի՝  
շրթումքնորդ պիտի անվերջ արիւնիմ...

ՅԱՐՈՒԹԻՆ ՊԵՊԵՐԵԱՆ

Ա. Ն. Զ Ա Ր Ի Ո Ւ Տ Ե Ա Ն

ՄԵՆՔ ԵՐԳԵԼՈՎ ՏԵՄԵԼ ՈՒՋԵՑԻՆՔ ՄԵՐ ԼՈՅԱԸ...

Երգը կը նուազի, կը նուազի եւ կը մեռնի... Աւելորդ սեւեռած պատի իւզանկարին՝ կը ժպտիս: Աղիողորմ ճիւղեր կը լսուին վարի փողոցէն, կատուներու մթին մլախներ, որոնց բզկտող աղմուկին ներքեւ երգը, լուս եւ անօթի՝ կը հծծէ, անզունդին մէջ ինկած ցաւազարի մը վայնասունին պէս... Ա՛յն երգը, որով ապրած էիր ամբողջ կեանքդ:

— Տէ՛ս, աղջիկ, — կը պոռաս բռնունգըդ սեղմած, — մի՛ երգեր այլևս չէ՞ս տեսներ, որ ամէն անգամ երբ երգես, արցունքէդ մաս մը կը խառնուի երգիդ, կը միանայ, կ'ըլլայ մարմին, փնցող, դէպի զերեզմանները տանող, զարհուրելի զանգուած, արիւնող պատմութիւն, վայրագ եւ կատաղի սարկութիւն...

— Երազս չորցուց արեանս կարմիր դնդիկները, — կը փոփոխ աղջիկը յանկարծ վախցած, — տե՛ս, կեանքս անցուցի երգով, երգը սիրելով, գիտե՞ս ինչ ըսել է երգ մը սիրելի...

Եղունգները միտերուն մէջ խրած, խրչափողը՝ օդին, լայն բիբերը՝ վէրջոտ արեւին, խեղճօրէն կը ժպտի: Հիմա թերեւս երգեր եւ վերջին երգը, հիմա դուցէ՛ անհետանար խաւարը, կրկին տեսնէր երկինքին կապտար, բուժուէր շրթունքին խոշոր վէրքը: Հիմա թերեւս կտորուէր մատներուն ամենի շղթան, հիմա թերեւս ազատագրուէր...

— Ուշ է այլևս, — կը մրմնաս յոգնած, — չէ՞ս ըմբռներ, որ այգաբացը կ'ուշանայ, մոնյող բլուրները կը հեռանան մեզմէ, անծանօթ բազուկներ կը փաթթուին մեր կողերուն, անծանօթ մարդիկ կը սեղմեն մեր վիզերը: Երկայնքին պառկած երիտասարդներ կը հեռան տատապանքով. կը տեսնե՞ս այդ

դահիճի նման մարգը, որ շարունակ կեանք կը փոխէ, կը տեսնե՞ս արչալոյսները, որոնք լուս թաղուած են հող, ըսպաննուած մանուկներու նման... Անոնք այլևս պիտի չանցնին մեր ժօռէն:

Աղջիկը ահաւոր սթափոււմով կը ցըցւի դէմդ: Անոր ակունքներուն նարնջադոյն կրակը կը խառնուի հիւծախտաւոր օդի դոյրըրիին, իսկ մազերուն կրակախառն դեղինը՝ լամբին լոյսին ներքեւ, կը վերածուի թշուառ, սակայն պոռացող հրկիզումներու: Զակասը թայ է վարդադոյն քրտինքով...

— Դուն ալ ինձի պէս երգեցիր երգը, — կ'ըսէ խոպոտ ու խաւարէ՛ մայնովը, — դուն ալ սիրեցիր...

— Եթէ՛ գիտնաս թիչ մը համբերել, — կ'ըսես, ամուր բռնելով անոր բազուկներէն, — կը խորհնե՞ս, որ ես ալ չքանդուեցայ այդ երգէն... Ես ալ չբոտացայ իմ բաժինս... Ա՛ն՝ որ ինձի համար սահմանուած էր... Ա՛ն՝ որ սպաննեց սրտիդ գողտրիկ տրոփիւնները... Կը քաշուիս անկիւն մը, մոլեգին կը ճրճես այն տետրակը, որ կը դալարուի ցաւով: Ա՛յն տետրակը, որ միշտ հող է, իր անկիւնը: Ա՛յն տետրակը, որ կը շնչէ հեռոյ, որովհետեւ քու արիւնէդ է ծնած եւ քու տետրիքներէդ է աճած:

— Վ՛ալեցի պողոտաներէն, — կը դէրես շնչատպառ, — ճլուսինը հիւանդ տըղու մը պէս կը ցաւէր, անոր կիսուած բերնէն կը հոսէր արեան վախա առուակ մը: Բոունցքս ծիծերուս սեղմած՝ կը քայլէ չե՛մ դիտեր ո՛ւր: Անցայ Ա՛յն Միշնէն: Պիսթրոտները լեցուն էին, աղջիկները կը ծխէին անդադար, իրենց կրակէ դունչերը սեղմած տրտում ափերուն ներքեւ: Տղաք, մոռայլ բիբերով՝ կը զննէին անցորդները եւ իրենց դողացող լրթունք

ները կը թաթխէին դիմի կամ զարեջուրի դասաթններուն մէջ: Գիշերը՝ երջանիկ մարդու մը խարաղանուած ժպտին կը նմանէր: Քայլերս ուղղեցի նստած աղջիկներէն մէկուն կողմը: Մինակ էր: Դեղին մատները փաթթած էր սիկատի մը սյացիկ պարանոցին, իսկ իր վտիտ պարանոցը ճմլուած ծաղիկի մը կոթին պէս կը աքարտէ:

— Այսօր տխուր եմ, — ըսի՝ պարասունս սիրերս սեւեռուած իր ծովէ նայուածքին, — Հետո եկուր, ել խօսինք մեր սիրած տղուն մասին, մեր հայրենիքին մասին, չորս, ելիր այսօր, խնդրե՛մ:

Աղջիկը լուռ ու շուտաւ՝ կը ժրպտէր, կը ժպտէր...

— Ձե՛ս դար, — պոռայ դրեթէ, — շե՛ս տեսներ այսօրուս դեղնախաւն կանանչը, կղահիս տկարութիւնը: Հորեղոններս ջախջախուած են երազներու ծանրութենէն, իսկ կուրծքս կը շողայ վայրկեաններու ցաւագար արշաւներէն: Այլ՛ի, Հիմա լուսինը կը մեռնի:

Աղջիկը մատով ցոյց տուաւ քովի աթոռը:

— Գիտե՛ս, — ըսաւ դանօրէն, — ե՛ս ալ խմած եմ երազներէ հոսոյ թուրուար արիւնը: Ե՛ս ալ հեռացած եմ գեհեններէս... Ինչո՛ւ, ինչո՛ւ եկար:

— Տե՛ս, — գոռացի՛ փայփայելով անոր վարդազօյն թարթիչները, — սիրած աղաս կը խառնուի հայրենիքիս, կը խառնուի գետերուն, լիւններուն եւ լիճներուն: Անոր կողերէն կը հոսի պերճ եւ կարճիւր յայտնութիւններու տիեզերք մը: Անոր կառաղէ կզակը կը բունկի անվերջանալի բոցերով:

— Վերջին անգամ ինձի ոչ մէկ խօսք ըսաւ, — կ'ըսէ աղջիկը՝ պատուած ողնայարը քսելով մութ պատին, — այդպէս հեռացաւ: Իրմէ ոչինչ մնաց: Հիմա կը մտածեմ աքարել յիշատակներս, աքսորե՛լ...

Ոտքի ելանք, կ'ուղէինք քալել, անհունօրէն քալել: Մարդիկ կը նայէին մեզի: Օղջ, վտիտ տղու մը պէս՝ կը նուագէր, կը շարժարուէր եւ կը քուէր մեր ջղային սիլուէթներուն:

— Ի՞նչ է անունդ, — հարցոցի յանկարծ՝ ամշնալով ինքզինքէս:

— Օր մը, — սկսաւ կրկին աչքերը թարթել, — օր մը, ուղեցի երիտասարդութիւնս խեղդել արհերուս մէջ: Երկընցայ փողոցներու վրայ, համբուրեցի մարդոց ծակծկուած այտերէն, տեսայ աղջիկներ, որոնք իրենց փնտուտըններուն մէջէն կ'արշաւէին դէպի ահաւոր եւ անծանօթ վայրեր: Աղջիկներ, որոնց արտերէն արցունքի տեղ ջրտինք կը հոսէր միայն: Տեսայ մանուկներ, որոնք մարթերու վրայ, կիսաբաց բիբերով՝ սիրտ կարկառած էին մարդոց: Մարդոց սիրտը, օսկայն, սեղմուած էր իրենց բաց տիներուն մէջ: Այդ օրը միայն հանդիպեցայ անոր: Մէն գետի մօտ նստած, խուռն մազերը ճակտին՝ կը զբէր շտապով, հեւքով:

— Ձե՛մ ուզեր անունդ գիտնալ, — ըսաւ՝ դիտ երկար դիտելէ ետք ու ջղային ձայնով մը, — մի՛ ըսեր, նոյնն է:

Քալեցինք մայրերու վրայէն՝ բերկրութեան մը անորոյ՝ եւ երկզիմի զգայնութեան յանձնուած: Քալեցինք նոյն օրը մեռք մեռքի, խօսեցանք եւ բրտօրէն ապրեցանք բոպէներու հեւքը: Թիւղարի մը պէս՝ անդադար կը դիտէի անոր ճակատին ահօնները, բերնին սպիտակ վէրքը, կուրծքին տուայտոց մաքրութիւնը: Ուղեկորոյս երեխաներու պէս ասպրեցանք մեր վայրկեանները: Մերթ կը վախնայինք արշալոյսներէ, մերթ կը բռնէինք խաւարը մեր կուրծքին ներքեւ, մերթ կը փախչէինք արեւէն, մերթ կը կենայինք անձրեւին տակ, մեռք մեռքի, դպրոցէն խոյս տուած մանուկներու պէս:

— Գիտե՛ս, — կ'ըսէր ինձի յաճախ, — գիտե՛ս ինչու կը դրեմ, ի՞նչ կը գրեմ:

— Ոչինչ, — կ'ըսէի իրեն, — ժամանակը գերաստուածի ուժով կ'անցնի քովէդ, առանց գինովնալու կը շնչենք մահուան եւ կեանքի սերմերը, ա՛յն սերմերը, որոնք փոթորիկներէ սպրդած՝ կը սպաննեն մեր վայրենի վաղբը, կը ճեղքեն մեր բարբարոս արշաւը:

— Գո՛ւն ալ երազով կ'ապրես, — կ'ըսէր՝ թաց ճակատը քսելով արհերուս,

— զո՞ւն ալ Հայրենիք կը փնտռես :  
 Երէկ առտու, Հեւքով կը գրէր :  
 — Մօրդ համա՞կն է, — Հարցուցի՝  
 ճաթած ճայնով :

Գիտէի, գիտէի, որ երբեք իր Հեռա-  
 տը մօրը չէր գրեր : Երկար գիտեցի վի-  
 գին կորուսիւնը : Մատները ջաշերու պէս  
 կ'այրէին : Ճակատը կը փայլէր տարօր-  
 նակ փայլքով : Ա՛հ, այդ ճակատը : Կար-  
 ծես պատերազմի դաշտ մը ըլլար : Այդ  
 ճակտին վրայ նշմարեցի ծաղիկներ՝  
 փուչուսներէ շարշարուած : Տեսայ վայ-  
 րի շանթերու պայքարով սայթաքուածը :  
 Այո՛, տեսայ մութ եւ սակայն արդա-  
 ւանդ կատաղանքը իր չարութեամբ օրն-  
 րուն : Տեսայ, տեսայ ինդղուած արեւ-  
 ներ, որոնք կը տփռուէին տակաւ եւ ու-  
 րոնց Հեւքին տակ կը փնտռէր ամենագե-  
 ղեցիկ բուսէն, ամենագեղեցիկ յայտնու-  
 թիւնը, — իր կորսուած Հայրենիքը :  
 Մղձաւանջի մէջէն սարսափաւար՝ յան-  
 կարծ մտեցայ իրեն : Այո՛, կարծես օ-  
 րերէ, շտապներէ ի վեր կը գրայի այս  
 փերջը : Գիտէի, թէ պիտի չկարենայի  
 մատներու մէջէն չսահեցնել յախտնա-  
 կանութիւն մը : Գիտէի, թէ ջրհեղեղը  
 պիտի տանէր զիս դէպի յամառ արգելա-  
 փակում, դէպի տեսակ մը շղթայ, որմէ  
 այնքա պիտի չկարենայի բաժնուիլ : Ըս-  
 ած մը մտածեցի աղայիս : Չէ՞ որ շա-  
 քաթնէ՛ր շարունակ նն ապրած էր մորա-  
 թիս մէջ, կուրծքիս վրայ : Չէ՞ որ ար-  
 զանդես խորերէն զգացած էի տուալ-  
 տանքներու գրուածն ճիշդր : Մակայն  
 ուժով էի : Եղունգներս գրեթէ խրեցի մր-  
 կաններու մէջ եւ կեցայ քարացած, բի-  
 քերս սեւեռած անծանօթ կէտին :

— Պիտի մեկնիմ, — բտաւ Հան-  
 զարտ, — վերջնականապէս, կեանքը կո-  
 յանոց մըն է, սիրելիս, — շարունակեց  
 իր բարակ շրթունքները սեղմելով ակռա-  
 ներուն տակ, — տեղ մը, ուր նոցկանքը  
 մեր սիրելին է, ուր ազականութիւնն ու  
 մեր Հիանալի հրազները կը խտնուին խ-  
 րարու, կ'ըլլան ցեխանման պղտորու-  
 թիւններ, մեր շունչն իսկ կը դառնայ  
 ազտոտ գորտըղի : Չաքողենք իրաւը, տես-  
 նենք այնքա այն կեղտը, որմէ մեր գոս-

յութիւնը կը փթթի արագօրէն, ճիշդ այն  
 բոյսերուն պէս, կը շահ՞ա, աղջիկ, այն  
 անող բոյսերուն պէս որոնք հող են,  
 յուսթի դաշտերուն մէջ :

Տեսարակը կը զոգար մատներուն ներ-  
 քեւ : Հազիւ ծոկեցաւ, Համբուրեց այտե-  
 բէս եւ եկաւ ոսնդուիտներէն վար՝ այն-  
 քան արագօրէն, կարծես խոյս կու տար  
 փոխանցելի ախտէ մը :



Հիմա չես գիտեր այլեւս, թէ ինչ  
 պիտի գրես : Ե՛տքը : Պիտի գրե՞ս, թէ այդ  
 գիշեր ձեռք ձեռքի, դուն եւ այդ անծա-  
 նօթուհին, արբեցաք գինեւոտներու մէջ,  
 պիտի գրե՞ս, թէ տեսաք, այո՛, տեսաք  
 մեղկացած գիշերը, որ ջրհեղը կծկած,  
 անտանկի գարարուածներով, օդ կը հար-  
 ցէր շնչող էակներէն : Իմրող գիշերուն  
 րնթացին, անծանօթուհին չխօսեցաւ :  
 Ի՞նչ պիտի խօսէր քեզի : Թանաքի պէս գի-  
 շերը յճուականօրէն փարած էր երակնե-  
 րուն : Գուն լուս, ցանկութիւններէ, տես-  
 յանքներէ զրկուած՝ անկենդան մարմինք  
 կը քաշքշէր տեղէ տեղ, վայրէ վայր :  
 Գուն այդ կնոջ մէջ ինքզինքը տեսն-  
 էիր : Չարհուրելիօրէն իրական : Չտան-  
 ցանքէ գոտանցանք՝ բերեղը վիթխարի  
 Կորիզներն, արհամարհանքը՝ քանի մը  
 գինովի ճակատներուն, կարծած էիր մոռ-  
 նալ : Այս աղջիկը, որ դէմք է Հիմա, եւ-  
 րիշ մը, որ երդր երգեց : ար իր պսակայի  
 մատները քսեց կեանքի էջերուն, տարիշ  
 մը, որ ջուրդ է, եւ կամ՝ չէ : Ես՝ որ կը  
 չքուէի հող, հեռաւոր երկրի մը մէջ, ու-  
 յովհետեւ աւարելիքով՝ իր պատրանքը  
 յաւիտենապէս կ'ուզէ մտցնել իր երակ-  
 ներուն : Ուրիշ մը, նր մանաւանդ եւ նեղ  
 խած կեանքի մը ստիճաններէն կը քալան  
 մեղրախառն կաթը, մինչ իր շրթունքնե-  
 րուն վրայ կը դրայ ցեխախառն թոյնը՝  
 Պիղծ եւ զագիր, քամունելի երախէ մը  
 պրծած, անստոյգ խորխորաններէ վի-  
 ժած :

Այո՛, աղջիկ, երգը միւս նրգն է, որ  
 կը դողնայ արեան գեղիկները : Կը դող-  
 նայ կեանքը, կը դողնայ աղջկայ մը եւ

գեմը: Երգը, որ կը բխի Հայրենիքի մը անունով՝ կ'իյնայ Հնձուած մարդագե-  
տիներու մէջ, կոյսի մը ժպտին պէս,  
կը թռի օդին ծալքերուն ներքեւ: Եւ յե-  
տոյ կ'իյնայ սղու մը կողմա բուռնցքին  
խորքը: Սիրոյ եւ Հայրենիքի երգերը  
նոյնն են Երկուքն ալ կը փարին մեր  
ցառհոտ թոքերուն, քրկուքն ալ ցոյց կու  
տան, կը մորմոքեն մեր խաբուող միտե-  
րուն բլբլները: Երկուքն ալ ախտերու  
պէս կը մեռնին, մեր մահով, եւ եթէ...:

— Իսկ եթէ դիտանք ապրեցնել մեր  
երգը, — կը շնչայ երգչուհին երկիւ-  
ղած Ե

— Ինչպէ՞ս, ըսէ՛, ինչպէ՞ս, — կ'ըսես  
իրեն Հիասթափ, — խօսէ՛, աղջիկ, խօ-  
սէ՛, մարդիկ կաշկանդեցին կոկորդը,  
այդ Հիանալի կոկորդը, որմէ բառերը  
սասեղազարդ երկինքներու պէս տարա-  
ծուն՝ կը դարբարէին մեր խաւարը: Ինչ  
կ'երգէին, ըսէ՛, աղջիկ, ինչ էր այդ եր-  
գը, կ'երգէիր ծա՛րր մասին, քոյրերո՛ւր,  
որոնք մտիկ շէկն ընէր ընդ Բոչուծնե-  
րո՛ւն, որոնք կոկորդով կը կախարդուէին,  
յիտոյ՝ կ'իյնային իրենց պրկուած ողնա-  
յարներով, կ'երգէիր թուամորթ մարա  
դո՛ց, երգը ա՛յն մարդոց, որոնց խննչ  
դուրբարանքներուն ներքեւ կը նշմա-  
րէիր վաղամտիկ եւ յազեցած բողբոջի մը  
թնձուկը: Այո՛, սիրահարիդ կողերուն  
փարած՝ կ'երգէիր Հայրենիքին երգը: Կը  
կարծէիր բազուկներդ մէջ սեղմած ըլ-  
լալ Հայրենիքը: Ա՛յն՝ որ որ մը կորսուե-  
ցաւ Թովկերու մէջ, ճիշդ փոքրիկի մը խա-  
ղալիքին պէս: Ա՛յն փոքրիկին, որ օրեր  
յաջա իր կորսուած խաղալիքին Համար  
Անոնք յափաջած՝ աղանեցին, թալանե-  
ցին, կողոպտեցին մեր երազը: Գիտե՞ս,  
ետ աք երգեցի ո իմ երգն ալ ծաղրմեցաւ,  
քարկոծուեցաւ: Ընչը սիրած տղուս ան-  
զուգական Համբոյրին պէս՝ իմ երգս ալ  
կէս մնաց:

— Սպասենք: Դուն էիր քիչ առաջ  
զուսացորդ, Ե՛ւ կ'ըսէ երգչուհին՝ ոսկրուս  
կուրծքը խիղախօրէն դուրս ցցելով, մինչ  
այդ բռնկող բերքուն մէջ կը տեսնես  
անհուն, անսահման խաղաղատանք:  
Թերեւս կրկին գայ մեզի, մեր երկու-

քին, նոյն տղան, նոյն Հայրենիքը, որ  
որ մը կորսուեցաւ...:

Յեղձ աղջկան բերնէն լորձուներ կը  
Հոսի երգին բառերուն Հետ Կարկեցա-  
բար կ'ընկերանամ իրեն:

— «Հայրենիքն իմ սրտում...»:

Քաւարը կը բզկտուի երգով, եր-  
գէն... Այո՛, խաւարը, որով կը շնչենք:  
Քաւարին մէջէն կը նշմարեմ սթանդէթ  
ժանուկ մը, որ կուրծքին սեղմած է խո-  
ւոր, սպիտակ փայլով խաղալիք մը: Այ-  
քերս կը բանամ ցատուժով: Աստուած  
իմ, ի՞նչ է այդ բանը, այդ փոքրիկ տը-  
ղուն մասներուն մէջ, ի՞նչ է այդ գոր-  
ծիքը? Գործի՞ք է, թէ խաղալիք: Ի՞նչ է  
այդ բանը, որ կը փարատէ բերեղուն  
խաւարը:

— Դաշոյն է, — կը փսփսայ երեխան  
խաւարին մէջէն, — դաշոյն է, Հօրս դա-  
շոյնն է: Ծոզերուն յատակէն գատոյ: Ո՛ր  
մէկ ժանդ կազած է դեռ: Ես ասոր Հետ  
կ'ուզեմ խաղայ: Տեսէ՛ք, ես կրնամ նոյն-  
խակ այս դաշոյնով սպաննել խաւարը՝  
Ձեր եւ իմ խաւարը...:

Տղան, դաշոյնը ձեռքին՝ կը պարէր  
տարօրինակ պար մը, կը դարձեր գայթ  
աթ, մախ, երկինք, զեւին, վայրագորէն,  
ոգրադող Հեծեծանքով: Կը դարձեր՝ ցա-  
ւագին հոխնչներ արձակելով: Բրտութիւ-  
նը չէր յոգնեցներ իր շողշողուն մասնե-  
րուն աստուածային փայլքը: Անոր սէզ  
եւ վայելուչ ճակատէն կը Ծորէր արիւնթ  
ալեկոծ տարափ մը: Այդ տղան ուրախ  
էր կարծես, ուրտի էր այս սեճային պա-  
րին մէջ... Չէ՞ որ կը սպաննէր, կը  
սպաննէր: Կը սպաննէր ի՞նչ: Ինչո՞ւ  
մարդիկ միշտ սպաննել ուզած են լոյսը,  
փեճը՝ Քիչեր այս մանուկին պէս եւ ա՛-  
նոր նման քիչ Թարգիկ գիտցած են սպան-  
նել խաւարը եւ անոր կամայ բռնկիւնծ-  
րը, քիչերը հասկցած են, թէ թաքնու-  
միտ, ամօղուկ, Հեղզ ու խաւարէ մար-  
դոց զիտկներու քնկործերով: Կը՛ կերտ-  
ւին քաղաքներու պողպատեայ Հիմքերը:  
Կը կերտուին ժառանգաւորներու մետաղ-  
եայ սեմերը, կը կերտուի լոյսը...:

Տղան կը պարէ: Անոր մազերը ժա-

մանակին վատնումը չէին տեսներ: Հող չէ: Թող փչրուի ամէն բան, ե՛ւ ժամանակը, ե՛ւ ցատկոզ ու մեղկ թթուածինին խաւը, սա աղջկան հէք եւ ժիւր կրկորդը, որմէ հասած էին ծարաւոտ հայրենիքին երգերը: Թող փչրուի սա բանաստեղծ տղուն վե՛հ ճակատը, Թող սպաննուի անոր անաւոր ուղեղը, միայն չտեսնենք, այո՛, չտեսնենք սա խաւարին աչքերը, որոնք զահիճներու ստորին լարչանքով կը խրին երակներու խորքերը: Զտեսնենք այլեւս, որ տուն չունինք: Փողոցն ենք: Սորվեցնենք այս յիմար մարդոց եւ կիներուն, որ փողոցը սուրբ է յանախ, որ փողոցին վրայ աղտ չի կրնար ըլլալ, որ միայն մահին փնտոզ շիացած, ըստըրկամիտ, իրենց ոճիրները գաղտնի սարքող, գաղտնի ըմպող, գաղտնի փրտխողներ են, որոնք ասած են: Փողոցը մայթ չէ: Ամենամեծ աաղանդները իրենց յուզումները հաւաքած են փողոցներու հարուստ թշուառութիւններէն: Միայն փսած սրտերն ու անհոգի հոգիներն են, որ կը շփոթեն մայթը փողոցին հետ: Մայթը վտանգաւոր չէ փողոցին պէս, մայթը սահման կը ճանչնայ, մայթը կը պատասպարէ քեզ, մայթը խարդախ է, պճնուած, սահմանուած, յափուած: Փողոցը ազատ մարդոց բնակարանն է, փողոցը...

Տղան կը պարէ: Թող անհետանայ սիրած տղադ: Թող անհետանայ անոր ամէն վանկէ, ամէն բառէ ստորնութիւն եւ սաղրանք շարադրող սիրունչիներու վռհմակը: Միայն սա փողոցը միշտ ըլլայ, սա անտուն տղան իր փոքրիկ տունը շինէ, սա յոգնատանջ ծերունին իր սեղանը դնէ, սա խելակորոյս աղջիկը իր ծաղիկները ցանէ, սա նորածինը կորսընցուցած ցաւագարուհին մանուկին դադողը դետեղէ հողին մէջ, իր հողին մէջ, միայն սա հողը մե՛րը ըլլայ...

— Կը պարե՞ս, մ՛ի փոքրիկ տղայ:

Կը պարե՞ս, եւ դեռ չես դիտեր, որ դեռ քունի մէջ եղող ամբոխը իր հաշիւները կ'ընէ, թէ ամբոխը կը համրէ, կը վատնէ դիմացինին արուեստը, մեռքին եւ ուղեղին քրտինքը: Կը վատնէ ժամանակին սքանչելի գեղեցկութիւնը, կը վատնէ շարձարուող բանաստեղծին մահը, կը վատնէ իրական արուեստը: Գահին վրայ կը դետեղէ հաշիւներով ծրած, հաշիւներով մեծցած, հաշիւներով փառքի ելած, վաճառուած եւ դիմակներով զարդարուն մարդոցմէ, որոնք մ'չ իսկ բոսէ մը յոգնած են, ո՛ւ իսկ բոսէ մը կրցած են լաւը խօսիլ, լաւ գրել, լաւ մտածել մէկու մը իսկական գործին մասին:

— Կը պարե՞ս, տղայ, ի՞մ փոքրիկ երեխա, կը պարե՞ս: Կը սպաննես խաւարը եւ կամ սպաննել կ'ուզես, մինչդեռ այս ամբոխին մութ դունչը կը բուսէ, որ մենք կրկին չտեսնենք մեր լոյսը... Ա՛յն լոյսը, որուն համար տուաւ տեցանք, եւ որ չտեսնուեցաւ, չզրացուեցաւ ոչ մէկ մարդէ:

Իսկ դուն, աղջիկ, սա տղան, որ քուկդ է, ի՞մս, լոյսիւր, բոլորինն է սա տղան, որ խօսարար կը կոտի, որ անջըրպեաներէ սլքոաց, կը փնտնէ դերագոյն բարձրութիւնը, սա տղան, որ պիտի մեռնի հիմա, սրովհետեւ ան չկրցաւ դանկ իր հողը...



— Պիտի շարունակե՞ս երգել, — կ'ըսես՝ աչքերդ բանայով եւ դիտելով մթնոյտարին գորշութիւնը, — տե՛ս, փոքրիկը չի պարեր այլեւս: Յոգնեցաւ կարծես:

— Պիտի երգե՞մ, — կը պատասխանէ աղջիկը, — պիտի երգեմ, պիտի երգեմ, պիտի շարունակենք երգել, մինչեւ որ հասնինք, դաննեք մեր հողը...

ՌՐԱՔՍԻՆ. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ



Ա. Ճ Ի Ի Ղ Ե Ա Ն

**ՀՊԱՏԱԿՆԵՐՈՒ ԶԱՆԱԶԱՆՈՒՄ...**

Ճամբան  
մարդիկ կը խօսին  
նստերով  
բայց չեն լսեր զիրար .  
նստերը տկանջ չունին :

Փողոցներու փողին միայն կը լսէ  
եւ ամէն վանկի հետ  
որ կ'իյնայ վրան  
հպատակութիւն մը կը ստանայ :

Փռչին կը լսէ ճայնը նստերուն  
կ'ըմբռնէ բառերը նստերուն  
կը վերաւժէ ճրտիմէր նստերուն  
կը զգայ ձեւը նստերուն  
կը յիշէ տերը նստերուն  
եւ հետը կ'երթայ...

Իւրաքանչիւր քաղաքացիի հայրենի՛

ամէն	մէկ	անկիւն
մարդու	մէկ	երկիր
	փռչի...	

**ԱՊԱՌՆԻ ԲԱՂԱՔ**

Մարդիկ  
կը վերաշինեն իրենք զիրենք  
երկաքով...

Անոնց հագիին թեւը երկաք է,  
անոնց գինիի գաւաթը երկաք է,  
անոնց սրտերուն ճտարանը երկաք է,  
անոնց թարթիչը երկաք է,  
բերնին դուռը երկաք՝  
որ կը ծածկէ մումէ լեզուներն աւ ծանգոտած ակօաները...

Պատերն անոնց երկաք է՝  
չեն լսեր

չեն տեսներ -  
 իւրաքանչիւր տան նկուզ  
 ունի փակամբներ երկաթէ,  
 որոնց մէջ կը հասի  
 արիւն...  
 Քաղաքակրթութիւնը հովանոց մը ունի  
 երկաթէ,  
 որ կը ծածկէ քաղաքն ամբողջ  
 աստղերով պղտոր,  
 ելեկտրականութեամբ...

Երկրագունտին վրայէն  
 շատ մը բաներ սրբուած են.  
 անտառը՝ մեռած,  
 բարը՝ մեռած,  
 առուակները մեռած՝  
 ազբիւրները կը դիեցնեն  
 մահ...

Երկինքը մեռաւ,  
 — ոչ մէկ ամպ,  
 ամպերը մեռան,  
 — ոչ ալ անձրիւ,  
 ան ալ մեռաւ:

Տալաններ չկան,  
 ապաստան մահուան, — չկայ ու չկայ:

Ոչ մէկ ցերեկ  
 խնդում,  
 ոչ մէկ գիշեր  
 խուլ:

Վերասերում,  
 ծնունդ  
 չկայ,  
 այլ մահը կը նորոգուի  
 կը վերանորոգուի՝

ագաս մահ,  
 մերկ մահ,  
 սուտնց մշուշի,  
 առանց մահի,  
 բայց  
 սաք արիւնով  
 մահի.

մահի կեանքն է միայն կենդանի...  
 Ոչ մէկ իրիկում

կու գայ յետոյ .  
 ոչ մէկ յետոյ .  
 վե՞րջ ,  
 ոչ մէկ վ . . .  
           ե . . .  
           բ . . .  
           ջ . . .

### ԵՍ ԵՒ ԵՍ, ԿԱՄ՝ ԵՍ ԵՒՍ

Թէն առանձին եմ՝ ինչպէս միշտ,  
 բայց եիմա իմ եւ իմ միջեւ  
 կան ձեռքերդ . . .

Անոնց քաղցրահամութիւնը  
 կը կործանէ  
           իմ եւ սէրերուս միջեւ մնացորդ սէրը :

Ձեռքերդ գիւ կը կոչեն՝  
           — միակողմանի» :

Պիտի փորձեմ աւելի խոսեմ ըլլալ :  
           Եկուր ու տար ձեռքերդ . . .  
 Բայց կը վախճամ, որ գուն ըլլաս աւելի գուգ, քան ձեռքերդ . . .

### Ի Ն Չ Մ Է Ա Ռ Ա Ջ

Տարածութեան մէջէն թուրթին ու մատիտիս  
 անակնկալօրէն  
 դէմքդ կ'անցնի,  
 ու երբ իբր տարբ կ'ուզեմ հպիլ քեզի՝  
 թուրթն ինձմէ առաջ կ'առնէ համբոյրդ . . .

ԱՐԱՄ ՃԻՒՂԵԱՆ

Ն Ա Զ Տ Է Ր Ս Ա Ր Գ Ի Ս Ե Ա Ն

Հ Ո Ղ Ը

Հրաչ աթոռին կոթնած կը դիտէր պատուհանէն դուրս բացուող օր-  
ւան ձեւաւորումը: Որքա՛ն յորդ ու կհանքով տողորուած ներկայութիւն  
մըն էր այս արալոյսը, որ հետզհետէ կը ձուլուէր մարդոց հողիներուն հետ,  
վերջնական դառնալով հանդիպող ներկայութիւն մը, մինչ ինք, այս առաւօտ,  
բան մը կորսնցուցած մարդու մը տուայտանքով կը դիտէր շուրջը:

Ի՛նչ տարօրինակ էր մարդու հոգին, թաքնուած գետը: Վերիվայրում-  
ներով լեցուն ետ մը, որ կը տարուբերէր կեանքի ալիքներուն մէջ ու քմա-  
հածորէն կ'ուզէր իր միտքն ու մարմինը: Ու այս առտու ինք նման էր բան  
մը կորսնցուցած մարդու մը:

Մտածեց փողոցին մէջ գունաւորուող օրաթերթային աւօրեային մա-  
սին, որուն ձայնքը երթալով կը բարձրանային վեր, դէպի իր սենեակին  
բաց պատուհանը: Ենթերով ծածկուած փողոցը, իր Պուրն-համուտային ինք-  
նուրոյն ոճով, սովորական թուացող երևոյթ մը կը պարզէր Հրաչի աչքե-  
րուն: Իր կեանքը՝ դրասենեակի շոր հեռաձայնին քովէն մինչև շարժապատ-  
կերի մութ սրահը ու դրացի աղջկան ջերմ ներկայութիւնը, սկսած էր ան-  
հաղորդ դառնալ: Հրաչի մէջ սկսած էր տկարանալ սիրոյ ուժգնութիւնը եւ  
ատկութեան խորքը թեթեւցած էր: Մեռած էր հաւատքը բոլորին հանդէպ,  
փոքր թիթեռի գոյութենէն մինչև Աստուծոյ գոյութեան նկատմամբ ունե-  
ցած հաւատքը:

Եւ ինք նման էր այն աթոռին, որուն վրայ նստած էր այժմ: Չոր, ան-  
հաղորդ, անտարբեր, գոյութեան ի խնդիր պայքարելու հեռանկարէն զուրկ,  
անհորիզոն աթոռ մը, որ նուաճելիք ոչինչ ունի իր մտապատկերին մէջ, ոչ  
մէկ խոտիք իր ենթապիտակցութենէն բխող, ոչէ՛նչ, ոչի՛նչ:

Դուրս ելաւ ու փողոց իջաւ:

Գիշերը աննշաններ կը շրջէին այս թաղին մէջ, իսկ հիմա, անոնց փո-  
խարէն՝ մարդիկ թարմ ու զուարթ գէճքերով կ'երթեւեկէին՝ մտնալով գի-  
շերուան տեղոյն աննշաններուն սարսափազդու ներկայութիւնը:

Քայլեց:

Փորձեց հեռանալ ամէնօրեայ իր ճամբայէն: Այնքան ծանօթ էր ցու-  
ցափեղդկային թեթեւութիւն ներշնչող այս ճամբան, որ կ'ուզէր Հրաչին քայ-  
լերը զէպի իր միօրինակ զրասենեակը:

Փոխեց ուղղութիւնը:

Ո՛վ կը պարտադրէր իրեն այդ մէկը: Վերջ է վերջոյ իր անձին միակ  
տէքը ինք էր ու միա՛յն ինք:

Ամէնօրեայ ճամբէն հեռանալու այս անմիջական որոշումը տեսակ մը  
ինքնապատահութիւն փոխանցեց իրեն: Հեռացաւ թաղէն ու, ամէն ինչ ետին  
ձգելով՝ ինքնաշարժ մը մտաւ:

—Ո՛ր, — հարցուց վարորդը:

Հրաչ վայրկեան մը տատամեցաւ հարցումին դէմ, որ շեշտակիօրէն

կու գար մերկացնելու իր անորոշ որոշումին ինքնութիւնը ու, յանկարծ, վարորդին հարցական աչքերուն նայելով՝ պատասխանեց.

— Դէպի լեռ:

— Ո՞ր լեռը, — կրկին հարց տուաւ վարորդը, այս անգամ ամբողջական գարմանքով:

— Որեւէ լեռ, — պատասխանեց Հրաչ քրտօրէն ու գարմացաւ, թէ ինչպէ՞ս այդ բառերը զննարուեցան իր շրթներուն վրայ:

Վարորդը տակաւին գարմանքով կը դիտէր զլինք: Հրաչ չուզեց նկատել անոր գարմանքը: Ի՞նչ էր անծանօթ վարորդի մը ապշած նայուածքին արժէքը՝ բաղդատած իր կործնցուցած հաւատքին, կեանքին կառչելու եւ զայն սիրելու մեծ կիրքին շոյուածքան, բան մը կորսնցուցած մարդ մը ըլլալու տխուր իրականութիւններուն հետ:

— Այո՛, դէպի լեռ, — կրկնեց Հրաչ, այս անգամ ինքնավստահ շեշտով մը:

Ինքնաշարժը քալեց:

Պը հեռանային քաղաքէն: Հետզհետէ կը շքանային ճամբու եզրին բարձրացած շէնքերը ու կը փոխարինուէին կանաչութեամբ, կանաչ խոտերով, կանաչ ճիւղերով, կանաչ ծառերով, որոնք թարմութիւն կը փոխանցէին Հրաչին, որ ինքնաշարժի պատուհանին ղէմ նստած՝ չրթներուն մէջ չըջող ծխախոտի ծուխին հետ կը փորձէր այրել իր մտածումները:

Մերթ ընդ մերթ միայնակ տուներ կը նկատուէին հոս ու հոն: Արդէն հեռացած էր քաղաքէն ու ահաւաստիկ լեռները կը զցուէին իր ղէմ:

— Կեցի՛ր, — ըսաւ Հրաչ շտապով:

Ինքնաշարժը կեցաւ ու ինք, վար իջնալով՝ վայրկեան մը կանդ առաւ ու դիտեց շուրջը:

«Անծանօթ մարդ մը՝ անծանօթ լեռան մը փէշին կանգնած», ըսաւ Հրաչ ինքն իրեն ու ամայութիւն մը հոսեցաւ երակներուն մէջ:

Գիւղ մը կը տարածուէր իր ոտքերուն տակ: Գողտրիկ, բարի ու խաղաղ թուացող տուներ, մշակուած դաշտեր, պայծառ արեւուն առաջին քայլերը կոյս խոտերուն վրայ, ու ինք՝ ցնցոտիացած մարդ մը այդ ընդհանուր ներդաշնակութեան մէջ:

Սկսաւ քայլել դէպի մօտակայ տունը: Տարբեր հմայք մը ունէր կեանքի այդ երեսը: Կը թուէր, թէ հոս կեանքը աւելի մօտ էր իրեն, եւ ինք՝ աւելի մօտ կեանքին:

Մօտեցաւ: Մարդ մը, մերկ ոտքերը հողին մէջ մխրճած՝ փետատով կը քրքրէր հողը: Ձեռքերը կը շարժէին անբացատրելի ուժգնութեամբ ու ճակատէն հոսող թարմ քրտինքը կը շագուէր անոր ոտքին տակ խլրտացող տաք հողին հետ:

Ձգայնութիւն մը փոխանցուեցաւ Հրաչին: Արջապատի լուսթննէն ու հողի գիրկէն բարձրացող դուրսնակութեան ընդմէջէն յուշ մը եկաւ ու անցաւ իր մարմնէն եւ ծաւալեցաւ մինչեւ ենթագիտակցութիւն:

Հո՛ղը:

Հողին ուժը, անոր գոյութիւնը, խորքը, խորքէն փոխանցուող լուս ինքնավստահութիւնը, մարդկային միտքն ու հողին ամբողջացնող մնայուն մասնակիցը, ու անոր հանդէպ իր թաքուն սէրը:

Հո՛ղը:

Այդ մեծ սրբութիւնը, որ կու գայ դարերու գիրկէն, կը շնչէ անհատին մէջ, կը դառնայ կեանք, կեանք կը ներշնչէ ու ինքնավստահութեամբ

եւ Հաւատքով կը խորատուզուի դէպի Հեռաւար ապագան...

Հո'ղը:

Որուն վրայ կանգնած մարդը կը տողորուի գոյութեան իմաստի խոր գիտակցութեամբ: Այն խորութիւնը, որ ձողականութեամբ կ'իջնէ դէպի երկրագունտին գիրկը՝ ու մակերեսային յառաջխաղացքները չէզոքացնելով՝ իրեն Հեռ նսեւ քեզ կը խորացնէ...

Հո'ղը:

Գէպի յաւիտենականութիւն երկարող, անհատի ետը ամբողջացնող այդ անհրաժեշտութիւնը, որ ատարկայ ու միայն շօշափելի տարբ ըլլալէ անդին՝ դադարաւորական պաշտամունք ու անմահութեան կանչ է...

Հո'ղը:

Որ կը բանայ դուռը խոր ատելութիւններու եւ անբացատրելի սէրե-րու...

Հո'ղը:

Ուր կը խտանայ գոյութեան իմաստը: Կ'ամբողջանայ մարդուն ճեշը...

Հո'ղը...

Հո'ղը...

Հո'ղը...

Մնաց Հոն: Հողի այդ տարտղնուած պատկերին դէմ, մինչ իր դիմաց կը պատկերանար արտրեան: Յիշեց սենեակին պատուհանէն դուրս տարածուած գիշերուան մթութիւնը, ուրկէ կարելի էր զգալ փողոցին մէջ թափառող առնէտներու ստեղծած բարձունքը, եւ առաւօտը, որ կը բացուէր, մոռացութեան տալով այդ բոլորը, ու մարդիկ, որոնք Հոն կ'ապրէին քով քովի, կանակ կընակի յենած, խոսացած, մէկ թաղի, երկուքի, բայց մերջ ի վերջոյ այն շատ, շատ նեղ շրջանակին մէջ:

Հրային այնպէս թուեցաւ, թէ իրենք մեծ վիշտ մը կը քողարկէին իրենց զուարթ գէմքերուն եւ պերճախօս ցուցափեղկերուն ետին, նման այն պայծառ առաւօտներուն, որոնք կու դային մոռացութեան տալու գիշերուան տոնէտներու տխուր սարսափը: Թուեցաւ, թէ իրենց կնիծ ժպիտին, կնիծ հանազատութեան, կնիծ ցնծութեան մէջ կը փորձէին անտեսել իրենց դառն իրա-կանութիւնը, որ կը մաշեցնէր զիրենք՝ գիշերուան մթութեան մէջ:

Կարճես բան մը կորսնցուցած մարդն էր ինք, որ ինքզինք կ'ուզէր դրսեւորել Հոս ու Հոն, աման սէրերու եւ թեթեւ ատելութիւններու գիրկը: Հիմա իր կորսնցուցած ետին մեծութիւնը ուժգնօրէն կը դիմագրաւէր զինք: Կորսնցուցած ետի զաղափարը կը բանար դուռները՝ դէպի կորսնցուցած հայրենիքին պատկերը: Պէտք էր դանկը իր կորսնցուցած ետը: Ապրելու ու դէպի յաւիտենականութիւն խոյանալու կորովն էր ատիկա, որուն կարիքը կը գգար ինք, այսօր, ամէն օրուրնէ աւելի, ամէն բանէ առաջ, երբ Հետզհետէ կը կորսնցնէր իր Հաւատքը, ՉնՉին բաներէն մինչեւ աստուածներու գոյու-թիւնը:

Գիւղացին դեռ կը շարունակէր մխրճել փետատը Հողին տաք մարմինին մէջ ու Հրայի, արեւու ճառագայթներով ջերմացած՝ հաստատակամ ու Հա-ւատքով լեցուն ջայլերով՝ կ'ընթանար դէպի Հողին բաց տարածութիւն-ները...

ՆԱԶ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ



# Իմացական Հարժուճ

Լ. Մ Կ Ի Տ Ջ Ե Ա Ն

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈԼՃԵՆԻՑԻՆ (ՄԱՐԴԸ, ՃԱՆԱՊԱՐՀԸ, ԳՈՐԾԸ)



Ալեքսանդր Սոլժենիցինի մասին մեր աշխատակիցին պատրաստած յոզումաշարքին վերջին մասն է հետազայ գրութիւնը, որ ըստ կարգի պէտք է երեւեր Վնազիմեթ անցեալ տարուան Հոկտեմբերի թիւին մէջ, թայց յաջորդական մեր երեք բացառիկներուն պատճառով հետաւոր եղաւ ներկայ համարին մէջ միայն սեղ տալ անոր:

Ակամայ այս ընդհատուժը սակայն մասնաւոր Նշանակութիւն մը չունի այս պարագային, արբան ըլլալով, որ Լեւոն Մկրտչեանի սոյն յոլումաշարքի իւրաքանչիւր գլուխ առանձին նիւթ մը կը շոշափէ եւ կը կապմէ առանձին անդրադրութիւն մը:

Տարակոյս չկայ, որ ընթերցողը միեւնոյն շահագրգռութեամբ պիտէ կարդայ Հոլովտոր դրագէտին այնպիսի լուսարձակի սակ առնող Մկրտչեանի ուսումնասիրութեան այս վերջին մասը եւս:

Ե.

Այս ուսումնասիրութեան նախորդ հատումներում ճանօթութիւններ արբանցիկն Ալեքսանդր Սոլժենիցինի արդէն զրուած ու հրատարակուած, ինչպէս եւ

չարունակուող դրական երկերի վերաբերեալ, հիմնականում ղեղարունեստական արձակի բնագաւառում:

Բայց Սոլժենիցինի անունը, լայն հասարակութեան աչքում, կապուած է առաւելապէս այնպիսի զրքերի հետ, ու

րոնք զեղարուեստական շեռ: Գրանք ըստ էութեան վաւերագրական վկայութիւններ են, դիտա-հրապարակաբանական, վերլուծական շարադրանքներ, բանավիճային արձագանգներ, եւայլն: Այդ կարգի երկերը մաղաչափ չեն հակասում գրողի էութեանը, այլ լրացնում են նրա մարդկային գիմարիճը ու աւելի ցայտուն դարձնում նրա ճանապարհը:

Մօտ տասը տարի է, ինչ Սոյժենիցիի գրեթէ իւրաքանչիւր հրատարակյիւն խօսք ու յայտարարութիւն անմիջապէս արձանագրում ու տարածում է տեղեկատուական գանազան միջոցներով: Մա՛նւանդ՝ վերջին մի քանի տարում, երբ գրողին վիճակուէց ապրել ու գործել արտախորհրդային աշխարհում: Նրա եւ լռյժները այժմ ո՛չ միայն արձանագրում են մամուլի էջերում կամ հաղորդում տեղեկատուական ընթացիկ միջոցներով, այլև դառնում են պրքեր ու գրքոյկներ եւ օրինակելի արադութեամբ թարգմանում այլեւայլ լեզուներէ: Գրողի համբար առաջաւոր մարդկանց պարտաւորեցնում է ըստ ամենայնի շուտ արձագանգել եւ յետ չմնալ ժամանակի հոսանքից:

Այսօրուայ կացութիւնը մի տեսակ արդար հատուցում է Հանդիսանում այն բազմամեայ գրկանքների ու լռութեան գիմաց, որոնք վիճակուէլ են գրողին Վոմոնիդ կառուցողներէր երկրում: Այդ արդար հատուցումը ըստ էութեան վերաբերում է ո՛չ միայն գրողին անձամբ, այլև այն տասնեակ միլիոններին, որոնք գժոխային պայմաններում յաւիտեանական լռութեան դատապարտուեցին, եւ այն հարիւր միլիոններին, որոնք մինչև հիմա էլ կրում են բարբարոսութեան կրոնած ու պարտագրած շղթաները:

Եթէ Սոյժենիցիը գրած լինէր սոսկ միայն «Գուլագ Արշիպիլագը» հետազոտութիւնը՝ դա բաւական կը լինէր արժէքաւորելու նրա դոյնութիւնն ու գործունէութիւնը բարձրագոյն բարենիշով: Թերեւս էլ պատահական չէ, որ շատերի մաքում անմիջապէս զուգորդում են «Սոյժենիցիին» եւ «Գուլագ» անունները:

Անշուշտ, անկարելի է վիճակագրական հաւաստութեամբ պնդել, թէ զրոյի ո՛ր երկր քանի՛ն են կարդացել: Բայց սխալ չի լինի ենթադրել, որ «Գուլագ»ի համբաւն աւելի մեծ է, քանդի Էթէ նոյնիակ բոլոր տեղեակ մարդիկ չեն կարդացել երկը լիովին, ապա զոնէ լսել են այդ մասին, աւելի կամ պակաս չափով:

Նախ մի քանի խօսք երկի արտասովոր վերնագրի մասին: «Արշիպիլագը» բացատրութեան կարեք չունի: Իսկ «Գուլագը» խորհրդային բառարանի բանաբանաբանութեամբ բարբարոս է, թէև նրա կենսագրութիւնը ամօթխածօրէն մի տեսակ գաղտնի է պահուում: «Գուլագը» նորագոյն յայտարարում է եւ լրիւ բառերով բուսերէն նշանակում է «Գլուխոյէ Ուլարուէնիէ Լադերէյ» («Ճամբարների Գլխաւոր Վարչութիւն»): Ահա այդ յայտարարումն է, որ հանրաճանաչ «Թեւաւոր» իմաստ է ձեռք բերել:

Սոյժենիցիի երկում ներկայացւում է այդ անգոյն բառերի տակ թաքնուած հրէշային իրականութիւնը: Խորհրդային ճամբարա-բանտային իրականութեան վերաբերեալ վաւերագրական ու դեղարեւտական վկայութիւններ գրուել են եւ աւելի առաջ՝ 1920ական թուականներից սկսած: Բայց դրանք, բոլորն էլ, կամ գրեթէ բոլորը, անտեսուել ու խեղդուել են՝ համաշխարհային անտարբերութեան մեղաւկցութեամբ: Թերեւս էլ առանձին առանձին վերցրած՝ այդ կարգի երկերը չունէին սոյժենիցիեան մեղադրագրի լայնութիւնը, թափը եւ ուժը: Թամեանայից պօ, Սոյժենիցիի պատրաստած հետազոտութիւնը աննախընթաց է՝ թէ՛ իր պարունակութեամբ եւ թէ՛ ազդեցութեամբ ու յարուցած հետեւանքներով:

«Գուլագ Արշիպիլագը» բազկացած է եօթ մասերից եւ լոյս է տեսել երեք հատորներով: Բոլոր հատորների էջերի ամբողջութիւնը հաւասար է 1850ի (տուսերէն հրատարակութեամբ): Առաջին հատորը ապուել է 1973ի Դեկտեմբերին, երկրորդը՝ 1974ի Մայիսին, իսկ երրորդը՝ 1976ի Փետրուարին, միշտ նկատի առնելով առեւերէն քնադիրը: Երրորդ



Հաստի վերջում նշուած է Հետազոտութիւնը պատրաստելու թուականը՝ 21.4.1958 = 22.2.1967, եւ վայրը՝ Ռեազան-Ուկրիվիչէ: Այնուհետեւ, մէկ տարուայ ընթացքում, Հեղինակը վերանայել է ձեռագիրը եւ որոշ ճշգրտման կատարել, ըստ Հնարաւորութեան:

Տպուելուց առաջ՝ աշխատութիւնը ծանօթ էր Հեղինակի անձնական ու գրական բարեկամներէջ շատերի՝ թէ՛ անմիջապէս եւ թէ՛ ինքնահրատարակչական տեղեկատուութեան ճանապարհներով: Նրատարակութեան նախարհակին՝ 1973ի Սեպտեմբերին, Մոլժեհիցինը յայտարարեց, թէ՛ արտի սեղմումով, եւ տարիներով խուսափում էի այս արդէն պատրաստ գրքի սպագորութիւնից: Պետեւս պարադիմերի հանդէպ ունեցած պարտքի: Բայց հիմա, երբ պետանվտանգութիւնը, միեւնոյն է, այս գիրքը ձեռքն է վերցրել, ինձ ուրիշ բան չի մնում անել, քան անյապագ հրատարակել այն»:

Աշխատութիւնը կրում է «Գեղարւեստական Հետազոտութեան փորձ» ինքնարձեգրական ենթավերնագիրը եւ «1918-1956» ժամանակային նշումը: Գա նախ նշանակում է, որ Հետազոտութեան է ենթարկուած 38 տարուայ մի ժամանակաշրջան, լենինեան իշխանութիւն Հաստատուելուց մինչեւ ստալինեան իշխանութեան կազմակերպական աւարտը, այսպէս կոչուած «Մտայինի անձի պաշտամունքի» ձեւական դատապարտման ու պատասխանատու շարժման կապակցութեամբ: Ուրեմն՝ Մտայինը չի տնջատուած Լենինից:

Թերեւս շատերի արտասովոր թուայ «Գեղարւեստական Հետազոտութիւն» արտայայտութիւնը: Հնարաւոր է, որ Հեղինակն էլ Հեշտութեամբ չի գտել գիտյուղի արտայայտութիւնը, բայց եւ այնպէս՝ կանգ է առել մի կէտի վրայ՝ դիտակցարտ: «Գեղարւեստական Հետազոտութեան փորձ» արտայայտութեան երբեք բառերն էլ պատահական չեն եւ բացատրելի են երկի բովանդակութեամբ:

Առաջին Հերթին՝ գրուածը գեղարւեստական երկ չէ, բայց գերծ էլ չէ գեղարւեստական շարագրանքի տարրերից: Փանդի իրականութեան մասին խօսում է ո՛չ թէ սոսկ թուականներ նշելու եւ թուական տուեալներ յիշատակելու չոր ու ցամաք լեզուով, անյոյզ ու անտարբեր տեղեկատուութեամբ, այլ՝ կենդանի ու զուեագեղ, Հեղինակի վերաբերմունքը ումէն քայլափոխի շեշտող, հաղորդական եղանակով: Ներկայացում են առանձին մարդկային ճակատագրեր, ճամբարային բնութագրական պատկերներ, ապաւորութիւններ ու այլեւայլ իրողութիւնների պատկերաւոր ամփոփումներ: Այդ պարագան պարաստորեցնում է շանտեւել գեղարւեստական տարրը:

Եւ երկրորդ՝ գրուածը զուտ եւ ամբողջական Հետազոտութիւն չէ, ի հարկէ, բայց իր հուժեամբ ու Հիմնական մասով, այնուամենայնիւ, Հետազոտութիւն է: Հեղինակն ինքն է Հուստոտացրեում, թէ՛ «Այս գրքում չկան ո՛չ հետալի տնձնք, ոչ էլ հետալի իրադարձութիւններ: Մարդիկ ու վայրերը կոչուած են իրենց սեփական անուններով: Թրէ յիշուած են սկզբնատուերով, ապա դա արուած է անձնական նկատումներով: Եթէ չեն յիշուած բոլորովից, ապա դա արուած է միայն նրա համար, որ մարդկային յիշողութիւնը անուններ չի պահել, իսկ ամէն ինչ եղել է միշտ այդպէս: Երբ բացառապէս իրական մարդկանց ու իրական զէպրիթի մասին է խօսում, բացառապէս իրական տուեալներ են ամփոփում, առանց այլաբանական ու պոյմանական Հնարքների, չենք կարող արուածը Հետազոտութիւն չհամարել: Մանաւանդ ա՛յն պարագայում, երբ մարդկային ճակատագրերի վերաբերեալ հոյնպէս մարդկային վկայութիւնները կարդաւորելու, դասաւորելու, Համադրելու եւ ամփոփելու հետ միաժամանակ՝ մեծ տեղ է արւում եւ գրուար ու տպագիր վկայութիւնների Հրատարակութիւնների յիշատակմանը: Մոլժեհիցինի Երկը, նիւթի Հուստոտութեան եւ ար-

ևալները ու դէպքերի իմաստը վերծանելու հեղինակային գիտաւարուժեան առումով, միանգամայն գիտական նշանակութիւնը ունի՝ հետազոտութեան ասանձանում:

Բայց գեղարուեստական հետազոտութիւնը նաև փորձ է՝ թէ՛ իր տեսակի մէջ եւ թէ՛ առհասարակ ճամբարային գրականութեան բնագաւառում: Ճիշդ է, որ ճամբարային իրականութեան վերաբերեալ ժամանակին նաև ուրիշ գրքեր են գրուել ու նոյնիսկ տպուել: Դրանով հանդերձ, Սոյժենիցիներ գործը իր բնութիւնով աննախընթաց է եւ հետեւապէս առաջինը ու չի կարող փորձ չհանդիսանալ, որովհետև դեռ յայտնի չէ, թէ այդ փորձին շարունակութիւնը ինչեր կարող է յայտնաբերել: «Փորձ» բառի նշանակութիւնը աւելի յստակօրէն պատկերացրենք: Համար արժէ կարգաւ հենց Սոյժենիցիների բացատրութիւնը, որը դեռեղձած է առաջին հատորի սկզբում, այլ կարգի բացատրութիւնների շարքում:

«Երբ ես 1958 թուին այս գիրքն սկըում էի, — գրում է Սոյժենիցիներ, — ինձ յայտնի չէին ոչ ոքի յուշեր կամ գեղարուեստական երկեր ճամբարների մասին: Աշխատանքի տարիների ընթացքում, մինչև 1967 թուականը, աստիճանաբար ինձ յայտնի դարձան վարչամեթոդային «Կոլեկտիւս պատմութեանը» եւ Գ. Վիտկովսկու, Ե. Գիմզուրցի, Օ. Արամովա-Սիլոգրեբի յուշերը. որոնք եւ վկայականում են շարադրանքի ընթացքում, իրենք բոլորին յայտնի գրական փաստեր (վերջ ի վերջոյ, այդպէս էլ լինելու է): Հակառակ իրենց մտադրութիւններին, ի հակասութիւն իրենց կամքի, — շարունակում է գրողը, — անգին ճիւղ են տուել այս գրքի համար, պահպանել շատ կարեւոր փաստեր ու նայնիսկ թուեր եւ նայնիսկ իրենց շնչածօղձ՝ Մ. Ես. Սուդրաբ-Լազիսը, Ն. Վ. Կրիլենկոն — շատ տարիների գլխաւոր պետական մեղադրողը, նրա ժառանգորդ Ա. Ես. Վիլինսկին իր իրաւագէտ-մեզասակիցներով, որոնցից չի կարելի չառանձնացնել Ի. Լ. Աւերբախին»: Եւ

վերջապէս- «Այս գրքի համար ճիւղ են տուել նաև երեսուցից խորհրդային գրողներ, Մաքսիմ Գորկու գլխաւորաբնամբ, Բեյուտրիանայի մասին ամօրայի գրքի հեղինակները, որը առաջին կամուրջում մէջ առաջին անգամը լինելով՝ վառարանում էր ստրկական այրատամբը»:

Վ Սոյժենիցիներ, բնականաբար, իր գիրքը գրելիս համապատասխան նիւթեր է հաւաքել: Նա առաջին հերթին յիշուել է իր անձնական կենսափորձի վրայ: Բայց դա, ի հարկէ, բաւական չէ մի համապարփակ հետազոտութեան համար: Ուստի՝ նրան օգնել են 227 երբեմնի աստանակիրներ, իրենց վկայութիւնները հազարդէրով պատմութեանը, յուշերում եւ նամակներում: «Ես այստեղ նրանց անձնական շնորհակալութիւն չեմ յայտնում. սա մեր ընդհանուր, համերաշխ յուշարձանն է բոլոր տանջուածներին ու սպանուածներին յիշատակին», — գրում է Սոյժենիցիներ, — ահա թէ ինչու ամբողջ գիրքը նուիրուած է՝ «բոլոր նրանց, ում կեանքը չբաւեց այդ մասին պատմելու»: «Եւ թող ինձ ներքն նրանք, — ասում է գրողը, — որ ես ամէն րան չեմ տեսել, ամէն բան չեմ յիշել, ամէն ինչի մասին չեմ կուսեցել»: Ուրեմն՝ Սոյժենիցիների պատրաստած հետազոտութիւնը ինքնին հաւաքական յուշարձան է բազմաժողովին անձեղ զոհերի յիշատակին:

Ամբողջ գիրքը, ինչպէս որ նշուեց, պարունակում է 1850 էջ: Դժուար չէ պատկերացնել, թէ ինչպիսի հսկայական նիւթեր են ամփոփուած այնտեղ եւ որքան շատ հարցեր են արծարծուում: Կողմնորոշելու համար նրանց, ովքեր անձամբ կարողալու պատեհութիւն չեն ունեցել, այստեղ աւելորդ չեմ համարում նշել հատորների գլխաւոր վերնագրային բովանդակութիւնը:

Առաջին հատորում դեռեղձում է երկու մաս: Առաջին մասի վերնագիրն է «Բանտային այդիւնաբերութիւն» (12 էջ): Դրանում նկարագրում եւ վերլուծում են խորհրդային ձերբակալու-

Քիւնները եւ Հետաքննութիւնները, ներկայացուած է բանտային «օրէնքներին» չզարգացման պատճառով: Երկրորդ մասում («Յաւիտեանական շարժումը», 4 գլուխ) խօսուած է դատապարտեալների տեղափոխութիւնների, կղզուց կղզի» արտուելու եւ յարակից իրողութիւնների վերաբերեալ:

Երկրորդ հատորում ներկայացուած են երրորդ եւ չորրորդ մասերը: Երրորդ մասում («Լորժաւի-Պոլստաւնի») 22 դուրս) նկարագրուած է բուն ճամբարային իրականութիւնը, նրա կազմախօսութիւնը, բնակչութիւնը, շերտաբաժնի, գրադասները, եւայլն: Չորրորդ մասը («Ճակիմ եւ փշալարը», 4 գլուխ) նուիրուած է մարդու հոգեւոր էութեանը, թէ ինչպէս է այն գրեւորուած փշալարային պայմաններում, ինչն է մնում եւ ինչն է փոխուած, ինչ ճանգրուաններից է անցնում ինքնավերլուծման ու ինքնադիտակարգութեան ճանապարհը, ինչ է կորցուած եւ ինչ շահուած:

Երրորդ եւ վերջին հատորը երեք մասից է: Հինգերորդ մասում («Տաճարային շարժումը», 12 գլուխ) շեշտը դրուած է ստեանակիր աշխատանքների վրայ, դատապարտեալների ճակատագրի ու նըրանց վերաբերմունքի զանազան կողմերն են ներկայացուած: Վեցերորդ մասը («Աճառ», 7 գլուխ) այլեւայլ բնագաւառներ է ընդգրկում, քանի որ անհատական աջորդներից բացի անդրադուռում է եւ հասարական աջորդներին, երբ ամբողջ ժողովուրդներ են տեղահան արւում իշխանութեան ձեռքով: Եօթերորդ մասում («Ստալինը չկայ», 3 գլուխ) հիմնական գրոյթն այն է, որ «կատալաթողնիքը փոխուած, իսկ արշիպելագը մնում է»: Ստալինից յետոյ եւս ճնշողական քաղաքականութիւնը շարունակուած է, ճամբարները թէեւ առաջւակ նման լեռն-լեցուն չեն, այդուհանդերձ, նաեւ անբնակ չեն, պահուած են նախորդների աւանդութիւնը, ոգին եւ մրթնութիւնը: «Նոր դատակարգից» կազմուած իշխանաւորները զղջալու ոչ մի արամագրութիւն չեն ցուցաբերում եւ

չեն դատապարտում ստալինեան ժամանակաշրջանի ոճրագործութիւնները, սկզբունքով ու գործնականում: Այդ յամառութիւնը աւելի քան տրամաբանական է, բայց ոչ պատահական:

«Գուլագ Արշիպելագը» գրքի առաջին հատորը լույս տեսաւ Հեղինակի խորհրդային երկրում գտնուած ժամանակ, իսկ երկրորդ եւ երրորդ հատորները՝ աւելի ուշ, երբ գրողն ազատ էր Հալաժիչների ճիւղաններից: Բայց դեռեւս խորհրդային երկրում Սոլժենիցինը ունեցել է եւ այլ նախաձեռնութիւններ: Այսպէս, 1970-71 թուականներին նա որոշել է իր համահունչների հետ պատրաստել հասարակագիտական ուսումնասիրութիւնների մի ժողովածու եւ դա տարածել ինքնահրատարակչութեան ճանապարհով: Ժողովածուի նիւթերն արդէն պատրաստ էին եւ նախատեսուած էր հրատարակել այն 1971ի Մարտին կամ Ապրիլին: Բայց Սոլժենիցինի արտաքուրէր յետաձգեց ծրագիրը, ինչ որ իրագործուեց նոյն տարուայ նոյեմբերին: Նոյեմբերի 14ին Մոսկուայում, եւ 16ին՝ Յիւրիեւում տեղի ունեցած միտմանական այնպիսի ստույգները ազդարարեցին ժողովածուի ծնունդը:

Ժողովածուն առաւելին կոչուած է «Լիգաթը զլեիք», ինչ որ դժուար թարգմանելի է բոլոր լեզուներով, այդ թրւում եւ Հայերէն: Բայց ճիշդ կը լինի կանգ առնել «Մեծարեկոյնների տակից» վերնագրի վրայ, եթէ նկատի առնեք, որ խօսքը վերաբերում է խորհրդային ճնշող, ժայռային զանգուածի տակից հնչող մարդկային կենդանի ձայնին:

Ժողովածուի Հեղինակները եօթն են, հինգը բուն անուններով, իսկ երկուսը՝ գրչանունով: Ահա թէ ինչու մամուլի սուստիւնների ժամանակ Յիւրիեւում Հանգէս եկաւ միայն Սոլժենիցինը, իսկ Մուկուայում էլ՝ Իգոր Եաֆարեւիչը, Միխայիլ Ազուրսկին, Վադիմ Բորիսովը եւ Եւզենի Բարաբանովը: Ժողովածուի մէջ զետեղուած են 11 յօդուածներ, որոնցից երեքը պատկանում են Սոլժենիցինի գրչին:

կազմողների կողմից ժողովածուի ծնունդը այսպէս է բացատրուած. «Մտքի րևոզիանուր ճնշուածութիւնը հասցնում է ոչ քէ նրա դադարմամ, այլ խեղաթիւրման, անտեղեակութեան, հայրենակիցների ու ժամանակակիցների փոխադարձ անհասկացողութեան:

«Շատ տասնամեակներից ի վեր ո՛չ մի հարց, մեր կեանքի ո՛չ մի խոշոր իրադարձութիւն չի բննարկուել ազատութեն ու քաղաքացիական իրաւունքներէն ու քաղաքացիական իրաւունքներէն, որպէսզի մենք կարողանայինք իսկապէս հասկանալ պատահածը եւ ելքի ուղիներ գրտնել: Բայց ամէն ինչ ճնշուել է հենց սկզբից, ամէն ինչ դարձել է շիմատատուած, խառնաշփոթ հնոտի, առանց անդեպի, հետեւապէս եւ արագայի մասին հօգալու: Իսկ այս կուտակուել են նորանոր իրադարձութիւններ, դարձել նոյնպիսի ճնշող մեծաքիւղներ, այնպէս որ՝ կրթել են եւ բնութեան առնելու հետաքրքրութիւնն ու աստիքը: Եւ հիմա, դրսից ու նոյնիսկ խժըժանով, առանց արգելիքի ու անպատասխանատու ձեւով՝ բզգած կամայական վիճակ են կայացնում մեր մերձաւոր պատմութեան եւ մեր ժողովրդի հնարաւորութիւնների մասին: Մենք սկսում ենք առարկել եւ այնքան ենք տարուած վեճով, որ գուցէ փչացնում ենք գլխաւորը պատահականի համար: Իսկ այն ձայնորդ, որով հարկուոր պահին կոչուած էին ասելու իմաստիկ, լրանցիմ ժամանակից շուտ, փաստաբարձքքը փչացան, իսկ կողմնակի հետազոտողի հայեացքը չի հասնում անկանոն կիտում բնութի տակի մութ խորութիւնը:

«Եւ այն խաւարի ու խռատութեան միջից, մեծաքիւղների տակից՝ մենք հիմա շարժում ենք առաջին բոլոր ծիլերը: Պատմութիւնից ազատութեան պարզելու եւ այլ պարզելու պատկերով՝ մենք կարող ենք եւ դրանց երբեք չհասնել: Պատմութիւնը մենք ենք եւ չենք կարող անձամբ ինքներս բարձր չտալ ու խորքերից չհանել սպասելի՞ն՝ այսօր ազատութեան»:

Մովսէսեանի առաջին յօդուածը («Շնչառութեան եւ գիտակցութեան վե-

րադարձին») քննութեան է ենթարկում Անդրէյ Մախարովի 1968 թ. Հրապարակուած «Խորհրդածութիւններ յառաջիկայութեան, խաղաղ գոյակցութեան եւ մտաւոր ազատութեան մասին» նշանաւոր շարադրանքի գրոյթները: Մովսէսեանի խօսքը ընդհանրապէս բաւական ջննադատական է եւ մերժում են «Մախարովի պատրանքները»: Երկուստեւ սկզբում միայն անձամբ Մախարովին է յանձնուել, իսկ չորս տարի անց Հրապարակուած է իբրեւ պատմական նիւթ: Մախարովի որ Մախարովի ինքը լրջօրէն վերանայել է իր երբեմնի տեսակէտները, աւելի արժատական գարձել: Թէեւ չորս տարուց յետոյ է տպուած յօդուածը, «հեղինակը դա ուշ չի համարում, ասելով՝ «Մենք նաեւ կէս դար ոչինչ չենք հասցրել ո՛չ անունը տալ, ոչ էլ իմաստաւորել, մեզ համար 50 տարի անց էլ ոչինչ ուշ չէ: Որպէստես ինչ որ տպուել է մեզ մօտ՝ դատարկութիւն է: Ամէն մի աշխարհ ուշացման մէջ ռուսական յետիոտնութեան կեանքի յատկանշական չափանշը կայ»:

Երկրորդ յօդուածում («Զգուշացում եւ ինքնապահպանութեամբ իբրեւ ազգային կեանքի չափանշան», 1973 թ.) Հեղինակը անդրադառնում է ռուսների եւ այլ ազգերի փոխարարութիւններին: Նա անհնայն շխտակութեամբ թուարկում է այն շարքերը, որոնք գործուել են ռուսների անունով կամ նրանց կողմից բարձրաթիւ այլ ազգերի նկատմամբ: Գլխորդը միաժամանակ հոգեւոր սթրուկտուր, ինքնագիտակցութեան գալու կոչ է անում իր ժողովրդին, որպէսզի զղջման ու ինքնասահմանափակման ճանապարհով նա ի վիճակի լինի քաւելու իր մեղքերը ու այդպիսով էլ Հենց ինքը վերածնունդու ու բաց ճակատով նայելու աշխարհին ու մարդկանց: Մովսէսեանը շեշտը դրում է յատկապէս հոգեւոր վերափոխման վրայ, քանի որ ընդհանուր բարեկարգութիւնը կարող է յաջողել միայն ներքին բարեկարգութեանը: Առանց ներքին գիտակցութեան եւ պատշաճ կողմնորոշման՝ ամէն մի դրական յայտարար-

բութիւն ու միջոցառում կը մնայ կեղծ ու ազարդիւն :

Սոցիալիզմի մայր յօդուածը միայն յօդուած ու դիտաւորական վերլուծութիւն չէ, այլևս ուղեկցող իրադարձութիւն : Մինչև հիմա այդ ողով շատ քիչ ուսաներ են Հանդէս եկել, խոստովանել իրենց ազգի մեղքերն ու թերութիւնները, մարդկայնական ճանապարհի մղել նրան : Դրա պատճառը մեծ մասամբ պարզ է : Խորհրդային իշխանութեան տարիներին ամենայն հետևողականութեամբ ու անողոքութեամբ բնաջնջուել է տառիկ հերթին ուս ազգի ամենաարժէքաւոր ու մարդկայնական մասը, այնպէս որ՝ ժամանակի ընթացքում կարգին մտաւորականութիւն երբեք չի ստեղծուել : Դրա կողքին, առաջ են քաշուել հիմնականում գրազէտ կամ անգրադէտ մտարկաւորները : Իսկ նրանք էլ ձեռք ձեռքի առած, գլոտակարգային Համերայխութեամբ, ճնշել են բոլոր աղիւրի իսկապէս աղաւառէր ու մարդասէր ուժերին, այդ թւում եւ սուսներին : Թուսկան արժէքների ոչնչացումը միշտ էլ նախորդել է միւս բոլոր ազգերի արժէքների ոչնչացմանը, այլ ոչ թէ հակառակն է տեղի ունեցել : Քուսկան թիկունքը ամբողջապէս յետոյ են իշխանաւորներն սկսել իրենց գրոհները ոչ ուս ազգերի գոյութեան ու արժէքների դէմ : Սա տառնաբային դրոյթ է, որն անկարելի է սպասել մի քանի խօսքով :

Արդ՝ Սոցիալիզմի առայժմ այն սակաւթիւնների շարքումն է դասուում, որոնք զգաւոր հոյակապ են նայում աշխարհին, ազգերի կեանքին ու նաեւ իրենց ազգի պատմութեանը : Ի Հարկէ, նրանք չեն կորուց կամենալ իրենց ազգի նօսմացումն ու ճնշումը : Եւ Հենց ճիշդ դրա համար ըմբոստանում են այն նստաւորներն ու ճնշումների դէմ, որոնց ենթարկուել են ուրիշներն ուսաների պատճառով :

Երրորդ յօդուածը (1974 թ. Յունւարի) դարձեալ գծուար է բառացի թարգմանել : Թուսկան՝ «Օրրագրովմը չիմաս : Ի խում է Վերթութիւն» բառից եւ

կարելի է մեակերպել Վերթապաշտութիւն» բառով : Յօդուածում արծարծուող Հարցը վերաբերում է բոլոր հասարակութիւններին, քանի որ Վերթութեան» եւ «Հոգեւոր արժէքների» հակադրութեան վտանգը կարող է ծագել ամենուրեք : Բայց Թուստանում այդ Հարցը յատուկ սրութիւն ունի եւ նոր չէ, որ քննութեան է առնուում, այլ՝ նախախորհրդային ժամանակներից : Այնտեղ այդ Հոգի վրայ նաեւ «մտաւորականութիւն» հասկացութեան Հանդէպ է խոսնալիթութիւն ստեղծուել, հակառակ պաշտօնական փաստաթղթերի «Հարթ» մեակերպումներին : Սոցիալիզմը վերապահութիւններով է արտայայտուում զուտ Վերթապաշտութեան վերաբերեալ, նոյնիսկ շատ խիստ, պատմական Համեմատութիւնների շրջանակում, փոխարէնը առաջ քաշելով Հոգեւոր կրթութեան ու ինքնակրթութեան պահանջը, իսկական մտաւորականութեան տրժանաւոր ճանապարհը :

Չստեղծ, ստին յամանակցելու եւ սուտը չպաշտպանելու բարոյական ճանապարհով, ըստ Սոցիալիզմի, «մեմք սկսում ենք ազատագրութիւն ու մաշրութիւնը մեր հոգուց : Երկիր մաքրուլուց սուս մաքրում ենք իմենքս : Եւ դա միակ թիշղ պատմական կարգն է, քանի ինչն՝ մաքրել երկրի օդը, եթէ իմենքս մնում ենք կեղտուս : Գրողի Համագումով, Վերթութեան մէջ կորուստը գլխաւոր կորուստը չէ կեանքում : Արուսները հոգու մէջ, հոգու փչացումը, որին մեմք անհոգաբար համաձայնում ենք մտաւոր տարիներից, անուղղիկ էս : «Երիտասարդութիւնը մե՞ղք է, — տարտում է իր խօսքը յօդուածագիրը, — բայց էլ ո՞ւմ է պատկանում սպազան, եթէ ոչ նրանց : Իսկ էլ ումի՞ց ենք սպասում գոնաբերող ընտրանի : էլ ո՞ւմ համար ենք մեմք տանում այդ սպազանով : Մեմք ծեր ենք : Եթէ նրանք իրենք իրենց համար ազնիւ հասարակութիւն յկառուցեն» ապա դա երբեք էլ չեն տեսնի» :

Արդէն ստուեց, որ ներկայումս Մոր-

ժենիցիների անխոր բուրբ հրապարակա-  
յին ելույթները ո՛չ միայն մամուլում ար-  
ձանագրում եւ ասարածուծ են, այլեւ  
ամփոփում են համապատասխան գըր-  
քոյկների մէջ: Այնպէս որ՝ Հնարաւորու-  
թիւն է ստեղծուած ուզած պահի ընդգըր-  
կել նրա արտայայտութիւնների ամբող-  
ջութիւնը, աւել առհէ ունենալ զբողի  
անցած ճանապարհը՝ բուրբ խորգուրո-  
տութիւններով: Այստեղ այդքան ցրուե-  
լու հարկ չկայ: Բայց եւ անհնարին է  
ըրջանցել նրա շեղազուրիւմ եւ բնու-  
թիւնը յօդուածը, որը սպուել է նորվե-  
րական «Աֆոնեպոստան» թերթի 1973 թ.  
Սեպտեմբերի 11ի համարում:

Յօդուածը ուղարկու է այն իմաս-  
տով, որ ասարկում է շեղազուրիւմ-  
պատերազմ, այսինքն՝ խաղաղութեան  
հակոտնեան սուկ պատերազմի մէջ տես-  
նելու տարածուած մտածելակերպին: Նա  
հանգամանորէն քայտարում եւ պնդում  
է, որ խաղաղութեան իսկական հակու-  
նեան լոնուութիւնն է: Պատերազմը բրո-  
նութեան արտայայտութիւններից մէկն  
է, այլ ոչ թէ ամբողջ բնութիւնը, որով-  
հետեւ բնութիւնը գործում է նաեւ խա-  
ղաղ ժամանակ ու միամտամտակ պատե-  
րազմ նախապատրաստում: Ուրեմն՝ ում  
համար թանկ է խաղաղութիւնը, նրանք  
պէտք է պայքարեն ստույին հերթին բրո-  
նութեան զէժ, իրենց ուժերը կենտրոնա-  
ցրեն այդ ուղղութեամբ, այլ ոչ թէ ա-  
նընդհատ շեղազուրիւնը հողովն, երբ  
մա՛նուանդ բռնակալները եւս հեշտու-  
թեամբ շեղազուրիւնը զիմակ են հաղ-  
նում: Քանի որ յօդուածը գրուած է խոր-  
հըրդային երկրում գտնուած ժամանակ,  
անուններ չեն տրուած, այլ հարցը ջըն-  
նութեան է առնուած իր տարկայական,  
սկզբունքային մակարդակով: Բայց ա-  
ռաջին իսկ տողերից պարզ է, որ հեղի-  
նակը ինչի գրայ է գնում լեւտը եւ ինչ  
է ուղում ասել:

Սուրժենիցիների նորագոյն գրքերից է  
եւ 1975ին Փարիզում տպուած իր տեսա-  
կի յուշերի գիրքը (630 էջ): Դա կոչուած  
է «Հարթը նորարոմհարից կաղնուկ», իսկ  
ենթադրեալորէն է զգրական կեանքի ակ-

Ոարկներ: Վերնադիրը ժողովրդական  
թեւաւոր արտայայտութիւն է, որը ցոյց  
է տալիս ուժերի անհաւասարութիւնը,  
երբ նոյնիսկ եղջիւրներից զուրկ հորթը  
համարձակուած է ամբարուն կաղնի եւ-  
որի գէժ ելնել:

Այդ արձարանութեամբ էլ՝ Սուրժե-  
նիցիներ պատմում է, թէ իր սահմանա-  
փակ միջոցներով ինչպէս էր ինքը փոր-  
ձում գիմաղբիլ խորհրդային ահաւոր ու-  
ժին:

Գրքի առաջին 480 էջը յատկացուած  
է բուն յուշերին, իսկ մնացեալը փա-  
սաթթային յանդիւններն են, որոնք  
լրացում են պատմումը՝ առանց լրացու-  
ցիչ քայտարութիւնների եւ միամտա-  
նակ վաւերագրում առկայ վկայութիւն-  
ները: Յուշերի սկզբնական կորիզը պատ-  
րաստուել է 1967 թուի Ապրիլ-Մայիսին:  
Այնուհետեւ, իրադարձութիւնների գու-  
գրնթաց, աւելացուել են նոր լրացում-  
ներ: Առաջին լրացումը՝ 1967 թ. Նոյեմ-  
բերին, երկրորդը՝ 1971 թ. Փետրուա-  
րին, երրորդը՝ 1973 թ. Դեկտեմբերին:  
Եւ, վերջապէս, յորրորդը՝ 1974 թ. Յու-  
նիսին, արդէն արտասահմանում՝ ցիւրի-  
խամերձ յնձներում:

«Հարթը նորարոմհարից կաղնուկ»  
գրքում հեղինակը պատմում է թէ՛ իր  
հեա տեղի անեցած զէպերը, իր երկե-  
րը պատրաստելու, պահպանելու եւ բա-  
րեկամական նեղ շրջանակի հետ կող-  
ւած մանրամասնութիւնները, եւ թէ զը-  
բական հասարակայնութեան կեանքն ու  
գործունէութիւնը բնութագրող եզրու-  
թիւնները: Սուրժենիցիների վկայութիւննե-  
րը հնարաւորութիւն են տալիս ո՛չ միայն  
թափանցելու գրողի գործունէութեան  
հասարակայնորէն հետաքրքրական ու-  
րտաները, այլեւ ճանապարհ են քայտում  
հասկանալու նաեւ խորհրդային ամբողջ  
հասարակութեան ու, մա՛նուանդ՝ գրա-  
կան հասարակայնութեան սպրիտը եւ  
աշխատելու պայմանները: Քանզի այդ  
հասարակութիւնը փակ է ամէն տեսա-  
կէտից, այն էլ կրկնակի, եռակի, աստ  
նապատիկ ու հարիւրապատիկ, յարկ առ  
յարկ: Ո՛չ միայն մարդկային իրականու-

Թիւնը չի արտացոլում գրականութեան մէջ, այլևս մեծ մասամբ մտում է մարդկանց ներսում, առանց նշանակաւոր արտայայտութեան, իբրև թաքուն ու անշահ հարստութիւն: Սովետացիների գիրքը խորանալու առձեռն միջոցներից մէկն է:

Գրքի հեղինակը, ըստ երևույթի, այնքան էլ մեծ կարծիք չունի յուշագրութեան մասին: Բայց ահա ինքը ստիպուած է այդ միջոցին դիմել ծանրակշիռ պատճառներով: Գրա համար էլ գրքի հենց սկզբում շտապել է փակցնել «վերապահութիւնը»:

Ահա թէ ինչ է առում այդ «վերապահութեան» մէջ. «Կայ մի այսպիսի, ոչ փոքր, երկրորդական գրականութիւն, գրականութիւն գրականութեան մասին, գրականութիւն գրականութեան շուրջ, գրականութեամբ ծնւող գրականութիւն: Ես իմեմ, գործի քերտումով, դրամք կարգալ սիրում եմ, բայց զգալիորէն ցածր եմ գասում առաջնային գրականութիւնից: Գրուածն այնքան շատ է, իսկ մարդիկ կարգալու համար գնալով այնքան անլի էին ժամանակ ունեմ, որ թւում է, թէ յուշեր գրելը, այն էլ գրական, խղճի դէմ է: Ես արդէն ընտ չէի ենթադրում, որ հենց իմեմ՝ կեանքիս 49րդ տարում, կը համարձակուեմ յուշագրական բաներ գրել: Բայց երկու հանգամանք վրայ հասնում եւ ուզողութիւն տալիս ինձ:

«Ըլէկը՝ մեր գաժամ ու վախկոտ գաղտնիութիւնն է, որից էլ՝ մեր երկրի

քոյր դժբախտութիւնները: Մե՛նք ո՛չ միայն բաց է թաց չենք խօսում ու գրում եւ բարեկամներին պատմում, թէ ինչ ենք մտածում եւ բանն ինչպէս է եղել իրականում, այլևս թղթին վստահելուց ենք վախենում, քանզի առաջուայ պէս կացինը կախուած է մեզինց իրաքանչիւրի վրի վերեւ, — այնք թե՛քս՝ կ'իջնի: Թէ այդ գաղտնիութիւնը դեռ ինչքան կը տեսի, տեգուշակելի է, գուցէ մեզինց շտաքին դրանից առաջ գլխատեմ եւ մեզ հետ կը կորչի չարտայայտածը:

«Երկրորդ հանգամանքը այն է, որ երկու տարի է, ինչ վզիս օղակ է հագցրած, բայց պրկուած չէ, իսկ գալիք գարնանը ես ուզում եմ գլխով մի թեքել թափ տալ: Արդե՛օք օղակը կը կտրուի, թէ վիզս կը խեղդի՝ նշգրտորէն անկարելի է նախատեսել:

«Իսկ տես երկու մեծաքերտների միջեւ եմ գտնում. առաջինը գլորել, երկրորդի առջեւ վարսում եմ, — փոքրիկ դագար է տրուել ինձ:

«Եւ ես մտածեցի, որ թերեւ ժամանակը եկել է որոշ բաներ բացատրելու: Ով գիտի՝ ինչ կը գատահի»:

Այսպիսով, աշխարհի արամադրութեան տակ են դառնում Սովետացիների ո՛չ միայն զեղարուեստական ու հասարակական-վկայարանական երկերը, այլև՝ նրա համապատասխան հեղինակային բացատրութիւնները, այդ երկերի ստեղծման, պահպանման, փոխանցման եւ այլ յարակից իրադարձութիւնների մասին:

(Շար. 7 եւ Վերջ)

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

Գ. Ս Տ Ե Փ Ա Ն Ե Ա Ն

Ա Ճ Ա Ռ Ե Ա Ն Ի Հ Ե Տ



Վերջին երկու տասնամեակներուն Հայաստանի մէջ մեծ թափ ստացաւ յուշագրութիւնը, որ հանրութեան ժառանգուեցաւ թէ՛ մամուլին միջոցով եւ թէ առանձին հասարակրով: Ետքին մէջ ուշադրաւ էին յատկապէս Ռուբին Զարեանի «Յուշագրասումը» եւ Գորգիին Իեւի «Զարեանեան մասունքները», որոնց անմիջական ժողովրդ պէտք է զննել Հրաչեայ Աճառեանի մասին Գառնիկ Ստեփանեանի լոյս ընծայած Հատորիկը, որ մեծածուն հայը իր ստորեային մէջ պատկերացուող թանկարժէք վկայութիւններու հանդէս ձգն է, կազմուած ազգային, մարդկային ու դեմոկրատիկան յատկանշներու առնչոնող գիծերով:

Կը կարծենք, որ մեր հրատարակչական ստանդարտները կամ աւորեայ մամուլը պէշտիկ նուէր մը ըրած կ'ըլլայ ընթերցողին, եթէ պարբերաբար կամ առանձին հատորով մը լոյս ընծայէ Ստեփանեանի այս գործը, որ իրաւութեան, սմբուլութեան, նախանձանգրութեան, ճիշդ ու մեծազարծութեան հազարգութիւն ձգն է նոյն տունը...

Հոկտեմբերի վերջերին գրաշարանոցում յայտնուեց իր դրբից աւելի տարօրինակ մի մարդ, «հալիդերէմի լեզուի քանալիճ» աշխատութեան հեղինակ Արզար Պայազատը:

.....

Երբ ես շարունակեցի վերջացրի, նա յայտնեց, որ մնում է առաջաբանը:  
 — Բայց ո՞ւր է, — հարցրի ես:  
 — Գրուած է, պատրաստ է, շուտով կը բերեմ:  
 — Ո՞վ է գրել:  
 — Աճառեանը:  
 — Աճառեանը, — հարցրի ես իմ դարձացական շեշտով մատնելով Աճառեան եւ Արզար Պայազատ անունների անհամատեղելիութիւնը մի գլբրում:



— Այո՛, — սասց նա այնքան ինքնավստահ, որ թւում էր, թէ մեծ պատիւ էր Աճառեանին, որ նման գրքի համար առաջարան է գրել։

Օրերը անցնում էին, արդէն Դեկտեմբերի կէտերն էին, իսկ առաջաբանը ուշանում էր։ Շարեւ էի ե՛ւ հայերէն տեքստը, ե՛ւ անգլերէնը։ Հայերէնը սրբազրում էի խնամքով, իսկ անգլերէնը յանձն էր տուել սրբազրել հեղինակը, հաւաստիացնելով ինձ, թէ այնքան զգուշութեամբ է նայում, որ ոչ մի տառասխալ չի կարող պարզել։ Վստահ նրա հաւաստիացումին, չէի էլ կարդում։

Մի օր նորից հարցրի, թէ ինչո՞ւ է ուշանում առաջարանը։

— Լուսժողովոմ Արիւսեանը արգելել է, — սասց նա հանդիսաւ։

— Ինչո՞ւ, — հարցրի։

— Ուղղագրութեան համար։ Գրուած է հին ուղղագրութեամբ։ Իսկ պետական գեղարեւոյթ Աճառեանին թոյլ է տրուած միայն հին ուղղագրութեամբ հրատարակելու իր «Արմատական քառարան»ը, ուրիշ բանի համար թոյլտուութիւն չկայ։ Դրա համար էլ նա իր բոլոր դարձերը ապակեալպով է հրատարակում, որովհետեւ ապակեալպի վրայ չի տարածուում այդ օրէնքը։ Իսկ իմ գիրքը տպագրուած է, հետեւաբար առաջարանն էլ պէտք է լինի նոր ուղղագրութեամբ։

— Հիմա ի՞նչ պիտի անենք, — հարցրի ես անկեղծ մտահոգութեամբ։

— Տեսնենք. մի բան պիտի մտածենք։ Աճառեանը երէկ սասց, թէ մի բան կ'անի։

Պայապար այդ օրը տխուր էր, թւում էր, թէ նրա ճակատի կնճիտներն աւելի են ընդգծուած։

Դանդաղ դուրս եկու գրաշարանցից։ Նոյն օրը աշխատանքից յետոյ եղայ Աճառեանի մօտ, հետաքրքրուեցի առաջարանով, սասցի, թէ ես եմ շարում գիրքը եւ ուշանում է աշխատանքը։

Ակնյայտնի դժգոսութեամբ պատմեց, թէ ինչու էր համաձայնուել առաջարան գրելու։ Իսկ ուղղագրութեան համար սասց, թէ զիչերը շատ է մըտածել եւ մի միջոց գտել է։

— Իսկ ի՞նչ միջոց է դա։

— Շատ տարօրինակ միջոց, որը իրաւաբանօրէն հիմք է տուիս մեզ հին ուղղագրութեամբ առաջաբան տպագրելու։

— Չարմանալի է։

— Շատ զարմանալի, քայց միանգամայն օրինական։

— Հնարաւոր չէ՞ իմանալ։

— Ինչո՞ւ չէ, հիմա ասեմ։ 1922 թուականին, երբ եղաւ ուղղագրական օրհրով՝ ընդունուած պաշտօնական որոշման մէջ կայ մի կէտ, որի համաձայն Արեղեանի ուղղագրութիւնը չի տարածուում գրաբար լեզուի վրայ, իբրեւ աւանդական ուղղագրութիւն։

— Յետո՞յ։

— Յետոյ այն, որ ես էլ որոշել եմ առաջարանը աշխարհաբարից թարգմանել զրաբար։

Սկսեցինք ծիծաղել։

— Տարօրինակ է, — սասցի, — այժմ գրաբար երկերն են աշխարհաբար թարգմանուում, իսկ դուք՝ աշխարհաբար գրաբար։

— Ոչինչ, — պատասխանեց, — միակ միջոցը դա է։

Անցան օրեր։ Նորից եղայ Աճառեանի մօտ, հարցրի առաջարանի մասին։

— Այդ մարդը հոգիս հանեց, այնքան դնաց-եկուռ, աղաչեց, որ ամէն բան թողած նրանով եմ զբաղուած :

— Արդէն գրե՛լ էք :

— Անշուշտ :

— Եւ դովե՞ր :

Հտակացաւ հարցիս իմաստը, ժպտաց :

— Ի՞նչ անեմ. կա՛մ պիտի չգրեմ, կամ եթէ գրեմ, պիտի դովեմ, վառ բան չեմ կարող անել :

— Իսկ ի՞նչ ուղղորութեամբ էք գրել առաջաբանը, — հարցրի :

— Հին ուղղագրութեամբ եւ գրաբար լեզուով, — ասաց նա եւ շարունակեց, — է, ես իրաւունք չունե՞մ գրքի առաջաբանը գրելու. Ֆրանսերէն կամ առևտրէն լեզուներով : Իսկ ինչո՞ւ պէտք է արդելուած լինի գրաբարը, որ նոյնպէս գիտական լեզու է, լեզուաբանական աշխարհում ընդունուած :

Պատճառաբանութիւնն, ի հարկէ, շատ էլ համոզիչ չէր, բայց հիմնաւոր կարող էր թուալ վերադաս օրդաններում, մա՛նսաւանդ՝ երբ այն հիմնաւորելու էր Աճառեանի նման ոչ դիւանագէտ, բայց շատ սրամիտ մի մարդ եւ որի նկատմամբ կար ներողամիտ վերաբերմունք :

Մի քանի օրից գրաշարանցի դռնից ներս մտաւ Պայազատը, յաղթական ժպիտը դէմքին : Նա մօտեցաւ, գրպանից հանեց մի թուղթ, երկարեց ինձ : Ճանաչեցի հարազատ ձեռագիրը :

— Քոյլաարեցին : Չէի՞ր հաստատու, տեսա՞ր, Լուսժողկոմը ստորագրել է :

Սկսեցի շարել գրաբար առաջաբանը, որը սկսում էր այսպիսի տողով. «Զատայիմն Եւլյց այցելելալ ի վաճ քաղաքն ետես անդ գործամագրութիւն բագումս...» :

Եարելիս ծիծաղում էի : Խորենացու, Եղիշիկի, Կորիւնի սկեզարեան գրաբարով խօսում էր մամանակակից ընթերցողներին հետ : Ի հարկէ, տարօրինակ էր, բայց փաստն այն է, որ շարուեց առաջաբանը, խնամքով սըրբադրուեց Աճառեանի կողմից, ապագրուեց, կողքին էլ աշխարհաբար թարգմանութիւնը :

«Խորհրդային Հայաստանում լոյս տեսաւ գրախօսական դրքի մասին, որտեղ խստօրէն քննադատուում էր ոչ թէ այս արտատոց խաղը, այլ սրբապրէշը, որ չէր նկատել առևտրէն տեքստուս պարզած բաղմաթիւ տառասխալները : Երկրորդ հարուածն ընդունեց Աճառեանը, այն էլ հեռաւոր Փարիզից : Ականաւոր հայագէտ Ն. Արոնցը մի սուր գրախօսականով քննադատութեան ենթարկեց Խալդերէնի մանգոտած բանալին եւ առանց Հեղինակին մեղադրելու, որովհետեւ ըստ երեւոյթին համոզուել էր, որ նա ոչինչ չունի լեզուաբանութեան հետ, դարձանք էր յայտնել, որ Աճառեանի նման մի գիտնական ընկել էր թիւրիմացութեան մէջ եւ առաջաբան գրել նման գրքի համար :

Այսպէս վերջացաւ «Խալդերէնի լեզուի բանալի»-ի ուրախ սկսուած, բայց տխուր աւարտուած պատմութիւնը :



Վ

Յաջորդ օրուանից անցայ գործի : Նախ շարեցի տխրոտաթերթը՝

«ՀԱՆՆԷ ԵՐԵՎԱՆԻ ԱԿԻՄԱԿԱՆ ԽԱՄԱԿԱՐԱՅ. Փարսկական Խաղաղութիւն. կազմեց չ. Անտա. »:

Ինձ տարօրինակ թուաց չ. Անտա. ը, տրագ դրեկիս այդպէս կրճատ է ստացուել, մտածեցի եւ դարձրի չ. Անտայան: Յաջորդ օրը, երբ սրբադրու-թիւնը տուեցի նրան, կարդաց եւ վերականգնեց չ. Անտա. ձեւը: Զարմացայ: Բան չասաց. եւ էլ շխորացայ- երեւի կրճատ ձեւն է նախընտրում, մաս-ձեցի չ:

Գրքի սկզբում գետեղուած պարսկերէն մի քանի տող կարդաց եւ ասաց.

— Անչուչա հասկացար:

— Ոչ, — պատասխանեցի:

— Շատ իմաստուն խօսք է. նշանակում է.

Մարդ կայ, որ գիտի, թէ չգիտի,

Մարդ կայ, որ գիտի, թէ գիտի,

Մարդ կայ, որ չգիտի, թէ գիտի,

Մարդ էլ կայ, որ չգիտի, թէ չգիտի

— Լաւ խօսքեր են, — ասացի:

— Ամենասարսափելին վերջինն է. — բոլոր դժբախտութիւններէ պատճառը այն մարդիկն են, որոնք տգէտ են եւ կարծում են թէ խելօք են: Իսկ երբ այդպիսի մարդկանց վատաւում է բարձր պաշտօններ, պէտք է պատկերացնել, թէ ինչ տւերներ կարող են դուրսէլ յաճախ անդիտակցարար:

Առաջին մամուլի շարուածքն ու սրբագրութիւնը վերջացել էր, պիտի տպագրուէր, բայց պարսկերէն բայերից մէկի՝ շուստան շուի դիմաց հայերէնը դեռ չէր դրել: Յիշեցրի: Ասաց, թէ դիշերը կը մտածի: Այդ պատճառով ինձ գործադրեց. նա պարսկերէն գիտէր. դժուար թէ այդ բային ինչ լինելը չիմանար: Յաջորդ օրը, երբ եկաւ, նորից յիշեցրի: Ուրախ ասաց.

— Գտել եմ, գրիր՝ չըռվ մաքրել:

— Զրով մաքրել նշանակում է լուանալ, ինչո՞ւ այդպէս չէք գրում:

— Չեմ կարող, — ասաց ժպտալով:

Մի պահ մտածեց եւ շարունակեց.

— Ուրեմն դեռ գլխի չես ընկել: Անցեալ օրը հարցրիր չ. Անտա. ի մասին, վերականգնել տուի կրճատ ձեւը: Գարձեալ գլխի չընկար: Ասեմ. Լուսնալ բառը, այնպէս ինչպէս գրել է Մերսոպ Մաշտոցը, թող չեն տայ գրել: Արեղանի ուղղագրութեամբ պէտք է գրել Վլամայ, իսկ դրա դէմ կը բողոքի Մաշտոցը. պէտք է ընտրել միջին ճանապարհը, որ ոչ Մաշտոցը բողոքի, ոչ Արեղանը: Զրով մաքրելը երկուսն էլ գտն կը թողնի: Աճառեանն էլ, որպէսզի յով չգրեմ՝ նախընտրեցի կրճատ ձեւը: Հիմա, որ գաղտնիքը ասացի, — շարունակեց ոտքի կանգնելով, — լաւ նայիր հայերէն բացատրութիւններին եւ կը տեսնես, թէ ինչ միջոցների եմ գիտել՝ նոր ուղղութեան դէմ շեղանչելու համար:

Նրա գնալուց յետոյ նայցի ամբողջ գիրքը: Ասջորդ օրը, երբ եկաւ, ասացի.

— Գտել եմ, պրոֆեսոր, բոլորը նկատել եմ:

— Ի՞նչ ես գտել, — հարցրեց այնպիսի շեշտով, որ ցոյց էր տալիս, թէ մոռացել էր մեր նախորդ օրուայ խօսակցութիւնը:

— Օրինակ, «2 տառով կապեր», «3 տառով կապեր» էք գրել, որպէսզի

յնրկու, յնրի՛ք ձեւերից խուսափէ՛ք: Նոյնիսկ կարող էի՛ք գրել երկտառ, եթէ  
այդ անպատեհութիւնը չլինէր:

— Զիչդ ես նկատեի: Է՞լ:

— Զայնավորներ բառն էլ գրել էք «Ձայնակիրներ»:

— Այդ էլ ճիշդ է: Է՞լ:

— Ստորագրյալ, ցերկա, կատարյալ բառերը, որոնք նոր ուղղագրու-  
թեամբ տարբեր են դրուում մեքսիկական ուղղագրութիւնից, շկարողանալով  
գործել, նախընտրել էք կրճատ գրել՝ Ստոր. ցերկ. կտր. եւայլն:

— Այդ էլ ճիշդ է: Է՞լ:

— Մէկ էլ Օմար իսլամը դարձրել էք Ումար իսլամ:

— Պարսկերէն այդպէս էլ կարդացուում է, այնպէս էլ: Ուրիշ բան չե՞ս  
նկատել:

— Ոչ:

— Մանր-մուներ մի քանի բան էլ կայ: Օրինակ, չե՞ս մտածել, թէ ին-  
չո՞ւ, այնուամենայնիւ, բաժիններին վերնագիր գրել եմ, թուականներ բա-  
ժինը առհասարակ անվերնագիր եմ թողնել: Ոչ մի ձեւ չգտայ, որոշեցի ճա-  
նել: Ներքեւում կարդացողը պիտի աննի, որ դորժ ունի թուականների հետ:  
Առայ ու գնաց:

ԳԱՌՆԻԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ

(«Անառեաճի ետտ», էջ 56-61, 74-77)

### ԴԱՐՁԵԱԼ ԱՅՍ ՄԵԾ ՀԱՅՈՒՆ ՀԵՏ



Կիսամօրուս մարգու մը կիսանդրին կանդնած է Պէյրուսի Նշան Փալանճեան ճեմարանի բակին մէջ: Այդ գորշագոյն կիսանդրին օր մը կեանք ունէր մեզի պէս, կը քալէր այդ բակին մէջ ու բակէն դուրս, կը զրուցէր աշակերտներու եւ ուսուցիչներու հետ, յեղուին տակ սրամիտ խօսք մը ունէր բոլորին համար: Ոչ շատ հեռու անցեալին, այդ կիսանդրին խօսքի եւ գրչի վարպետ մըն էր, — թեւածող միտք մը, հարուստ հոգի մը, որ իր ներհուն ծաղկերուն մէջ կը պտտացնէր Հայաստան մը ամբողջ, խօսքի, բանի ու բանաստեղծութեան, գիրի եւ զրչութեան, երգի զինեպարս պայելքը ապրած, ռոտֆօթըր ու զալէմ՝ սիրող մշակոյթի հայրենիք մը ամբողջ:

Կեանք մը, որ բարբախց միայն ու միայն հայ մշակոյթի ծագիման եւ Հայաստան աշխարհի ամբողջական անկախութեան, գրօչի մը ազատ ծածանումին ի խնդիր մղուած աննկուն պայքարներու ճանապարհին վրայ: Երբ հայրենիքը երգերու եւ երգիչներու պէտք ունէր, գրիչ բանեց ան ու զարժաւ երգիչ: Երբ վեց

զարերու ստրկութեան շղթաները փշրելու համար կռիւ էր պէտք ու մարտնչում, կանգնեցաւ մարտիկներու կողքին: Վարակող խօսքի եւ ստեղծարար գրչի այս զեղեցիկ ներդաշնակութիւնը, երգիչի ու գործիչի խառնուրդ այս միութիւն տէրիւ՛րը...

Նիկոլ Աղբալեան:  
Դասադիրքերու մէջ թերեւս չհանգիտեց իր կենսադրութեան: Բանաստեղծ մը չէր ան եւ ոչ ալ վիպագիր մը, բայց իր կեանքն ու գործը թաթաւուն էր բանաստեղծութեամբ եւ վիպականութեամբ: Եղիշէ Չարենց մը չէ, բայց Չարենցի յայտնադործումին ետին կեցող սրատես աչքն է ան:

Նիկոլ Աղբալեան ծնած է Թիֆլիսի Հաւարայր թաղը, 1873 թուականին: Աղքատ եւ պարզ բնուանքի մը զաւակն էր ան: Հայրը փոսպան էր, իսկ մայրը այնքան պարզ, բայց այնքան զբասէր կին մըն էր: Հասակ առնող Նիկոլ, մրմրան զիշերներուն, իր հօր փութին տաքուկ մէկ անկիւնը ծուարած՝ կը տեսնէր, թէ ինչպէս վաղուան Հացը եփող

կրակի լոյսին տակ իր մայրը գիրք կը կարդար ու ապա իրեն կը պատմէր հետաքրքրական պատմութիւններ: Ու այդ փուփուկ մէջ, տաքուկ հացի բոյրին ու համին կը միանար համն ու բոյրը հայ գիրին, պատանի Նիկոլի մտքին ու հոգիին ճաշակո՞ւմով:

Նախնական կրթութիւնը թաղի վարձարանին մէջ ստանալէ ետք, կը յաճախէ Քիֆլիսի Ներսիսեան դպրոցը: Ուսման անյազ տենչով կրակ առած հոգին չէ քաւարաւած տակաւին Քիֆլիսով ու Ներսիսեան դպրոցով:

Հաւարար թաղէն ու Քիֆլիսէն դուրս իր աչքերը յառած են էջմիածնին ու անոր Գէորգեան ճեմարանին: Հայաստանէն դուրս, հայահոծ գանազան շրջաններու մէջ տարածուած էլ ու համբուր Գէորգեան ճեմարանին: Գէորգ Գ. Կաթողիկոսի ջանքերով սկիզբ առած Գէորգեան ճեմարանի նպատակն էր ուսուցնական լուրջ կողմնորակները եւ մտաւորականներ պարտաստել հայ ածուին համար: Ու այդ ճեմարանէն դուրս պիտի գային Արեղեաններու, Աճառեաններու, Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանցներու, Կոմիտասներու մտաւորական փառանք մը ամրող: Աղբալեան երկու տարի միայն մնաց այդ ճեմարանէն ներս ու այդ երկու տարիները դարձան սկզբնական հիմնաքար, որ օր մը ինք եւս արդարացիօրէն մաս կազմէ անժահներու այդ հոյին: Երկու տարի ետք նամակ կը գրէ իր ընկերներուն հետ օրուան կաթողիկոս Խրիմեան Հայրիկին, դժգոհութիւններ կը յայտնէ ու կը հեռանայ:

Ճեմարանի մէջ որոշ հասունութեան հասած, նոր հետաքրքրութիւններով բեռնաւոր, ատեն մը կը շրջի Արեւելեան Հայաստանի զանազան շրջանները: Հայաստանի լեռները, բնութիւնը, կլիման, հայ գաւառացին ու գիւղացին քննարկող իր աչքերը կ'ամբողջացնեն այն՝ ինչ որ ինք լսած էր ժօրմէն ու կարգացած՝ ճեմարանէն ներս:

Թերեւս հարց տրուի այն մասին, որ մարդ երկու տարի ճեմարան մնալով եւ

Հայաստանի քանի մը գիւղ ու գաւառ շրջելով որքա՞ն բան կրնայ սորոյիլ: Ահա այս հարցումին կու գայ պատասխանել Նիկոլ Աղբալեանի մեծագոյն եւ ամէնէն տոկուն առաքինութիւններէն մէկը, իր լրջութիւնն ու պատասխանատուութիւնը Գէորգեան ճեմարանէն ներս իրեն տրուած պարտականութեանց նկատմամբ: Բայց այս բոլորին կողքին ճեմարանական Աղբալեանը կը կարդար: Ահաւասիկ իր առաքինութիւնը. շատ ու միշտ ընթերցողն էր ան: Գիշերօթիկ դպրոցի բակին մէջ թէ միջնացքներուն, ծառի մը շուքին տակ թէ մտանադարանի սեղաններուն վրայ՝ անյազ եւ անկուշտ կերպով կը կարդար: Կը կարդար զանազան նիւթերու մասին, բայց զխաւերաբար հետաքրքրուած էր զրապատմական, ընկերային դիտութիւններ բովանդակող գիրքերով: Հետեւողական ընթերցումով կարելի՞ է հասնիլ զբազան կամ մշակութային բարձունքի մը, կուրելի՞ է օր մը հայ գրականութեան մէջ անուն դառնալ: Ահա մեր աչքերուն առջեւ է անժահ անուն եւ անկորնչելի վատակը Գէորգեան ճեմարանէն թերաւ արտ Նիկոլ Աղբալեանին: Միթէ նոյնը չէ՞ր պարագան երգիծաբանութեան տիտան Յակոբ Պարոնեանին, նորավիպագիր Երուսեանին, մեն Օշականին...:

Տակաւին 23 տարեկան, 1896 թուականին, Աղբալեան իր առաջին գրական փորձերը կ'ընէ Քիֆլիսի «Մուրն» ամսագրին մէջ: Արդարեւ, այդ շրջանին արեւելահայ գրականութեան եւ հեղինակներու կեանքն ու գործը կը ըստ մտէն ներքէն մէկն էր «Մուրն»ը: Գրական իր առաջին փորձերով Աղբալեան նոր հանդրուած մը կը նուաճէ եւ կը մտնէ աւելի լայն հունի մը մէջ: Այլեւս հոսող պարզ շուր չէ ան, այլ իր հասանքին մէջ յայտնութիւններ կատարող, նոր, իրաւարժէքներ փերքերող, հայ գրականութեան զանազան բնագաւառները լուսարձակի տակ համադրող, գէպի հայ մշակոյթի ծովը փարարող յորգաւտան գետն է Նիկոլ Աղբալեան:

1897ին «Մուրն»ի մէջ ըոյս կը տեսնէ իր առաջին քննադատական յօդուածը՝ Լ. Եանթի «Երազ Որերու» մասին: Այս առաջին յօդուածով իսկ ան կը ստանայ վաւերական քննադատի մկրտութիւն: Հաղիւ տարի մը անցած, դարձեալ «Մուրն»ի մէջ, Նիկոլ Աղբալեան կը քննադատէ երիտասարդ բանաստեղծ Աւետիք Իսահակեանը: Կ'արժէ հոս փակագիծ բանալ ու յիշեցնել, որ 25 տարեկան է Նիկոլ Աղբալեան եւ իր քննադատած բանաստեղծը՝ Աւետիք Իսահակեան միայն 23 տարեկան: Այդ օրերուն անպայման որ Հայ դրական կեանքը իր Երևանով, Թիֆլիսով ու Պոլսով ականատես վկան կը հանդիսանար Հայոց բանաստեղծական եւ քննադատական դրականութեան զարնանային այս թարմացումին: Հաւարար թաղի փոստայնին տղան՝ Նիկոլ Աղբալեան արդէն յայտնի մտաւորական է ամբողջ Թիֆլիսի հայութեան համար: Սակայն ան չի շտապեր եւ իր երիտասարդ հոգին կը տուրի զբաղանքներէն եւ գիտութեան հանդէպ ունեցած իր անյազ ծարաւով:

Մասմանափակ ու նեղ է Կոմկոսը այդեւս մտաւորականին համար: Ու ան կ'երթայ Ռուսաստան, Փեթերբուրգի մէջ հետեւելու համար փրօֆ. Մատի լեզուադիտական դասընթացներուն: Հոս կը սկսի օտար ծաղիկներէն մեղր հաւաքելու տքնաջան աշխատանքը. — Փեթերբուրգ, Մոսկուա, — ռուսական դրականութիւն, — Փարիզ ու Մոսկով, — միջազգային դրականութիւն, Եանթիցում մեծ տխրաններուն: Գրական եւ իմաստասիրական նոր հորիզոններու նրբամտութիւն, օտար քաղաքակրթութիւններու հետ շփումը չեն հեռացներ զինք իր ժողովուրդէն, այդ ժողովուրդի լուսաւորութեան մէջ նսկատաղրական դեր խաղացած Հայ եկեղեցիէն, Հայ դրականութիւնէն: Մոսկուայի մէջ Հանրային մտանադարան կը յաճախէ իր սպաս ժամերուն եւ կը ձեռնարկէ ռուսահայ մամուլի ցանկի կազմութեան: Կիրակի օրերը, Մոսկուայի Հայոց եկեղեցին կ'երթայ եւ զպարագետութիւն կ'ընէ: Ձրնոտ

Մոսկուայի մէջ Հայ մտաւորականը իր հոգին կը ջերմացնէ շաղիկ հազներով, «Առաւօտ լուսոյ» երգերով, սաղմոս ու աւետարան կարգաւով:

1905ին դարձեալ վերադարձած է Կոմկոս, դէպի Փարիզ, Զուլիգերիա, Պալքաններ ու Եջիպոսս կատարած իր «Մարտիկան» շրջապտոյտէն: Այս անգամ ժամ կը կազմէ Հայ դրականութեան եւ մշակութիւնի «Հնդեգալուստ» օպաստը Յ. Թումանեանի, Ղ. Աղայեանի, Լ. Եանթի, Աւ. Իսահակեանի, Գ. Գեորգիանի եւ Վեդիկեանի խմբակին:

1908ին նոր թափով կը ձեռնարկէ քննադատութիւն եւ նոր յայտնադրութեան իր առաջնութեան: Այս անգամ բանաստեղծ Վահան Տէրեանն ու անոր ջրնարն է իր կեդրոնացումը ասորական: Վահան Տէրեանի մէջ իրաւացիօրէն կը զնահատէ վաղուան մեծ բանաստեղծը:

1908ին զինք կը դաննէք Թեհրանի մէջ, Եանթիցումի ազգային, Հանրային եւ կրթական դարձերով: Գործունէութիւն, որ մեծ թափով եւ բեղուն արդիւնքով կը շարունակէ մինչեւ 1912 թուականը: 1912ին դարձեալ Թիֆլիս է, ո՛չ միայն անգամ, այլեւ աշխարհ է «Հայ Գրողներու Ընկերութեան» մէջ: Այս անգամ կը յայտնաբերէ երիտասարդ արձակագիր Ստեփան Զօրեանը:

1912ին տեղի ունեցող Հայ գիրքերու դիւտին 1500ամեակի եւ Հայ տպագրութեան 400ամեակի գոյգ ամենակատարութիւնները պահ մը իր ուշադրութիւնը ներկայէն կը փոխադրեն անցեալին վերայ: Մինչ Պոլսոյ մէջ Միամանթօ իր շեփոթով կը ներքողէր, շիւյ դարերու զինաց կեցող Մեծարազ Մաշտոցը, Կոմկոսի մէջ ծայրէն միւսը, Աղբալեան եւ Թումանեան իրենց դաստիարակութեան թափով եւ յօդուածներով կը ծաղիկեցնէին յրեւիճական հանդիսութիւնները: Հայ գիրքերու դիւտի 1500ամեակը տարի մը կ'ըլլայ վերաբերելու Հայ դրականութեան եւ մշակութիւնի հեռու անցեալի հարստութիւնը: Իսկ Հայ տպագրութեան 400ամեակը կը զսպանակէ այդ մշակութիւնը առաւել ծաղիկեցնելու եւ տարածելու:

անժամանցելի կոչումը: Հոս է, որ հեռաւոր անցեալին եւ այնքան մօտիկ ներկային միջեւ կատարած իր ոտոււմով՝ Նիկոլ Աղբալեան գէժ յանդիման կը դռնուի հայ աշուղներու արքայից արքային՝ Սայեաթ-Նոփային: Դառնալու համար յարմար մեկնարանք այս մեծ աշուղին, Աղբալեան իր ձեռքերուն մէջ ունի պէտք եղած գործիքները: Մանօթ է թիֆլիսի բարբառին, աշուղին հոգեբանութեան եւ աշուղական գրականութեան նրբագոյն ծալքերուն: Հրապարակային դասախօսութիւններով եւ յողուածնիւրով՝ ան հմտօրէն կը մեկնարանէ Սայեաթ-Նոփան, արժանի պատուանդան մը հիւսելով անոր հայ աշուղական գրականութեան ներս:



Կը պայթի Համախարհային Առաջին պատերազմը: 1914: Հասած է ժամանակը, երբ Աղբալեան վար կը գնէ իր գրչիւր: Ձի բաւակոնանոր խօսքով եւ գրչով միայն, այլ գործօն մասնակցութիւն կը բերէ Հայոց Ազգային Բիւրոյին մէջ: Անգամ է Հայ կամուարակաւ գումարներու կազմակերպիչ մարմին: Բիւրոյի եւ կազմակերպիչ մարմնի գրասենեակներէն դուրս կու գայ եւ կտուղներուն հետ կ'երթայ ճակատ: Հայ գորքին հետ վան կը մտնէ: Երբ մարդիկ խուճապի մասնուած կը լքեն իրենց օճախները, ան կը ձեռնարկէ վանքերու եւ տուներու փոխակներուն տակէն արժէքաւոր գիրքեր հաւաքելու փրկարար աշխատանքին:

Օրհասական հինգ տարիներու մտաբառումէն ետք, հայութիւնը տիրացած է իր անկախութեան: Ազատ ու անկախ է Հայաստանը: Աղբալեան կ'ընտրուի նորափթիթ անկախութեան առաջին խորհրդարանին անդամ: 1919ին՝ Լուստուրութեան նախարար: Փեթերսպուրկի, Մոսկուայի ու Սորպոնի համալսարանները տեսած իր երիտասարդ հոգին քանի՜ անգամ չէր փոյժալած Հայաստանի հողին վրայ հայկական համալսարան մը իրագործելու երազը: Ահա այդ երազը

կ'իրականանար: Անօթութիւն, սով, կոտորած, աւեր տեսած հայրենիքի հողին վրայ առաջին համալսարանի հիմնադրութեան եւ ծրագրումին մէջ մեծագոյն հողը եւ բաժինը պիտի ունենար Աղբալեան: Մանրաբեռնուած քաղաքական կեանքով, չի լքեր սակայն հայ մրշակոյթն ու գրականութիւնը: Նախարարի աթոռին վրայ նստած՝ կը յայտնարքէ կարսի մէկ անկիւնը համեստ ուսուցչի պաշտօն կատարող երիտասարդ բանաստեղծ Եղիշէ Չարենց: Աղբալեան կը հրաւիրէ բանաստեղծը Երեւան եւ, իր նոխարական գրասենեակին կից՝ քարտուղարի ձեւական պաշտօն մը կու տայ անոր: Կը ստեղծէ յարմար պայմաններ, որպէսզի երիտասարդ բանաստեղծը միայն գրէ, ստեղծագործէ: Հետագային Աղբալեան դոճոնակութեամբ պիտի հաստատէր, որ արդար էին Եղիշէ Չարենց բանաստեղծի ազդանքին մասին կատարած իր նախատեսութիւնները:

Հայաստանի անկախութիւնը, դժբախտաբար, երկար չտեւեց եւ երէկուան նախարարը բանտ նետուեցաւ, ըմպելու համար բուլլետիցով դառն բաժակը: Մեծ բախտ էր, որ մանդաղը զինք ալ չհնձած, ծար տուաւ Փետրուարեան Ապստամբութիւնը, յատկաւ հետ ինք ալ աղատեցաւ Սիպերէն եւ ստոյգ մահէն:

1921 Ապրիլին, Աղբալեան ձեռք կ'առնէ պանդուխտի ցուպը եւ ատեն մը Պարսկաստան մնալէ ետք, կ'անցի Եգիպտոս, ուր կը ստանձնէ Աղեքսանդրիոյ ազգային Պօղոսեան վարժարանի տեսչութիւնը, մինչեւ 1928: Հայրենիքէն պարտադիր կերպով արժատախիլ եղած, բայց միշտ ազգ հայրենիքի վերստին անկախացումը եւ ազատութիւնը երազող պիտոպիր սփիւռքահայն է այլեւս ան: Ազատ Հայաստանի երբեմնի նախարար՝ Նիկոլ Աղբալեան եւ Աղեքսանդրիոյ մէջ տեսչութիւն ընող սփիւռքահայ... Արդարեւ, այնքան զիրար հակասող այս բացատրութիւններու ետին կը կանգնի հայ ժողովուրդի եւ հայրենիքի պատմութեան դարաւոր տրամը: Այս դառնութիւնը,



ասական, բարիքի վերածելու եւ հոգեւոր նոր հայրենիքներ կերտելու ժարգարէութիւնը չի պակտիր տեսապաշտ Աղբաւեանին: 1928ին, Լեւոն Շանթի եւ այլ զաղափարակիցներու հետ՝ կը հիմնէ Հայ կրթական եւ հրատարակչական «Համագային Ընկերութիւնը»:

Մշակոյթ, կրթութիւն, հրատարակչութիւն ու բարձրագոյն դպրոցներու հիմնադրութիւն կը դառնան մտաւեւեռում Աղբաւեանի համար: 1930ին, դարձեալ Լ. Շանթի հետ ձեռք ձեռքի տուած Պէլրութի մէջ կը հիմնեն Հայ ճեմարանը: Հայ կրթութեան եւ դպրոցին նկատմամբ ունեցած իր հուսալք ու սէրը ցոյց կու տայ բանիւ եւ գործով: Մինչեւ մահ անդամ կը ծնայ ճեմարանի ճնօրէն Խորհուրդին եւ կը դասաւանդէ գրաբար, Հայ գրականութեան պատմութիւն: Իր վէրքերը սպիացնող Սփիւռքը պէտք ունի ուսուցիչներու, մտաւորականներու, բանաստեղծներու, խմբագիրներու, դասախօսներու: Հայ ճեմարանը կը զարկ տայ այն դպրոցը, ուր Աղբաւեանի վարակող շունչին տակ, մտաւորականներու ամբողջ հոյլ մը պատաստուեցաւ:

Հայ գրականութեան եւ մշակոյթի ջահը նոր սերունդին յանձնելէ ետք միայն քայքայուած առողջութեան թերութով կը մեկուսանայ Լիբանանի Շթորա դիւղը ու հոն ալ կը փակէ իր աչքերը՝ 14 Օգոստոս 1947ին: Շուրջ 20.000 սրահիրներու բազմութիւն մը կը հետեւի 74 տարիներով բեռնաւոր Աղբաւեանի դադաղին, որ իրեն հետ կը առնէր տոշորող կարօտը եւ վաղուան երազը Մեծ Հայաստանին:

Նիկոլ Աղբաւեան իր ետին կը ձգէր քննադատի, մտտենադիրի, բանասէրի հարուստ վաստակ մը. վաստակ, որ սակայն ջրուած կը մնար Պոլսոյ, Քիֆիսի եւ արտասահմանի զանազան կեդրոններու հայ մամուլին մէջ: Ու հազար անգամ արիւնք, որ Աղբաւեան չկրցաւ երբեք իր երազը իրականացնել, զրելով «Հայոց գրականութեան մի լաւ պատմաբան»: Այսուհանդերձ, գրուածն ալ բաւական էր՝ զինք դասելու Հայ մշակոյթի սպասուս մեծ անմահներու շարքին:



Երեսուն տարիներ անգամ են արդէն իր մահուան թուականէն առիւն: 1974ին, Երեւանի մէջ լոյս տեսած «Հայկական Մովսեսակամ Հանրագիտարանի» առաջին հատորին մէջ, Աղբաւեանի անունին դիմաց կը կարդանք հետեւեալ բնութագրումները. — «Հայ գրականագէտ... Մանկավարժ, դաշնակցական կուսակցութեան ղեկավար գործիչ... Հայաստանի խորհրդարանի անդամ, լուսատուութեան եւ տրանստի միջնորդ... արգասաւոր գրականագէտ եւ մանկավարժ...»:

Այս բոլորին հարուստ դուժարն է Նիկոլ Աղբաւեան, թէեւ ինք եթէ այսօր գլուխը վեր առնէր ցուրտ հողէն եւ կարգար «Հանրագիտարանի» առաջին հատորը, անգամ մը եւս աղբաւեանական սրամտութեամբ եւ սէրով չի հեղնանքով պիտի բռնէր. — «Իմ գիտցածովս ես էլ, շատերի պէս, ամէն բան հմ եւ ոչինչ եմ»:

Սակայն Նիկոլ Աղբաւեան «Հասարակ պէտք չէ. «Ես ոչինչ եմ» կ'ըսէ, բայց ինք ոչինչ չի կրնար ըլլալ: Իր կեանքն ու գործը այդ «ոչինչ» եմքը ոչնչացնող զամէն բանն է՝ Աղբաւեան շատ ու ամէն բանն է երբեքի ու մարտիկի, գեղեցկութեան, մարդկայնական արժէքներու եւ արժանիքներու իբրուութեան:

ՊԱՐՈՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ

### ԵՐԿՐԱՅԻՆ ՄՈՒՍԱՆԵՐ...

Յգիչն Զարնային նուիրում մեր բացառիկին մէջ, զոյգ էջի վրայ՝ ներկայացուցած էինք եղբարստա բանաստեղծին սիրային զարգացած ուղորմէն զանի մը զէմբեր, տնոր ներս շնչման բազմաթիւ պահեր ընծայած էակները, որոնք անտարակոյս ասելի սրելցին տունու կտորներուն մասին ընթերցողին հետաքրքրութիւնը:

Պիտի ըսնէք անմիջապէս, որ այս մարզին մէջ չափազանց խեղճ է մեր գրականութեան պատմութիւնը, հազիւ զանի մը հասուկտար արժանագրութիւններ կարելի է գտնել հաս ու հոն, իսկ շուկաներով ուրուագծուած զէմբերուն մեծամասնութիւնը կը մնայ եանկըւած անտարբերութեան եւ աւելորդ անօթխածութիւններու թանձր զօրին տակ:

Հայ ընթերցողը հազիւ կը ճանչնայ Միքայիլ Պէշկովիչի մասին հետաքրքրուած մէջ հանգերձուած Հրամուշը (Մըրուհի Տիւսայ), Պետրոս Դուրեանի ներքին քրտումները ստատկացուած ՎՆՆՆ զեւ անյայտ կը մնայ եւ ասկապին ոչ ոք փնտաւ է հետքը վարստամի ճՏրտումը ըրրորդան պնչնիքացի հերոսուհին, որ անմասագանութեան ճղկու չափ զօրեղ ապուարութիւններ գործած էր հեթոնս զուրթին վրայ:

Հայ ընթերցողին ծանօթ չէ նոյնպէս Օշականի նազիկին, Ալուարին ու Բուրուլին նախադրարներն եւ ո՛չ մէկուն ֆիզիքական պատկերը, Եսահուրի Նէնէթը մշուշի մէջ կը մնայ դարձեալ, իսկ ասելի թանձր մութի մը մէջ՝ Եուլանիանի Մարիան, զորում արունը կը պտղտի բոյր էրնրու մէջ:

Իբրեւ մասախլապատ ծանօթութիւն՝ կարգանք նսեւ Մասթէնա Զարիֆեանի մասին գրուած հասեւու պարբերութիւնը:

«Նրա ամէմ մի տողում, քա՛նում կամ բացայայտ, մերկայ է սիրած ազիկը, որը դառնում է մի կենդանի թծար՝ աշխարհն ու այրումը պահելու համար»:

Ո՛վ է սակայն այդ աղիկը եւ դժուար է արդեօք գտնել տնոր լուսանկարչական լեռքը:

Հուանաբար զեւ անկարելի չէ տեղ մը հանդիպիլ վաւան Տէրեանի զխտոնական երգչին մեւնը տուած Ալինա Մարգարէին, որուն զիմաց բանաստեղծը ապրեցու զանազան քառյ մի ամբողջ վէպը: Աւելի հուանական է գտնել զիմաստուեր Ակսել Բակունցի Աստղիկին, որուն հետ ապուսխաւոր արժանագիրին վիճակուեցաւ սիրային բարդ ողբերգութիւն մը:

Թուամերու սակմանին մէջ կարելի է նրկարել չարքը, բայց այսքանը կը թուէ՝ յիշեցնելու համար, որ մեծանուն զէմբերուն կապուած անմասագրութիւնները առանձին արժէք մը կը ներկայացնեն գրականութեան պատմութեան մէջ եւ մշակուած ժողովուրդներին եւ շնորհաւ համար պարասուր ենք մասնաւոր հետազոտութեան ենթարկել նսեւ այս ընազուարը:

Հայրենի մասաբականներին մէջը, Մուշեղ Նարեան, նման ատիթով մը կը գրէ.

«Մեծ արտետագլտների կեանքում լինում են անմասագրութիւններ, որոնք դառնում են մրանց ոգւտարութեան պուսմէք եւ գրամով իսկ մնում պատմութեան մէջ:

«Նարկու, ինչքան մեզ հետաքրքրում է մեծերի կեանքը, մոյժման էլ պիտի հետաքրքրեն այն դէմքերը, որոնք երեսն են այդ կեանքի անմասագրութեան արագները՝ նա քոնք լոյս են սփում մրանց արուտաի շատ կազմելի վրայ: Ռու բանասիրութիւնը մի ժամի ուսումնասիրութիւն է եւրթելի Սերգէյ Եսենինի եւ հայուելի Եսահանի (Եսահանգրտ) հագնկամ մտքմութեանը, որի արդիւնքն է բանաստեղծի զՊարսկական նուագները շարքը: Մեր բանասիրութիւնը այժման է անարբիր մտան ինչիքների նկատմամբ, որ մոյմիկ այդ շարքի բարգմանութեան մէջ Եսահանք ծածօք անուը մնացել է աւսերէմ ձեւով՝ Եսահանք, միմլւն Եսահանքն ապրում էր երեւանում, մեր քարգմանիներն ու գրականագլտների կազմին...»

«Մեր բանասիրութիւնը այնքան է անտարբեր... որ նորիսիկ ուսու անուանի բանաստեղծին բանաստեղծական շարքեր ներշնչած Եսահանքն յիշատակ չունի մեր աչքերուն մէջ...»

